

# **Հայ – Ռուսական համալսարան**

## **Դավիդյան Դավիթ Բարիսի**

**Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի  
սպանություն քրեափրավական և քրեաբանական  
հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության ոլորտում**

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ**

**ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալ ոգիա,  
քրեակատարողական իրավունք» մասնագիտության ամբիոնական  
գիտությունների թեկնածուի գիտական ատիճանի համար**

**Գիտական ղեկավար՝  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Ս.Շ. Ծաղիկյան**

**Երևան – 2016**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ.....

.....4

## ԳԼՈՒԽ1

### ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍՈՑԻԱԼ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԸ

- 1.1 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հասկացությունը.....  
.....15
- 1.2 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սոցիալ-քաղաքական նախադրյալները փոխակերպվող հասարակությունում.....29

## ԳԼՈՒԽ2

### ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- 2.1 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության օբյեկտիվ հարկանիշները.....38
- 2.2 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտիվ հարկանիշները.....47

**ԳԼՈՒԽ 3**

**ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻ  
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՏԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՈՒ  
ՀԱՆՏԱԿԱԶՄԵՐԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐԱԿՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը՝ անձի կամ նրա մերձավորի սպանությունն ընդհանուր կամ սահմանափակ պայմաններում կատարելու հետևանքով կամ հասարակական պարտքի կատարման հետ.....58
- 3.2 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը սահմանափակ պայմաններում կատարելու հետևանքով.....76

**ԳԼՈՒԽ 4**

**ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻ  
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

- 4.1 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության պատճառների հիմնախնդիրները.....87
- 4.2 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների կանխարգելման հիմնահարցերը.....100

ԱՄՓՈՓՈՒՄ.....

114

**ՕԳՏԱԳՈՐԾԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

**ՑԱՆԿ.....119**

## ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

**Յետադուտության թեմայի արդիականության ու նը.** Հայաստանի քրեական քաղաքականության առաջնահերթության նկատմամբ է անձի, հասարակության և պետության անվտանգության պաշտպանության ու նը հանցավոր ոտնձգության նկատմամբ:

Մեզանում իրականացված «սահմանադրական փոփոխության ու նկատմամբ արդյունքում,- նշել է ՀՀ Նախագահը,- Հայաստանի քաղաքական համակարգը կդառնա առավել բաց, ճկուն և ներքուստ բարդ: Այն կհամապատասխանի մեր հասարակության դինամիկ և բազմակողմանի զարգացող սոցիալական կառուցվածքին»<sup>1</sup>:

Այս առումով, ինչպես նշված է «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի կարգադրության մեջ, անհրաժեշտ է ընդունել «Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքը» և «Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նոր հայեցակարգը», քանի որ գործող քրեական օրենսգրքում առկա են բազմաթիվ օրենսդրական բացեր և թերի կարգավորումներ: Նշված դիտողությունը, մեր կարծիքով, վերաբերում է նաև «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությանը» (ՀՀ. քր. օր.-ի հոդված 305) քրեական նորմով նախատեսված հանցակազմին, հետևաբար նաև դրա քրեաիրավական որակման հիմնախնդիրներին:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության ու նը ուղղված է սահմանադրական կարգի և պետության անվտանգության դեմ, հետևաբար նաև՝ պետական իշխանության, հասարակության բնականոն գործունեության, սոցիալ-տնտեսական համակարգի, ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ու ազատության նկատմամբ:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության ու նը կարող է հանդիսանալ նաև քաղաքական մրցակիցներից ձերբազատման, ներքին և արտաքին քաղաքականության փոփոխման, իշխանության զավթման և քաղաքական սադրանքի միջոց:

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ու ն» օրաթերթ, 13 փետրվար 2016, թիվ 25(6307):

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության կատարման ժամանակ հանցավորը ոտնձգում է ոչ միայն սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության, այլև մարդու կյանքի դեմ, որով էլ պայմանավորված է այս հանցագործության առավել մեծ հասարակական վտանգավորության աստիճանը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության վտանգավորության աստիճանը կասկած չի հարուցում, որի կատարման հետևանքով կարող է լուրջ վնաս հասցվել ազգային անվտանգության արժեքներին, ինչով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքը այն դասում է առանձնապես ծանր հանցագործությունների թվին, և նախատեսում է առավել խիստ պատժատեսակներ, այն է՝ ազատազրկումը տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկում:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածը հանդիսանալով պետական, քաղաքական կամ հասարակական գործչի քրեափրավական պաշտպանության միակ միջոց, հաճախի չի կիրառվում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2003 թվականից մինչև 2015 թվականը եղել է գրանցված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության ընդամենը 7 դեպք:

Գրանցված դեպքերի քանակը ըստ տարիների և ամիսների հետևյալն է՝ 2003, 2004, 2005, 2009, 2010 թվականներին մեկական պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն, 2008թ.՝ 2 դեպք: 2006, 2007, 2011, 2012, 2013, 2014, 2015 թվականներին դեպքեր չեն արձանագրվել:

Անհրաժեշտ է նշել, որ պաշտոնական վիճակագրական տվյալները չեն արտացոլում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների ամբողջական պատկերը: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ նույնիսկ 305-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության դեպքում կատարված հանցավոր արարքը հաճախի գնահատվում է որպես կյանքի դեմ

ուղղված հանցագործությունն և որակվում է քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, որի հիմնական պատճառը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի մեկնաբանության մեջ հստակ մեկնաբանված չէ, թե ինչ պետք է հասկանալ ասելով՝ («պետական գործիչ», «քաղաքական գործիչ», «հասարակական գործիչ»): Բացի դրանից դժվարություններ են առաջանում նաև «պետական գործիչ», և «իշխանության ներկայացուցիչ» հասկացությունների սահմանազատման ժամանակ, խոչընդոտ հանդիսանալով օրենքի միատեսակ ըմբռնման և կիրառման հարցում, որն էլ իր հերթին հանգեցնում է արարքի սխալ որակման:

Հարկ է նշել նաև, որ հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի վերաբերյալ համալիր ուսումնասիրություններ չեն կատարվել նաև հաշվի առնելով նաև գործող քրեական օրենսդրական բացերը և թերի իրավակարգավորումները՝ կապված մասնավորապես քննարկվող հիմնախնդրի հետ, գտնում ենք, որ հրատապ արդիական է ՀՀ քրեական օրենսգրքի 305 հոդվածի հանցակազմի գիտական հետազոտությունը:

**Թեմայի գիտական մշակվածության վիճակը.** Հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ անձի քրեաիրավական անվտանգության պաշտպանության վերաբերյալ համակողմանի հետազոտություններ են իրականացրել իրավաբանական գիտությունների դոկտորներ՝ Ս.Վ. Առաքելյանը, Ա.Յ. Գաբուրյանը, Ս.Շ. Ծաղիկյանը, Ա.Գ. Հովսեփյանը, Ա.Ա. Թամազյանը, Լ.Զ. Թադևոսյանը, Ա.Տ. Թովմասյանը, Ա.Մ. Խաչատրյանը, իրավագիտության թեկնածու Զ.Ռ. Թումանյանը, Մ.Վ. Գրիգորյանը և այլոք:

Հետազոտության թեման առավել համակողմանի ուսումնասիրված է ռուս գիտնականների՝ Գ.Զ. Անաշկինի, Գ.Ա. Ավանեսովի, Ա.Ի. Ալեքսևի, Յու.Մ. Անտոնյանի, Դ.Ի. Բոգատիկովի, Ի.Ա. Բուչուկովի, Ա.Ա. Գերցենգենի, Ս.Վ. Դյակովի, Վ.Պ. Եմելյանովի, Լ.Դ. Երմակովի, Ն.Ի. Չագորոդնիկովի, Ա.Ն. Իգնատովի, Ա.Ա. Իգնատևի, Մ.Պ. Կարպուշինի, Վ.Ա. Կլյագինի, Ա.Պ. Կուզնեցովի, Բ.Ա. Կուրինովի, Վ.Ի.

Կուրլյանսկիի, Վ.Ի. Միխայիլովի, Վ.Դ. Մենշագինի, Դ.Ա. Սալչենկոի, Ե.Ա. Սմիրնովայի, Մ.Վ. Տոլբեցկիի, Ա.Յու. Շուբիլովի, Օ.Ս. Կապինուսի, Ի.Գ. Նեդելինի, Յու.Ե. Պոլդոնչկինի, Ա.Վ. Սեդիխի, Ա.Ու. Դիկանի, Ա.Ի. Դոլգովայի, Յու.Ս. Գորբուսովի, Վ.Վ. Լոնենսի, Մ.Ի. Ալինկոի, Պ.Ա. Կաբանովի, Ի.Մ. Կլեմենովի, Ա.Ֆ. Կուլակովի, Վ.Վ. Ուստինովի և այլ հեղինակների աշխատություններում: Բարձր գնահատելով վերոնշյալ հեղինակների նշանակալից ներդրումը՝ քննարկվող հանցակազմի քրեաիրավական հետազոտության հարցում նաև պետք է նշել, որ ոչ բոլոր խնդիրներն են ստացել վերջնական լուծում, և բազմաթիվ հարցեր մնացել են տեսական հետազոտության շրջանակներից դուրս:

Այս առումով, սույն ատենախոսական հետազոտությունը կոչված է մասամբ լրացնելու այդ բացը, հատկապես, որ Հայաստանում քննարկվող հանցակազմի վերաբերյալ համակողմանի գիտական հետազոտություն չի իրականացվել:

**Հետազոտության նպատակը և խնդիրները.** Սույն ատենախոսական հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ. քր. օր.-ի 305 հոդվածով նախատեսված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի համակողմանի քրեաիրավական վերլուծության արդյունքների հիման վրամշակել գիտականորեն հիմնավոր առաջարկություններ, կատարելագործել վերոնշյալ քրեաիրավական նորմը և բարելավել իրավափրառական պրակտիկան:

Նշված նպատակին հետամուտ՝ աշխատանքում փորձ է արվել լուծել հետևյալ **խնդիրները.**

- բացահայտել պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հասկացությունը և քրեաիրավական բնույթը,
- վերլուծել պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները,
- հետազոտել քննարկվող հանցակազմի հանրորեն վտանգավորությունը պայմանավորող գործոնները,
- բացահայտել պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի որակման առանձնահատկությունները,
- մշակել գործնական բնույթի առաջարկություններ՝ նշված

քրեափրավակական նորմի կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայի բարելավման համար,

– գիտականորեն հիմնավորված առաջարկություններ մշակել նշված հանցագործության պատճառների բացահայտման և կանխարգելման ուղղությամբ:

**Յեռագոտության օբյեկտը և առարկան.** Սույն ատենախոսական աշխատանքի **\_օբյեկտն է** պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի քրեափրավակական և քրեաբանական հատկանիշների համալիր ուսումնասիրությունը և իրավահարաբերությունները:

Յեռագոտության **առարկան** պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի քրեափրավակական հատկանիշների բացահայտումն է, ինչպես նաև այդ հանցագործության համար պատասխանատվություն նախատեսող քրեափրավակական նորմի կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայի բարելավման և նշված հանցագործությունների կանխարգելման հետ կապված հիմնահարցերի խորքային ուսումնասիրությունն է:

**Յեռագոտության մեթոդաբանական հիմունքները.** Սույն ատենախոսական աշխատանքի ընթացքում օգտագործվել են համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, համակարգային-կառուցվածքային, ձևական-տրամաբանական, իրավաբանական վերլուծության, համակարգային վերլուծության, քրեաբանական և գիտական մեկնաբանության մեթոդները:

**Յեռագոտության տեսական հիմքն** են կազմում հայրենական և արտասահմանյան գիտնականների՝ մասնավորապես՝ Ս.Ս. Ավետիսյանի Ս.Վ. Առաքելյանի, Ա.Յ. Գաբուզյանի, Մ.Վ. Գրիգորյանի, Ա.Ա. Թամազյանի, Լ.Զ. Թադևոսյանի, Ա.Տ. Թովմասյանի, Ս.Շ. Ծաղիկյանի, Ա.Գ. Յոզսեփյանի, Յու.Մ. Անտոնյանի, Գ.Զ. Անաչկինի, Գ.Ա. Ավանեսովի, Ա.Ի. Ալեքսևի, Ս.Վ. Բորոդինի, Յու.Մ. Բրայնինի, Լ.Դ. Գաուֆմանի, Պ.Ս. Դազելի, Ա. Լ. Դվորկինի, Պ.Գ. Իվանովի, Վ.Ն. Կուդրյավցևի, Ն.Փ. Կուզնեցովայի, Ա.Է. Ժալինսկու, Ի.Ի. Կարպեցի, Ս.Գ. Կելինայի, Վ.Ս. Կոզանի, Ա.Ի. Կորոբերի, Գ.Վ. Կրիլովի, Բ.Ա. Կարինովի, Ա.Վ. Նաումովի, Ա.Ա. Պիոնտկովսկու, Պ.Ս. Տոբոլկինի, Ա.Ն. Տրայնինի, Մ.Դ.



Շարգորոդսկու, Վ.Դ. Ֆիլիմոնովի և այլոց աշխատությունները:

Հետազոտության մեջ որպես տեսական հիմք են ծառայել նաև վերջին տարիներին հայրենական և ռուս գիտնականների ատենախոսական աշխատանքները, որոնք այս կամ այն կերպ առնչվել են սույն հետազոտության թեմայի հետ<sup>2</sup>:

**Հետազոտության նորմատիվ և փորձառական հիմքերը:**

Սույն ատենախոսական աշխատանքի համար նորմատիվ հիմք են հանդիսացել՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը, այլ իրավական ակտեր և պաշտոնական փաստաթղթեր, մասնավորապես «Դատաիրավական բարեփոխումների ծրագիրը», «ՀՀ Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգը» և այլն:

Աշխատանքի համար որպես փորձառական հիմք են հանդիսացել դատական պրակտիկան և պաշտոնական վիճակագրական տվյալները:

**Հետազոտության գիտական նորույթը.** Աշխատանքի գիտական նորույթը, ամենից առաջ, կայանում է նրանում, այն որ հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ առաջիններից մեկն է, ուր իրականացվել է համալիր մենագրական հետազոտություն՝ կապված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի քրեաիրավական հատկանիշների բացահայտման և այդ հանցագործության հանրային վտանգավորության սոցիալ-իրավական կողմերի պարզաբանման հետ:

Աշխատանքում ձևակերպվել են գիտականորեն հիմնավորված առաջարկություններ, որոնք ուղղված են պետական, քաղաքական կամ հասարակական գործչի անվտանգության ապահովման նպատակով՝ գործող քրեաիրավական նորմի դիսպրոպիայի և սանկցիայի բովանդակության որոշակիացմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում այդ հանցակազմի որակման հետ կապված հիմնավորումների բարելավմանը:

Բացի դրանից, որպես գիտական նորույթ, աշխատանքում

---

<sup>2</sup> Տե՛ս **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները (տեսական և կիրառական վերլուծություն): Սեղմագիր, իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2012: Նաև՝ **Թումանյան Զ.Ռ.** Ահաբեկչության համար պատասխանատվության քրեաիրավական կարգավորումը. վիճակը, հիմնախնդիրները, միտումները: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2007:

առաջ ադրված է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության շարժառիթների հեղինակային դասակարգումը, քննարկվող հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի ինքնատիպ լուսաբանման մոտեցումները, ինչպես նաև տվյալ հանցագործության կանխարգելման հետ կապված քրեաբանական ասպեկտների համակողմանի վերլուծությունը:

**Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտասխանատվության ներկայացվող հետևյալ դրույթներում.**

1. Հայաստանի Հանրապետության քր. օր.-ի 305 հոդվածը պատասխանատվություն է սահմանում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության համար, որը կատարվել է նրան շված գործունեությունը դադարեցնելու նպատակով: Այս հանցագործությունը երկօբյեկտ հանցագործություն է. հանցագործության օբյեկտ են հանդիսանում ՀՀ սահմանադրական և հասարակական կարգը, քաղաքական և իրավական համակարգը, իշխանության իրավական և սոցիալական լեգիտիմության հիմքերը և պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքը: Վերջիններս կարող են խախտվել նաև այն դեպքում, երբ ոտնձգության օբյեկտ կարող են լինել ոչ միայն բուն պետական, քաղաքական և հասարակական գործչի կյանքը, այլ և նրանց մերձավոր հարազատների (ամուսին, երեխաներ, ծնողներ) կյանքը: Այս առումով, առաջարկվում է հոդվածի վերնագրում և դիսպոզիցիայում ավելացնել «մերձավորի սպանությունը»:

Հետևաբար, գտնում ենք, որ քննարկվող հանցագործությունից տուժողներ կարող են լինել ոչ միայն պետական, քաղաքական կամ հասարակական գործիչները, այլ նաև վերջիններիս մերձավորները:

2. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի առողջությանը ծանր վնաս պատճառելու (եթե հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել դրան և ոչ թե կյանքից զրկելուն) հանցակազմը քրեական օրենսդրությունից բաց է մնացել: Այս առումով ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն չի սահմանում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի, ինչպես նաև նրանց մերձավորների առողջության դեմ ուղղված ոտնձգությունների համար, որը

կարելի է համարել օրենսդրական լուրջ բացթողում:

3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական պատասխանատվություն է սահմանվում անձի կամ նրա մերձավորի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար, կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության, կամ հասարակական պարտքի կատարման հետ, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նույն անձանց առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար, 316-րդ հոդվածի 1-ին մասով իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրելու կամ դա գործադրման սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման հետ, 396-րդ հոդվածով միջազգային պաշտպանությունից օգտվող օտարերկրյա պետության ներկայացուցչի, կամ միջազգային կազմակերպության աշխատակցի, կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց ծառայողական կամ բնակելի շենքերի, կամ տրանսպորտային միջոցների վրա հարձակվելու համար. եթե այդ գործողությունները կատարվել են պատերազմի ստորանքի կամ միջազգային հարաբերությունները բարդացնելու նպատակով, իսկ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կամ նրանց մերձավորների առողջության դեմ ուղղված ոտնձգությունների պարագայում այն բացակայում է:

4. Օրենսդրական հակասությունների վերացման և բացերի լրացման համար անհրաժեշտ ենք համարում ՀՀ քրեական օրենսգրքի 28-րդ գլխում ավելացնել նոր հոդված՝ 305<sup>1</sup>, հետևյալ բովանդակությամբ.

**Հոդված 305<sup>1</sup>.** Պետական կամ հասարակական գործչի նկատմամբ բռնության գործադրելը.

1) պետական կամ հասարակական գործչի կամ նրա մերձավորի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրանց կողմից իրականացվող պետական, քաղաքական կամ հասարակական գործունեության հետ՝ պատժվում է տուգանքով՝

նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից ինըհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երեքամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2) սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց նկատմամբ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրանց կողմից իրականացվող պետական, քաղաքական կամ հասարակական գործունեության հետ՝ պատժվում է ազատազրկմամբ վեցից տասներկու տարի ժամկետով:

5. Իրավակիրառ պրակտիկայում արարքի ճիշտ որակման համար անչափ կարևոր է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի հստակ բնորոշումը, որը չի դառնա բազմակարծության և գիտական վեճերի պատճառ, և կհանգեցնի օրենքի միատեսակ ըմբռնման և կիրառման: ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան բլանկետային է, պետական, քաղաքական պաշտոնների մասին հստակ ձևակերպում ունենալու և արարքի ճիշտ որակման համար անհրաժեշտ է ղեկավարվել Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայության մասին օրենքի 4-րդ հոդվածով:

6. Օրենքի որոշակիության և հստակության համար անհրաժեշտ ենք համարում փոփոխել քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան և շարադրել հետևյալ կերպ՝

**Հոդված 305.** Պետական կամ հասարակական գործչի կամ նրա մերձավորի սպանությունը:

Պետական կամ հասարակական գործչի կամ նրա մերձավորի սպանությունը, որը կատարվել է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով, կամ վրեժի շարժառիթից ելնելով այդպիսի գործունեության համար, պատժվում է ազատազրկմամբ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

7. Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգը անդրադարձ է կատարում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմին, որտեղ առաջարկվում է այն դուրս բերել պետական անվտանգության և սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների գլխից և դիտարկել որպես ծանրացուցիչ հանգամանքներում

կատարված սպանության: Մեր կարծիքով նման մոտեցումը այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության դրդապատճառը, շարժառիթը, նպատակը քաղաքական են, այլ ոչ թե անձնական կամ կենցաղային բնույթի:

8. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմը էականորեն սահմանազատվում է ահաբեկչության հանցակազմից հետևյալով. եթե պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության երկօբյեկտը ներառում է անձի կյանքը և սահմանադրական կարգը և քաղաքական համակարգը, ապա ահաբեկչության օբյեկտը անվտանգությունն է, պետական իշխանության մարմինների բնականոն գործունեությունը, անձանց կյանքն ու առողջությունն է (այստեղ բացակայում է կոնկրետությունը), այսինքն՝ վտանգը սպառնում է ոչ թե կոնկրետ անձին (իշխանական կամ քաղաքական լիազորություններով օժտված), այլ ցանկացած անձի (ահաբեկչության դեպքում տուժող կարող է հանդիսանալ ցանկացած անձ):

Ուրեմն պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմը ենթադրում է կոնկրետ անձին ապօրինի կյանքից զրկելու հանցավորի ուղղակի դիտավորությունը, մինչդեռ ահաբեկչության դեպքում անձին կյանքից զրկելը կարող է առաջանալ անզուլշության հետևանքով: Այդ երկու հանցակազմերի սահմանազատումը առկա է նաև սուբյեկտիվ կողմով դրսևորող նպատակից. պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության նպատակը՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի նշված գործունեության դադարեցնելն է, իսկ ահաբեկչության դեպքում՝ հասարակության անվտանգության սպառնում՝ ահաբեկման եղանակով:

9. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքին ոտնձգության պատճառային բազմաշերտությունը, որում միահյուսվում են բռնությամբ կատարվող հանցագործությունների դետերմինանտները, ինչպես նաև հատուկ պայմաններ և պատճառներ, որոնք բնորոշ են քննարկվող հանցավոր արարքի հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներին, օբյեկտիվորեն

անհրաժեշտություն է առաջանում տարբեր կանխարգելիչ միջոցառումների մշակում և դրանց հաջորդական իրականացում:

Առաջարկվող միջոցառումների առաջին մակարդակը ենթադրում է տվյալ հանցագործությանը նպաստող քրեածին պատճառների (գործոնների) բացահայտում և չեզոքացում:

Կանխարգելիչ միջոցառումների երկրորդ մակարդակը ենթադրում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության «տաք հետքերով» բացահայտում և հանցագործության հետևանքների վերացում:

### **Յետագոտության տեսական և գործնական նշանակությունը.**

Սույն ատենախոսական աշխատանքի տեսական նշանակությունը նրանում է, որ հետագոտության արդյունքները կարող են օգտագործվել հետագա ուսումնասիրողների կողմից քրեական իրավունքի տեսությունը զարգացնելու նպատակով:

Աշխատանքի գործնական նշանակությունը նրանում է, որ մշակված եզրակացությունները, առաջարկությունները և հետևությունները կարող են նպաստել քրեական օրենսդրության կատարելագործման և իրավակիրառ պրակտիկան բարելավելու համար: Յետագոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև «Քրեական իրավունք», «Հանցագործությունների գիտական հիմունքներ» առարկաներ և հատուկ դասընթացներ դասավանդելիս:

### **Յետագոտության արդյունքների փորձաքննությունը.**

Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտի «Քրեական և քրեական դատավարության իրավունքի» ամբիոնում, որտեղ կայացվել է նաև աշխատանքի նախնական քննարկումը և գրախոսումը:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում:

### **Աշխատանքի կառուցվածքը.**

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է նրա նպատակով, խնդիրներով, հետագոտության օբյեկտով և առարկայով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված

գրականության ցանկից:

# ԳԼՈՒԽ 1

## ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՍՈՑԻԱԼ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԸ

### 1.1 ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անձի դեմ ուղղված ամենավտանգավոր և ամենաճանր հանցագործությունները սպանությունն է, որքանով որ դրա հետևանքով պատճառվում է անդառնալի և անփոխարինելի կորուստ, ոչնչացվում մարդկային հասարակության մեջ գոյություն ունեցող ամենամեծ արժեքը՝ մարդու կյանքը<sup>3</sup>:

Տարբեր երկրներում և պատմական տարբեր ժամանակահատվածներում հանցավորության ընդհանուր զանգվածում թեև տարբեր է սպանությունների ծավալը, այդուհանդերձ, հանցագործության այդ տեսակը, որպես մարդկության մշտական ուղեկից, միշտ էլ պահպանում է հասարակական վտանգավորության բավականաչափ արժեքը<sup>4</sup>:

Սպանության օբյեկտը մարդու կյանքն է՝ որպես կենսաբանական գոյամիջոցի անկախ մարդու ազգությունից, ռասայական պատկանելությունից, ծագումից, տարիքից, սոցիալական, առողջական վիճակից և այլն: Այսինքն քրեաիրավական պաշտպանության ենթակա է ցանկացած անձի կյանք՝ նրա ծննդից մինչև մահ: Անձի կյանքը դիտվում է ոչ միայն որպես կենսաբանական վիճակ, սպանության անմիջական օբյեկտ, այլև որպես հասարակական հարաբերությունների տարր: Հետևաբար սպանությամբ միաժամանակ խախտվում են անձի կյանքը պաշտպանող հասարակական հարաբերությունները:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս **Թամազյան Ա.**, Ճանրացնող հանգամանքներում կատարված սպանությունները, Երևան, 2003, Նույնի ճանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2010:

<sup>4</sup> Տե՛ս **Գրիգորյան Մ., Չիլի ֆուդարյան Մ.** Մարդու կյանքի քրեաիրավական պաշտպանությունը: Երևան, 2002, էջ 3: Նաև՝ **Бородин С.В.** Преступления против жизни. СПб., 2003, էջ 10-11; **Борзенков Г.Н.** Квалификация преступлений против жизни и здоровья. М., 2006, էջ 9-11; Курс уголовного права в пяти томах. Том 3. Особенная часть. Под ред. д.ю.н. проф. **Г.Н. Борзенкова**, д.ю.н., проф. **В.С. Комиссарова**. М., 2002, էջ 91-92 և այլն



Ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, որտեղ սպանության իրավաբանական սահմանումը տրված չէր, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը տալիս է սպանության սահմանումը: Համաձայն քրեական օրենսգրքի 104 հոդվածի՝ սպանությունը ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելն է:

Անզգուշությամբ մահ պատճառելն այլևս չի դիտվում որպես սպանություն, չնայած օբյեկտիվորեն շարունակում է մնալ որպես կյանքի դեմ ուղղված հանցագործություն: Մարդասպանի և անզգուշությամբ մահ պատճառողի գործողությունները տարբերակելը և միմյանցից սահմանազատելը կարևոր նշանակություն ունի ոչ միայն իրավակիրառ ոլորտում որոշումներ կայացնելիս, այլև դակատարած անձանց բարոյական գնահատական տալու համար, որքանով որ անզգուշությամբ մահ պատճառողը և մարդասպանը բարոյական գնահատման առումով նույնպես տարաբան են:

Իրավացի էր պրոֆ. Մ.Գ. Շարգորոդսկին, որ դեռևս 1948 թվականին գտնում էր, որ սպանությունը կարող է կատարվել միայն դիտավորությամբ, որ սպանությանը հատուկ է միայն մեղքի դիտավորյալ ձևը, որ «անզգուշ սպանություն», ինչպես և «անզգուշ հրկիզում» չի լինում: Սպանել և հրկիզել կարելի է միայն դիտավորությամբ, դրանց անզգուշ ձևերը պարզապես անզգուշությամբ մահ պատճառելն է և հրդեհը<sup>5</sup>: Իրոք, հասարակական գիտակցության մեջ սպանությունն ընկալվում է որպես մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը:

Սպանությունը այլ անձի դիտավորությամբ կյանքից զրկելն է, հետևաբար, ինքն իրեն մահ պատճառելը (ինքնասպանությունը) չի դիտվում որպես սպանություն և ինքնասպանության անհաջող փորձի դեպքում անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության:

Սպանության օբյեկտիվ կողմը արտահայտվում է այլ անձին ապօրինաբար կյանքից զրկելու մեջ: «Ապօրինաբար» տերմինի մատնանշումը կարևոր նշանակություն ունի, որքանով որ ապօրինի չդիտվող գործողությունների արդյունքում (օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմաններում) այլ անձի կյանքից զրկելը ոչ միայն սպանություն, այլև ընդհանրապես որևէ

<sup>5</sup> Տե՛ս Шаргородский М. Д. Преступления против жизни и здоровья. М., 1948, էջ 38,194:

հանցագործությունն չի համարվում:

Օբյեկտիվ կողմից սպանությունը երեք պարտադիր հատկանիշների միասնությունն է: Դրանք են.

1. այլ անձին կյանքից զրկելուն ուղղված գործողությունն կամ անգործությունն,

2. տուժողի մահը որպես հանցագործության պարտադիր հետևանք,

3. պատճառական կապը հանցավոր գործողության (անգործության) և հանցավոր հետևանքի միջև:

Սպանությունը հիմնականում կատարվում է գործողությամբ՝ տարբեր առարկաների գործադրմամբ, տուժողի օրգանիզմի վրա անմիջական ֆիզիկական ներգործության միջոցով: Անձը զրկվում է կյանքից հրազենի կամ սառը զենքի, այլ առարկաների գործադրմամբ, թունավորման, հրկիզման, պայթյունի և այլ եղանակներով:

Սպանությունը նյութական հանցակազմ ունեցող հանցագործությունն է, որն ավարտվում է հանցավոր հետևանքի առաջացմամբ: Կարևոր է, թե երբ է տուժողը մահացել: Նակարող է մահանալ թե՛ անմիջապես, թե՛ որոշ ժամանակ անց: Այն դեպքերում, երբ հանցավոր հետևանքը չի առաջացել հանցավորի կամքից անկախ պատճառներով (կրակոցը դիպուկ չի եղել կամ անձի կյանքը փրկվել է բժշկական ակտիվ միջամտության շնորհիվ), առկա է սպանության փորձը:

Սպանության օբյեկտիվ կողմի հաջորդ պարտադիր պայմանը հանցավորի գործողության (անգործության) և տուժողի մահվան միջև պատճառական կապի առկայությունն է: Ըստ ակադեմիկոս Վ.Ն. Կուլդրյավցևի՝ սպանության հանցակազմում պատճառական կապը առավել կարճ է, անմիջական<sup>6</sup>: Հետևանքը պետք է լինի հանցավոր գործողության (անգործության) անհրաժեշտ արդյունք: Անձի գործողությունը (անգործությունը) միայն այն դեպքում կարող է համարվել պատճառ, եթե դրա կատարման պահին այն հետևանքի առաջացման համար անհրաժեշտ և պարտադիր պայման է:

Ինչպես նշում է ակադեմիկոս Վ. Ն. Կուլդրյավցևը, հանցակազմի օբյեկտիվ կողմի գերազնահատումը, ի վնաս սուբյեկտիվ

<sup>6</sup> Տե՛ս Կудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений, М., 2001, էջ 146:

հատկանիշների, առաջ է բերում այսպես կոչված օբյեկտիվ մեղսայնացում: Ըստ հեղինակի, նույնքան վտանգավոր է և սուբյեկտիվ կողմի գերազնահատումը, որի դեպքում պատասխանատվության հիմքում դրվում է ոչ թե հանրորեն վտանգավոր արարքը, այլ «վտանգավոր մտքերը», «մերկ դատողությունները», վտանգավոր վիճակը<sup>7</sup>: Յետևաբար արարքի ճիշտ քրեաիրավական գնահատման, օրինականության պահպանման և ապահովման համար, բոլոր դեպքերում, անհրաժեշտ է սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշները քննարկել սուբյեկտիվ կողմի պրիզմայի միջոցով:

Սպանության օբյեկտիվ կողմի պարզաբանման համար անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այնպիսի կարևոր հանգամանքների վրա, ինչպիսիք են հանցագործության տեղը, ժամանակը, միջոցը, գործիքը, եղանակը և այլն<sup>8</sup>:

Եթե սպանության կատարման եղանակը հանդես է գալիս որպես հիմնական հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, հանցավորի արարքը ենթակա է որակման, որպես ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն:

Սուբյեկտիվ կողմից սպանությունը կատարվում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:

Ուղղակի դիտավորության դեպքում հանցավորը գիտակցում է, որ ոտնձգում է այլ անձի կյանքի դեմ, նախատեսում է, որ իր գործողությունները պարունակում են մահվան իրական հնարավորություն կամ անխուսափելիություն և ցանկանում է դրավրահասնելը:

Անուղղակի դիտավորության դեպքում հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով վտանգի տակ է դնում այլ անձի կյանքը, նախատեսում է, որ դրա արդյունքում կարող է առաջանալ տուժողի մահը, չի ցանկանում դրա առաջանալը, սակայն գիտակցաբար թույլ է տալիս այն կամ անտարբեր է վերաբերվում դրա առաջացմանը:

Վերջին ժամանակներս տարածում է գտել պայթեցման միջոցով

<sup>7</sup> Տե՛ս **Кудрявцев В.Н.**, Общая теория квалификации преступлений, М., 2001, էջ 148:

<sup>8</sup> Մանրամասն տե՛ս **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունները: Երևան, 2003, նույնի՝ Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2010:

սպանություն կատարելը: Նման դեպքում բացի նախատեսված զոհից հաճախ զոհվում են և այլ, երբեմն դեպքի վայրում պատահականորեն հայտնված անձինք: Նման դեպքում, նախատեսված զոհին սպանելիս, հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ, մյուսների նկատմամբ՝ անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

Հանցավորի դիտավորության տեսակը պարզելիս նախաքննական մարմինը և դատարանը պետք է հիմնվեն կատարված հանցագործության բոլոր հանգամանքների համակցության վրա՝ հաշվի առնելով մասնավորապես հանցագործության եղանակը, գործիքը, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը, տեղակայումը, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները, հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին հանցավորի վարքագիծը, նրա և տուժողի փոխհարաբերությունը և այլն<sup>9</sup>: Նշված հատկանիշների համադրմամբ որոշվում է դիտավորության ուղղվածությունը և նրա տեսակները, սպանության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հետևանքով անզգուշությամբ տուժողի մահ առաջացնող հանցակազմի սահմանազատումը, սպանության փորձի սահմանազատումը առողջությանը տարբեր աստիճանի վնաս պատճառելուց, սպանությունը՝ անզգուշությամբ մահ պատճառելուց և այլն:

Անուղղակի դիտավորությամբ կատարված սպանության դեպքում հանցավորը նախատեսում է իր գործողությունների հետևանքով տուժողի մահվան իրական հնարավորությունը, իսկ այն դեպքերում, երբ հանցավորը նախատեսում է հետևանքի անխուսափելիությունը, խոսք կարող է լինել միայն ուղղակի դիտավորության մասին: Դիտավորության այս երկու տեսակի միջև առավել էական տարբերությունը նրանց կամային պահի դրսևորման մեջ է: Եթե ուղղակի դիտավորության դեպքում հանցավորը ցանկանում է տուժողի մահը, ապա անուղղակի դիտավորության դեպքում հանցավորը այդ չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս կամ հետևանքի նկատմամբ ցուցաբերում է անտարբերություն: «Չցանկանալը» դիտավոր-

<sup>9</sup> Տե՛ս **Рубцова А.С.** Актуальные проблемы уголовного права. М., 2016, էջ 91-92.

րու թյուրը չի բացառում, քանի որ այն դեռևս չի նշանակում թույլ չտալ կամ թույլ չտալ ուն ուղղված գործողություններ, իսկ «գիտակցաբար թույլ տալը» նշանակում է, որ հանցավորը պատրաստ է ընդունել տուժողի մահը՝ որպես իր գործողությունների հետևանք:

Դիտավորության տեսակի բացահայտումը կարևորվում է նաև նրանով, որ այլ հավասար պայմանների դեպքում ուղղակի դիտավորության կատարված սպանությունը ավելի վտանգավոր է, քան անուղղակի դիտավորության կատարված սպանությունը: Օրինակ՝ բնակարանի հրկիզումը կոնկրետ անձին սպանելու նպատակով ավելի վտանգավոր է, քան բնակարանի հրկիզումը այնտեղ գտնվող անձանց ճակատագրի նկատմամբ անտարբեր, իմիջիայլոց վերաբերմունքի դրսևորմամբ:

Դիտավորության տեսակի բացահայտումը ունի նաև գործնական մեծ նշանակություն: Դատական բարձրագույն ատյանը բազմիցս նշել է, որ սպանության փորձը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորության կամ, երբ անձը գիտակցել է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է դրա վտանգավոր հետևանքների հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկացել է դրանց առաջանալը, սակայն մահացու հետևանքը վրաչի հասել նրա կամքից անկախ պատճառներով: Հանցափորձը, որպես ուղղակի դիտավորության կատարված գործողություն (անգործություն), 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքում օրենսդրական ձևակերպում է ստացել:

Ինչպես արդեն նշվել է, հանցավորի դիտավորության տեսակը, ուղղվածությունը պարզելիս խիստ կարևոր է հանցագործության բոլոր հանգամանքների բացահայտումը<sup>10</sup>: Դատաբանական պրակտիկայում սպանության դիտավորության մասին հաճախ հետևություն է արվում նաև այդ մասին արված նախնական սպառնալիքների հիման վրա: Վերջինս հանցագործության օբյեկտիվ կողմին առնչվող այլ հանգամանքների հետ միասին հիմք է հանդիսանում արարքի ճիշտ քրեաիրավական որակման համար: Սակայն միշտ չէ, որ նախնական սպառնալիքներն արտահայտում են հանցավորի իրական ցանկությունը, նույնիսկ եթե նրանք երբեմն

<sup>10</sup> Մանրամասն տե՛ս **Козлов А.П.** Понятие преступления. СПб., 2004, էջ 551-593:

ուղեկցվում են արտաքինից սպառնալիքի իրականացմանը նմանվող որոշակի գործողություններով: Նման դեպքերում անհրաժեշտ է սպանության փորձը տարբերել այլ հանցագործություններից, մասնավորապես գենքի գործադրմամբ կամ գործադրման փորձով կատարված չարամիտ խուլի գանությունից:

Ինչպես նշել ենք, ուղղակի դիտավորության դեպքում սուբյեկտը գիտակցում է իր գործողությունների՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսում է իր գործողության արդյունքում հանցավոր հետևանքի առաջացման հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում այն, իսկ անուղղակի դիտավորության դեպքում նա անտարբեր է վերաբերվում մահվան առաջացմանը՝ ըստ էության թույլ տալով այն: Գործնականում, սակայն, հանդիպում են նաև այսպես կոչված չկոնկրետացված դիտավորության դրսևորման դեպքեր, երբ անձը հավասարապես նախատեսում է իր գործողությունների արդյունքում ցանկացած հանցավոր հետևանքի առաջանալը: Նման դեպքերում անձը պատասխանատվության է ենթարկվում փաստացի առաջացած հետևանքի համար: Եթե չկոնկրետացված դիտավորության դեպքում նախատեսված հետևանքներից ոչ մեկը չի առաջանում, ապա արարքը, մեր կարծիքով, պետք է որակել որպես հնարավոր առավել թեթև հանցագործության փորձ: Նման որակումը հիմնավորվում է այն հանրահայտ սկզբունքով, որ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն ի օգուտ կասկածյալի:

Ինչպես հայտնի է, մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարած արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ: Իր հիմքում ունենալով գիտակցական և կամային տարրեր, մեղքը հանդիսանում է հանցակազմի սուբյեկտիվ կողմի հիմքը և ցանկացած հանցագործության պարտադիր հատկանիշը: Չկամեղք, չկա և հանցագործություն: Չարկ է նկատել, որ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հիմքը հանդիսանալով հանդերձ, մեղքը չի պատասխանում այն հարցին, թե ինչո՞ւ և ինչի՞ համար է հանցավորը կատարել հանցագործությունը: Վերջիններս բացահայտվում են միայն հանցակազմի սուբյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են շարժառիթը և նպատակը: Յետևաբար՝ արարքի ճիշտ

որակման համար կարևոր նշանակություն ունեն նրա շարժառիթը և նպատակը, ինչպես նաև դրսևորած հույզերը մանրակրկիտ պարզել և ու բացահայտելը:

Այսպիսով, ներկայացնելով սպանության ընդհանուր քրեաիրավական բնութագիրը, անցնենք պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հասկացության բացահայտմանը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը՝ որպես սպանության առանձին տեսակ, ուղեկցվել է մարդկության պատմության բոլոր ժամանակաշրջաններում՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը<sup>11</sup>:

Այն ուղղված է պետության անվտանգության հիմքերի դեմ: Պատահական չէ, որ օրենսդիրը պետական, քաղաքական և հասարակական գործչի սպանության հանցակազմը դասել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքին (ՀՀ քր. օր.-ի գլ ու խ 28):

Նշված գլ ու խը ներառվում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի բաժին 6-րդ-ում՝ «Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ», որում ներառվում են նաև՝ «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ» (գլ ու խ 29), «Կառավարության կարգի դեմ ուղղված հանցագործություններ» (գլ ու խ 30) և «Արդարադատության դեմ ուղղված հանցագործություններ» (գլ ու խ 31):

Պետական իշխանության դեմ ուղղված ոտնձգությունները համարվում են ծանր հանցագործություններ, քանի որ ուղղված են պետության հիմքերի, հասարակության բնականոն գործունեության և անձի անվտանգության դեմ:

Ընդհանրապես իշխանությունը որևէ անձի կամ կազմակերպության հատկությունն է իրեն ենթարկելու այլ անձանց կամ կազմակերպություններին, հակառակ վերջիններիս դիմադրության:

---

<sup>11</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Неделин И.Г.** Посягательство на жизнь государственного или общественного деятеля (уголовно-правовые и криминологические аспекты). М., 2011, էջ 16-30: Տե՛ս նաև նույն հեղինակի՝ «Посягательство на жизнь государственного или общественного деятеля (уголовно-правовые и криминологические аспекты)», Диссертация на соиск. уч. ст. канд. юрид. наук. М., 2009, էջ 15-29:

Իշխանությունը սոցիալական երևույթ է: Իշխանությունը միշտ գոյություն ունի և գործածվում է հասարակական և սոցիալական հարաբերությունների միջև, որպես հարաբերության հատուկ տեսակ՝ իշխանության հարաբերություն: Այն իրենից ներկայացնում է երկկողմանի հարաբերություն, որտեղ կողմերից մեկը հանդես է գալիս որպես իշխող, իսկ մյուսը՝ որպես նրան ենթակա: Նրանք հանդես են գալիս որպես իշխանության հարաբերության սուբյեկտ և օբյեկտ: Իշխանությունը նյութականանում է որոշակի հիմնարկներում և ինստիտուտներում: Իշխանության հարաբերություններում իշխողը ձևակերպում է կառավարչական կամքը սոցիալական նորմերի և անհատական պատվիրանների ձևով, իսկ օբյեկտը ենթարկվում է դրանց<sup>12</sup>: Դա իշխանության պարտադիր պայմանն ու միջոցն է: Իշխանությունը հասարակության մեջ իրականացնում է որոշակի գործառնություններ՝ տիրապետում, ղեկավարում, կարգավորում, վերահսկողություն, համակարգում, կազմակերպում և այլն:

Պետությունն օժտված է քաղաքական իշխանությամբ: Իշխանության առկայությունը տալիս է կառավարման իրավունք: Պետական իշխանության գլխավոր խնդիրը հասարակության գործերի կառավարումն է, նրա անվտանգության ու միասնության ապահովումը, մարդու իրավունքների, ազատությունների և անվտանգության պահպանությունը:

Յենց սրանով է պայմանավորված պետական իշխանության դեմ ուղղված ոտնձգությունների հանրորեն վտանգավորության աստիճանը և իշխանական հարաբերությունների պաշտպանության սոցիալ-իրավական նշանակությունը:

Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունները ոտնձգում են միաբնույթ հասարակական հարաբերությունների դեմ: Վերոնշյալ հանցագործություններն են հենց պետական իշխանության, նրա գործառնությունների և բնական գործունեության դեմ, որպեսզի հասարակության մեջ ստեղծեն քաոս, անորոշություն և անկառավարելի վիճակ: Այդպիսի հանցագործությունների մի մասն ուղղված է ՀՀ սահմանադրական կարգի և պետական

<sup>12</sup> Մանրամասն տե՛ս **Желтов В.В.** Теория власти. М., 2008; **Бертран де Жувенель.** Власть: Естественная история ее возрастания. Пер. с франц. **В.П. Гайдамака и А.В. Матешук.** М., 2011:



անվտանգության դեմ, մյուսները՝ պետական կառավարման և ծառայության, արդարադատության դեմ:

Այս տեղից կարելի է եզրակացնել, որ «Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում ընդգրկված հանցագործությունների սեռային օբյեկտ է հանդիսանում այն հասարակական հարաբերությունների ամբողջությունը, որոնք ապահովում են պետության սահմանադրական կարգը, անվտանգությունը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց բնականոն գործունեությունը: Ամենաընդհանուր ձևակերպմամբ կարելի է նշել, որ քննարկվող բաժնում ներառված հանցագործությունների սեռային օբյեկտ կարելի համարել այն հասարակական հարաբերությունների ամբողջությունը, որոնք ապահովում են ՀՀ պետական իշխանության գործառույթների բնականոն իրականացումը:

«Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ» բաժինը գլուխների է դասակարգվում ըստ տեսակային օբյեկտի<sup>13</sup>: Յուրաքանչյուր գլխում ներառված են այն հանցագործությունները, որոնք ոտնձգում են տվյալ բաժնում նախատեսված հանցագործությունների առավել նեղ հասարակական հարաբերությունների դեմ: Սեռային օբյեկտի բաղկացուցիչ մասը համասեռ, միաբնույթ հասարակական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների տեսակային օբյեկտն է, որի առանձնահատկությունները և բովանդակությունը պարունակում են քննարկվող բաժնի համապատասխան գլուխներում:

Սույն ատենախոսական աշխատանքի թեմայի շրջանակում քննարկվող հանցագործությունը՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը (հոդ. 305) ներառված է «Սահմանադրական կարգի հիմունքների և պետական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում (ՀՀ քր.օր-ի գլուխ 28):

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 305-ը պատասխանատվություն է սահմանում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության համար, որը կատարվել է նրա

<sup>13</sup> Մանրամասն տե՛ս Агузаров Т.К., Грачева Ю.В., Чучаев А.И. Охрана власти в уголовном праве России. М., 2016, էջ 17-18:

նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով:

Քննարկվող հանցակազմի էությունը ճիշտ ըմբռնելու համար, անհրաժեշտ է նախ պարզաբանել «սահմանադրական կարգ», «քաղաքական համակարգ», «պետական», «քաղաքական» և «հասարակական» գործչի եզրույթների բովանդակությունը:

«Սահմանադրական կարգ»-ի ինստիտուտը ցանկացած պետության իրավական համակարգում զբաղեցնում է առաջնային հիմնարար տեղ<sup>14</sup>: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ սահմանադրական կարգի ինստիտուտի հիմնական դրույթների ամրագրումն ունի երկակի բնույթ: Դրանք ընդհանրացված ձևով ամրագրված են ՀՀ Սահմանադրության առաջին գլխում, այնուհետև իրենց համակողմանի ու հանգամանալից արտացոլումն են ստացել ՀՀ Սահմանադրության համապատասխան ինստիտուտների նորմերում:

Սահմանադրական կարգը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանումն ու պետության կողմից Սահմանադրությանը համապատասխան գործելն է<sup>15</sup>:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին գլխում («Սահմանադրական կարգի հիմունքները» ամրագրված տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային հարաբերությունների հիմունքների հետմիասին իրենց կարևորությունը ամբողջականում են Հայաստանի քաղաքական համակարգի հիմունքները):

Մասնագիտական գրականության մեջ<sup>16</sup> ներկայացված են «քաղաքական համակարգ» եզրույթի տարբեր բնորոշումներ: Սակայն առավել ընդունված է այն մոտեցումը, որ քաղաքական համակարգը՝ պետության, քաղաքական և հասարակական կազմակերպությունների կողմ հանրագումար է, որոնք որպես հասարակական հարաբերությունների իրավահավասար սուբյեկտներ, մասնակցում են երկրի քաղաքական ոլորտի հարցերի կարգավորման գործընթացին: Այդ հարաբերությունների միջոցով է հասարակության մեջ իրականացվում քաղաքական իշխանությունը,

<sup>14</sup> Մանրամասն տե՛ս **Боброва Н.А.** Конституционный строй и конституционализм в России (проблемы методологии, теории, практики). Дисс. ... док. юрид. наук. Самара, 2003, էջ 24-31:

<sup>15</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պաշտ. խմբ. **ՆԱ Այվազյան**: Երևան, 2012, էջ 104:

<sup>16</sup> Տե՛ս **Рассказов Л.П.** Теория государства и права: углубленный курс. М., 2015, էջ 163-164; Актуальные проблемы теории государства и права. М., 2014, էջ 418-428 և այլն:

որի խտացված արտահայտությունն է պետական իշխանությունը: Այս առումով պետական իշխանության իրականացմանը մասնակցող ինստիտուտներն ընդունված է անվանել քաղաքական համակարգի տարրեր: Այդպիսիք են համարվում՝ պետությունը, քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները:

Քննարկվող հանցագործության օբյեկտը ոչ միայն պետական իշխանությունը և քաղաքական համակարգն է, այլև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքը: Յետևաբար, նման հանցագործություններից տուժողներ կարող են հանդիսանալ պետական, քաղաքական և հասարակական գործիչները:

Մասնագիտական գրականության մեջ տարակարծություններ կան «պետական գործիչ», «քաղաքական գործիչ» և «հասարակական գործիչ» հասկացությունների վերաբերյալ: Այդ իսկ պատճառով այդ հասկացությունների հստակեցումը ունի ոչ միայն եզրույթաբանական-տեսական նշանակություն, այլ նաև զգալի գործնական-կիրառական կարևորություն:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ Յայաստանի Յանրապետության օրենսդրությունը որոշակի հստակեցում է մտցրել քննարկվող հասկացությունների վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ ՅՅ պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ղեկավար աշխատողների անվանացանկը տրված է նաև ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր մասի 6-րդ հոդվածի 1-ին կետով<sup>17</sup>:

ՅՅ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսոզիցիան բլանկետային է, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի հստակ բնորոշման համար անհրաժեշտ է ղեկավարվել ՅՅ հանրային ծառայության մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 10-րդ, 13-րդ մատերով:

Հիմք ընդունելով ՅՅ հանրային ծառայության մասին օրենքի 4-րդ հոդվածը<sup>18</sup>, կարող ենք նշել, որ պետական պաշտոններ են համարվում՝ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական և պետական

<sup>17</sup> Տե՛ս ՅՅ քրեական դատավարության օրենսգրք, ՅՅ ՊՏ N 22 (55), 21.09.98:

<sup>18</sup> Տե՛ս ՅՅ օրենքը հանրային ծառայության մասին, ՅՅ ՊՏ N 37 (840), 17.06.11; Նաև՝ ՅՅ օրենք քաղաքացիական ծառայության մասին (04.12.2011)/ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1556&lang=arm>

ծառայություն պաշտոնները: Այսպիսով, կարող ենք պնդել նաև, որ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիայում ավելորդ է նշել «Քաղաքական գործիչ» հասկացությունը, քանի որ պետական գործիչ ասելով հասկանում ենք, և՛ քաղաքական գործիչ, և՛ քաղաքացիական ծառայող, և՛ պետական ծառայող:

Հասարակական գործչի հստակ բնորոշումը ստանալու համար անհրաժեշտ է ղեկավարվել «ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, ինչպես նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, որտեղ ամրագրված է հասարակական կազմակերպությունների, միավորումների և կուսակցությունների հասկացությունը:

Պետական, քաղաքական գործիչներ են համարվում այն անձինք, ովքեր բարձր պաշտոններ են զբաղեցնում ՀՀ պետական իշխանության մարմիններում: Այդպիսիք են ՀՀ Նախագահը, Վարչապետը, Կառավարության անդամները, Ազգային ժողովի պատգամավորները, ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերում պատասխանատու պաշտոններ զբաղեցնող անձինք, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները, ինչպես նաև բոլոր այն անձինք, ովքեր զբաղեցնում են ՀՀ Սահմանադրությամբ՝ նախատեսված պաշտոններ և ակտիվորեն իրականացնում են իրենց պետական և քաղաքական գործառնությունները:

Հասարակական գործիչներ են համարվում հասարակական կազմակերպությունների, միավորումների, կուսակցությունների ղեկավարները կամ անդամները, ովքեր համապատասխան գործունեություն են իրականացնում: Ընդ որում նշանակություն ունի, թե ինչպիսի՞ կազմակերպություն կամ կուսակցություն են ներկայացնում այդ անձինք՝ պետական իշխանությանը համակիր, թե ընդդիմադիր: Բավական է միայն, որ կազմակերպությունը, միավորումը կամ կուսակցությունը գրանցված լինեն և իրենց գործունեությունը ծավալեն սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով<sup>19</sup>:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի բնորոշման հստակեցումը կարևոր նշանակություն ունի պետական, քաղաքական

<sup>19</sup> Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Խմբ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Ս. Ղազինյանի: Երևան, 2012, էջ 770:

կամ հասարակական գործչի քրեափրավական պաշտպանության ամրապնդման հարցում:

Իրականությունը շատ բարդ ու բազմազան է, և միշտ էլ, որ «տեղավորվում է» նախապես նշված իրավական նորմի սահմաններում: Այս առումով, գտնում ենք, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի անկաշկանդ և համարձակ գործունեության իրականացման համար անչափ կարևոր է նաև նրանց մերձավորների կյանքի և առողջության քրեափրավական պաշտպանության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան քրեափրավական պաշտպանությունից դուրս է թողնում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի մերձավորներին, որը կարելի է համարել հետազոտվող քրեափրավական նորմի նշանակալի թերություն, կամ իրավունքի բաց:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ուժով պաշտպանում է անձի կամ նրա մերձավորի կյանքը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի հետ:

316-րդ հոդվածի 2-րդ մասով իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի կյանքը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարման հետ:

396-րդ հոդվածի 2-րդ կետով միջազգային պաշտպանությունից օգտվող օտարերկրյա պետության ներկայացուցչի կամ միջազգային կազմակերպության աշխատակցի կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների կյանքը, կապված՝ պատերազմի, սադրանքի կամ միջազգային հարաբերությունների բարդացման հետ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, գտնվելով պետական պահպանության հսկողության ներքո, նրանց նկատմամբ վրեժխնդրության ավելի հեշտ միջոց կարող են հանդիսանալ մերձավորները: ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան սուբեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարելով պետական, քաղաքական կամ հասարակական գործչի գործունեությունը դադարեցնելու

նպատակը, թույլ չի տալ իս լիարժեք քրեաիրավական պաշտպանություն ասպահովել նշված անձանց համար, քանի որ այն կարող է կատարվել նաև վրեժի շարժառիթով: Պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների սպանության նպատակը ոչ թե գործողությունը դադարեցնելն է եղել, այլ վրեժխնդրությունը կապված նրանց նշված գործունեության իրականացման հետ: Այսպես՝ յակոբինների կոնսակցության առաջնորդներից մեկը՝ ժան Պոլ Մարատը սպանվել էր սեփական տանը, վրեժի շարժառիթից ելնելով, իր կողմից իրականացվող քաղաքական գործունեության համար<sup>20</sup>:

Այս օրինակում հստակ երևում է, որ սպանության նպատակը ոչ թե գործունեությունը դադարեցնելն էր, այլ վրեժխնդրությունը, և այդպիսի դեպքերի օրինակով գործող քրեական օրենսդրությունը հնարավորություն չի տալ իս արարքը որակել 305-րդ հոդվածով, չնայած նրան, որ արարքը պարունակում է սույն հոդվածով, նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ավարտված հանցագործությունն է համարվում այն արարքը, որը պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Նշենք նաև, որ առկա թերությունները տվյալ դեպքերի օրինակով քրեաիրավական նորմի կիրառման ժամանակ իրավակիրառական պրակտիկայում կարող են առաջացնել բազմաթիվ դժվարություններ, որոնք էլ իրենց հերթին կարող են հանգեցնել արարքի սխալ որակման: Նշենք նաև, որ օրենքի միատեսակ ըմբռնումն ու ճիշտ կիրառումը՝ իրավաիրաքերության սուբյեկտների կողմից, կարևոր նշանակություն ունի արդարադատության իրականացման հարցում: Օրենսդրական բացերի լրացման և հակասությունների վերացման համար անհրաժեշտ ենք համարում գործող քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան փոփոխություններով և լրացումներով ձևակերպել հետևյալ կերպ. «Պետական կամ հասարակական գործչի, կամ նրա մերձավորի սպանությունը, որը կատարվել է նրա նշված գործունեությունը

<sup>20</sup> Տե՛ս История Франции. М., 1989, Т.2, էջ 214.

դադարեցնել ու նպատակով, կամ վրեժի շարժառիթից ելնելով այ դպիսի գործունեության համար»:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք քննարկվող հանցագործության հեղինակային գիտական բնորոշումը. «Սահմանադրական կարգը խարխլելու և քաղաքական համակարգը կազմալուծելու նպատակով՝ պետական, քաղաքական, կան հասարակական գործչի սպանությունը կամ որ նույնն է՝ վերջիններիս մերձավոր հարազատների սպանությունը, որոնք կատարվել են նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով»:

## **1.2 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սոցիալ-քաղաքական նախադրյալները փոխակերպվող հասարակությունում**

Մարդկային պատմության ողջ ընթացքում, հանցավոր արարքները միշտ դրսևորվել են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և բոլոր ժամանակներում<sup>21</sup>: Չկա այն բանի լիակատար համոզվածությունը, թե անցած ճանապարհը բավական է երևույթի օբյեկտիվ վերլուծության համար: Փոխակերպման գործընթացները դեռ հեռու են իրենց ավարտից, իսկ անցած տարիների ընթացքում կուտակված սոցիալ-իրավական փորձը թույլ է տալիս միայն հետևել հասարակությունում սոցիալ-քաղաքական մոտեցումների զարգացման միտումներին և իմաստավորել հասարակությունում կատարված անդառնալի հանցագործությունների պատճառները, շարժառիթները, ինչպես նաև համապատասխան հետևություններ անել կանխման ուղղությամբ:

Միայն անցյալ դարի վերջերին, քննարկվող հանցագործության զոհ գնացին մեկ տասնյակից ավելի պետական և քաղաքական գործիչներ<sup>22</sup>:

<sup>21</sup> Մանրամասն տե՛ս **Аветисян С.С.**, Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, էջ 309-397; **Пионтиковский А.А., Меньшагин В.Д., Чиквадзе В.М.** Курс советского уголовного права. Особенная часть. Том 2, М., 1959, էջ 5-27; **Пионтиковский А.А.** Советского уголовного право. Том второй, Особенная часть, М., 1928, էջ 4-32; **Трайнин А.Н.** Уголовное право, Особенная часть, Преступления против государства и социального порядка. М., 1927, էջ 5-16:

<sup>22</sup> Օրինակ՝ Նախկին գլխավոր դատախազ Յենրիկ Խաչատրյանի սպանությունը (1998թ. օգոստոսի 6-ին), ՅՅ փոխնախարարներ Վահրամ Խորխոռունիի սպանությունը (1998թ.

Այս առումով, հատկապես փոխակերպվող հասարակության ունում խիստ կարևորվում է անձի անվտանգության ապահովումը, այդ թվում քրեաիրավական պաշտպանության ունը<sup>23</sup>:

Հասարակական սոցիալական կառուցվածքի մարգինալացումը ուներևս մեկ կարևոր առանձնահատկություն. այն ուղեկցվում էր անորոշության գործընթացներով, այսինքն՝ արժեհամակարգի ապակողմնորոշվածության վիճակներով: Բնակչության մեծամասնությունը հիվանդագին, ծանր էր տանում սովորական արժեկողմնորոշումների և փոփոխված նոր սոցիալական իրականության միջև կոնֆլիկտի, օտարվածության վիճակը: Դառն մի կերպ չի կարելի բացատրել պատմական մատերիալիզմի չկայացած դրույթով. հասարակական և անհատական գիտակցությունը ետ է մնում պատմական իրադարձությունների դինամիկայից կամ կորցնում է կապը օբյեկտիվ ռեալության հետ: Սովորական հետխորհրդային մարդը սկսում էր հետզհետե իրեն զգալ ինչպես ավազահատիկ համակված օրախնդիր հոգսերով ու տազնապներով, նա դրամատիկական սրությամբ էր զգում իր գոյության ողջ հիմնախախտվածությունն ու հոգեկան դատարկությունը, սոցիալական կյանքի, փոփոխվող արժեքների սնանկությունը հետխորհրդային հասարակություններում, այդ թվում Յայաստանում, սոցիալական պետության փոխարեն ձևավորվեց «վայրենաբարո կապիտալիզմ», որն իրականություն դարձրեց կապիտալի նախասկզբնական կուտակման հարստացման ձևերը: Ինքնավար ու պատասխանատու անհատի ազատական գաղափարը նենգափոխվեց վայրենաբարո անհատապաշտությամբ՝ դրան բնորոշ անսահման ընչաքաղցություն և տնտեսական ռացիոնալության բացակայություն:

Բռնությունը՝ որպես սոցիալ-իրավական երևույթ, հատկապես

---

դեկտեմբերի 10-ին) և Արժրուն Մարգարյանի սպանությունը (1999թ. փետրվարի 9-ին), իսկ ամենասարսափելին 1999թ. հոկտեմբերի 27-ի սպանող, որին զոհ գնացին՝ ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը, Աժ նախագահ Կարեն Դեմիրճյանը և վեց պատգամավորներ:

<sup>23</sup> Մանրամասն տե՛ս **Аветисян С.С.** Правовые основы обеспечения безопасности человека в условиях глобализации (уголовно-правовые, криминологические, уголовно-исполнительные аспекты). Ереван, 2010, Նույնի՝ Проблемы разграничения преступного от не преступного поведения (теория и практика уголовно-правового обеспечения безопасности человека). Ереван, 2011. Նույնի՝ Проблемы уголовно-правовой охраны личности общества у государства. Избранные труды. Ереван, 2016:



«ծաղկում է», այսպես կոչված, անցումային կամ փոխակերպվող հասարակարգում, ինչպիսիք հանդիսանում են հետխորհրդային հասարակությունները, այդ թվում նաև Հայաստանի հասարակությունը: Հետագոտությունները ցույց են տալիս, որ բռնությամբ կատարված հանցագործությունների հետևանքով յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում զոհվում են 298-ից մինչև 415 մարդ<sup>24</sup>:

Խորհրդային-կոմունիստական համակարգի փլուզումից հետո առաջացած միանգամայն նոր պատմական իրողությունը, որում հայտնվեց հայկական պետությունը, նրան առաջադրվեց մի ամբողջ շարք բախտորոշ մարտահրավերներ: Երկիրն ու հասարակությունը կտրուկ ներքաշվեցին արմատական վերափոխումների և դրան հաջորդած իրադարձությունների հորձանուտի մեջ<sup>25</sup>:

Արդի դարաշրջանի հայկական փոխակերպվող հասարակությունում ձևավորվել է, այսպես կոչված «նորարարության» ոգով տոգորված օտարված սոցիալական անհատի այն տիպը<sup>26</sup>, որը համոզված է, թե հանուն նպատակի թույլատրելի են բոլոր միջոցները, ներառյալ անօրինականը և հանցավորը (ընդհուպ մինչև սպանությունները): Նրանց գործունեությունն ամբողջովին հենվում է «նպատակը արդարացնում է միջոցը» մաքիավելիզմի սկզբունքի վրա: Նպատակը «սրբագործում» է նաև դրան հասնելու միջոցները:

Այս պայմաններում «առավել կարևորվում է հանցավոր ոտնձգություններից մարդու և քաղաքացու, հասարակության և պետության իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, հանցավոր ոտնձգություններից հասարակական կարգի և անվտանգության պաշտպանումը»<sup>27</sup>:

<sup>24</sup> **Առաքելյան Ս.Վ.** Բռնությամբ կատարվող հանցագործությունները Հայաստանի Հանրապետությունում: Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական ասքիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2014, էջ 3:

<sup>25</sup> Մանրամասն տե՛ս **Գևորգ Պողոսյան**, Հայ հասարակությունը XXI դարասկզբին: Երևան, 2006, էջ 5-11:

<sup>26</sup> Տե՛ս **Հարությունյան Ս.Ա.** Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փլի իսոփայությունը: Երևան, 2014, էջ 351:

<sup>27</sup> Տե՛ս **Հովսեփյան Ա.Գ.** Դատախազական գործունեությունը և խուլիզմանության դեմ պայքարի հիմնախնդիրները (պատմատեսական և քրեաիրավական վերլուծություն): Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի շնորհման ատենախոսություն: Երևան, 2005, էջ 3-4: Նաև՝ **Խաչատրյան Ա.Մ.** Հայաստանի Հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն պատժի նպատակներից է «սոցիալական արդարության» վերականգնումը (ՀՀ քր. օր.-ի 48 հոդվածի 2-րդ կետ):

Այս առումով Հայաստանում բնակչության մեծամասնության արժեքային կողմնորոշումների աստիճանակարգում սոցիալական արդարությունը ունի կարևոր, հանգուցային նշանակություն: Արժեքային կոնֆլիկտը, որը պառակտել է հասարակությունը, վաղուց փոխակերպվել է փոքրամասնության կողմից՝ ըստվերջինիս պատկերի:

Այդ կոնֆլիկտը, որ Հայաստանում առաջացել է բարեփոխումների հետևանքով, հարուցվում է ոչ միայն բուն ապրելակերպի փոփոխման, այլև հասարակության և պետության կողմից հաստատված նոր նորմերի պատճառով, նորմեր, որոնք մարդկանց մեծամասնությունը չի կարող ընդունել և իրենց աշխարհայացքի, ինչպես նաև այն պատճառով, որ դրանք անմիջականորեն ուղղված են և՛ անձամբ իրենց և՛ իրենց մերձավորների դեմ:

Ցանկացած պետությունում ճգնաժամային երևույթների ահազանցման պատճառով մարդկանց սոցիալական ինքնագագոզություն մեջ գերիշխում է սոցիալական անարդարության և խոցված արժանապատվության զգացումը. Այն վկայում է հակաճգնաժամային միջոցառումների և, առհասարակ, վարչակարգի ներքին քաղաքականության ոչ լեգիտիմության մասին, ինչն է՛լ ավելի է խորացնում իշխանություն-հասարակություն փոխօտարվածությունը: Յուրաքանչյուր երկրի իշխանության հակաճգնաժամային քաղաքականության նկատմամբ խորացող հասարակական անվստահությունը հարցականի տակ է դնում այդ քաղաքականության նպատակահարմարությունը: Մենք հավասարության նշան ենք դնում անարդարության, իշխանության ոչ լեգիտիմության և օտարվածության միջև:

Անարդարությունը սերտորեն միահյուսված է սոցիալական սուբյեկտի (անհատի, խմբի) ապրումների համատեքստում, ուստի և իրական անհատի, սոցիալական խմբի օտարվածությունը

---

մշակման հիմնախնդիրները: Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2012, էջ 4-5:

իշխանությունն ից ներկայանում է որպես իշխանության ոչ  
լեգիտիմության և դրա զգացման միասնությունն: Իշխանության ոչ  
արդյունավետ գործունեության, անարդարության մեջ կարելի է  
հայտնաբերել սոցիալական իրավիճակի հոլյազերի,  
ցանկությունների, շահերի, արժեքների և ինքնագնահատման կնիքը:  
Շարքային մարդու ինքնագագողության վրա մեծապես ազդում է  
տագնապալի սոցիալական իրադրության և կենսական անցանկալի  
հանգամանքների վրա ինչ-որ ձևով ներգործելու անհնարինության  
զգացումը: Այն սերտորեն կապված է անարդարության զգացման հետ.  
դրանց զուգորդումը հիրավի մի «շառաչուն տագնապ» է, որը ներսից  
քայքայում է բազմաթիվ անհատների հոգեկան և ֆիզիկական  
առողջությունը: Չէ՞ որ ապրել անարդարության մշտական  
զգացողությամբ և իրադրությունը փոխելու անհնարինության  
գիտակցությամբ նշանակում է հայտնվել ամենօրյա սթրեսի՝ դրա  
հետևանքներով խիստ տագնապահոլյա վիճակում: Այդ հոգեվիճակը  
սոսկ մարդկային կյանքի հատվածային խաթարումների կամ  
մասնավոր հակասությունների հետևանքը չէ. խոսքը  
կենսաապահովման ոլորտի ողջ կառուցվածքի խոր անարդարության  
մասին է, որը տարեցտարի վերարտադրվում է աշխարհում:

Ժողովրդավարությունը, արդարությունը և  
հայրենասիրությունը՝ սոցիալական կապիտալ, իշխանության  
առանձնահատուկ ռեսուրս են, որոնք ոչ միայն ապահովում են  
իշխանության լեգիտիմությունը, այլ և հասարակության գաղափարա-  
քաղաքական և բարոյական համախմբումը, ազգային կոնսենսուսի  
ընդլայնումը՝ ավանդական, այնպես էլ նոր արժեքների յուրացման  
հիման վրա: Պետության ազգային-ժողովրդավարական  
արդիականացման նախագծի մեջ արդարությունն անխուսափելիորեն  
պետք է դառնա բոլոր սոցիալական միջոցառումների  
արդյունավետության կարևորագույն չափանիշը: Դրան  
համապատասխան՝ պետք է իրագործվի այն ինստիտուցիոնալ մե-  
խանիզմների ընտրությունը, որոնք ներառվելու են  
արդիականացման նոր նախագծի մեջ:

Անցած 25 տարիների ընթացքում մեզանում որոշակիորեն փոխ-  
վել են արդարության մասին բնակչության տարբեր խավերի

հիմնարար պատկերացումները: Այսօր հետխորհրդային ժամանակաշրջանում այլևս անհնար է արդարության նկատմամբ նախկին համայնավարական, հավասարարական և պատերնալիստական մոտեցումը: Սոցիալական արդարության հրատապության վերաբերյալ տավորումը չի նշանակում վերադարձ խորհրդային հավասարությանը, առավել ևս՝ «բռնատիրվածը խլելու և վերաբաժանելու» ամբոխավարական գաղափարախոսությանը: Հայ ժողովրդի համար անընդունելի է ինչպես խորհրդային հավասարության, այնպես էլ լիբերալ, ազատական մոտեցումը: Վերջինս կապված է ինտելիգենտ-սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավունքների ձևական հավասարության հետ, գործնականում չի շոշափում դրանց իրականացման փաստական պայմանները: Ներկայումս, երբ հետխորհրդային ժամանակաշրջանում, տարբեր դասակարգերի, խմբերի և անհատական ու սոցիալական կազմավորումների միջև առաջացել են վիթխարի խզումներ, երբ բյուրոկրատիան ամբողջովին սերտաճել է օլիգարխիկ կապիտալին, որի բազմաբովանդակ կոռուպցիոնական շնորհիվ մոռացության են տրվել պետության և ժողովրդի առաջնային կենսական շահերը, պարզապես, անմտության կլինելու կոռուպցիոնական անհատական ընտրությանն ու համապատասխանաբար՝ շուկայի ամբողջական արդյունավետությանը: Հավելենք ասվածին և այն, որ հետխորհրդային Հայաստանում ձևավորվել, գործառվում և զարգանում է օլիգարխիկ կապիտալիզմի առանձնահատուկ «հայրենակալվածքային» տեսակը կամ որ նույնն է՝ «նորավատափրական» կապիտալիզմը: Այն էապես սահմանափակում է Հայաստանի տնտեսական և քաղաքական համակարգի ժողովրդավարացման, սոցիալական արդարության նոր սկզբունքների հաստատման հնարավորությունները: Ազգային պետության պակասությունն ամենօրյա հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում ավելի ու ավելի մեծ չափով լրացվում է ոչ պաշտոնական, ոչ ֆորմալ պարտավորությունների ցանցերով: Ռացիոնալ ընտրության և վճիռներ կայացնելու կապիտալիստական սկզբունքների փոխարեն շատ շատերի մոտ զարգացվում ու կատարելագործվում է սեփական հայրենակիցներին

անարդար և անբարո հնարքներով շրջանցելու - «զցելու», ստորաց-  
նելու, ամենատարբեր մեքենայ ու թյուկների դիմելու «ավատատիրա-  
կան բնագոյր» և նենգորեն խարդավանելու «արվեստը»<sup>28</sup>:

Ներկայումս դրա հետևանքով, փաստորեն, ստեղծվել է այնպիսի  
տագնապալի իրավիճակ, երբ հայ հասարակության սոցիալական ու  
բարոյահոգեբանական առողջացումը չի կարող տեղի ունենալ ո՛չ  
արդարության մասին խորհրդային պատկերացումների, ո՛չ էլ ներկա  
բարձիթողի «շուկայական իրավունքի» կիրառումով: Ակներև է, որ  
անհրաժեշտ է նոր մոտեցում սոցիալական արդարության նկատմամբ,  
որը բուրիս, այդ թվում և ամենափոքր սոցիալական խմբերին  
հնարավորություն կընձեռի լսելի ու ներառված լինել հայկական  
պետության և հասարակության կառավարման գործընթացների մեջ,  
վստահ լինել, որ արդի Հայաստանում չեն լինելու իրավագուրկ և  
անպաշտպան մարդիկ, որ ազատությունն ու արդարությունն, ի  
վերջո, մատչելի է դառնալու յուրաքանչյուր հայ մարդու համար:

Հայ հասարակությունը պատրաստ է արդարության, «արդար  
զարգացման» նոր ըմբռնմանը: Այն պետք է հենվի ազգային և սո-  
ցիալական համերաշխության, անապահով խավերին երաշխիքներ  
տրամադրելու, հայ հասարակության ակտիվ և ձեռներեց հատվածին  
պետական արգասաբեր աջակցություն ցույց տալու և մեծահա-  
րուստների պատասխանատվությունը հայ հասարակության առաջ  
բարձրացնելու սկզբունքների վրա: Առանց դրանց անհնար է հայ  
հասարակության և ժողովրդի համախմբումը, տարբեր խմբերի և  
դասակարգերի միջև սոցիալական ու ազգային համերաշխության  
հաստատումը, առանց որի Հայաստանը չունի զարգացման և պատմական  
մարտահրավերներին արժանի պատասխան տալու որևէ  
հնարավորություն:

Այսօր Հայաստանում դեռևս անբավարար է գիտակցվում պետական  
կառավարման բովանդակության վերափոխման անհրաժեշտությունը:  
Այն թելադրում է նույնիսկ ոչ այնքան երկրի հնարավոր ազգային-  
ժողովրդավարական արդիականացման պահանջներով, որքան  
ծայրաստիճան սոցիալական անհավասարության և աղաղակող  
անարդարությունների մեղմացման գործում արագ աճող դժվա-

<sup>28</sup> Տե՛ս **Հարունյան Մ.Ա.** Հայաստանի արդիականացման ինստիտուցիոնալ  
խոչընդոտները, «ՎԷՄ», 2012, հունվար-մարտ, թիվ 1 (37), էջ 90-91:

րու թյուր ներուժ: Գաղափարախոսական ճնշումը, կառավարման մեթոդների ավտորիտար ու թյուր նը կառավարման պետական համակարգն ապավարժեցրել են պրոբլեմային հստակ մոտեցումից:

Նման պայմաններում սոցիալական կառավարումը դառնում է հիմնականում անբովանդակ: Սակայն առավել վատն այն է, որ կյանքից սկզբնական կտրվածությունը բազմակի չափերով ու ժեղացվում է կեղծ հակադարձ կապերով, երբ հաշվետվությունն անխուսափելիորեն հարմարեցվում է թելադրողի պահանջներին: Մեծահարուստները կարծես բոլորովին կորցրել են պատկերացումը սոցիալական հավասարության և անարդարության իրական վիճակի մասին:

Եթե հաջողվի վերակառուցել հայկական պետության և քաղաքացիական հասարակության հարաբերությունները, փոփոխել կյանքի որակը և բովանդակությունը, ապա ազգային-ժողովրդավարական արդիականացման մյուս բոլոր հարցերը անհամեմատաբար ի դյուրին կերպով հնարավոր կլինի լուծել: Ամբողջ խնդիրն այն է, թե արդյոք մենք կկարողանա՞նք իմաստավորված կերպով լուծել սոցիալական արդարությանն առնչվող պրոբլեմները, ազատվել լիբերալ իզմի խելացնորությունից, որը հանգեցնում է սոցիալական անհավասարության աննախադեպ աճին՝ մատաղ սերնդին զրկելով սոցիալական հեռանկարներից: Եթե դա հաջողվի, ապա կարելի է կառուցել սոցիալական քաղաքականության առաջնահերթությունները, որոնք համապատասխանում են Յայաստանի և հայ ժողովրդի պահպանման ու վերարտադրության մերօրյա հրամայականներին, արդարության նրա ավանդույթներին, ուղղաձիգ շարժունություն նրա շարունակական ձգտումներին:

Սոցիալական լարվածության նման պայմաններում հասարակության մարգինալ (սոցիալապես և բարոյական առումով) տարրերը՝ իրենց ապօրինի և հանցավոր արարքները փորձում են «հիմնավորել» սոցիալական արդարության վերականգնման պահանջով, օրինակ, 1999թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում կազմակերպված սպանդի հեղինակները:

Իհարկե նման «հիմնավորումները» որևէ կերպ չեն տեղավորվում առողջ բանականության շրջանակներում, առավել ևս

ցանկացած հանցագործության, այդ թվում՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության «արդարացման հիմնավորումները»:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ հասարակության ունում սոցիալական արդարության բացակայումը և դրա խեղաթյուրումը, զգալի ազդեցություն ունի քրեածին մթնոլորտի ձևավորման գործում, որից էլ «օգտվում են» մարգինալ տարրերը և հանցավոր խմբերը:

Այս առումով, հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղություններից է նաև սոցիալական լարվածության թուլացումը և սոցիալական արդարության պահպանումը<sup>29</sup> և, ընդհանրապես՝ հանցավորության դեմ պայքարի պետական իրավական և դատական քաղաքականության մշակումը և անշեղ իրականացումը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը, կարելի է եզրակացնել, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սոցիալ-քաղաքական նախադրյալներն են.

– անցումային հասարակությունում տիրող բարդ ու հակասական զարգացումները սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում (այսպես կոչված՝ սոցիալական լարվածությունը).

– հասարակությունում նոր ձևավորվող իրավական, տնտեսական և սոցիալական համակարգերի բարդ գործընթացը և դրանցում հաճախակի կրկնվող սխալները և բացթողումները.

– հասարակությունում «սոցիալական արդարության» բացակայությունը և դրա խեղաթյուրումը.

– ոչ արդյունավետ կառավարումը և կոռուպցիան հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Թվարկված և չթվարկված նախադրյալները ուղղակի կամ անուղղակիորեն նպաստում են հասարակության մեջ սոցիալ-քաղաքական լարվածության առաջացմանը և նմանատիպ հանցագործությունների կատարմանը:

<sup>29</sup> Մանրամասն տե՛ս **Խաչատրյան Ա.Ս.** Հայաստանի Հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության մշակման հիմնախնդիրները: Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2012: **Ղամբարյան Ա.Ս.** Դատական քաղաքականությանը Հայաստանի Հանրապետությունում (համեմատական և մեթոդաբանական հիմնախնդիրներ): Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2012:

## ԳԼՈՒԽ 2

### ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄ ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### **2.1 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն օբյեկտիվ հատկանիշները**

Քրեական իրավունքի տեսության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել այն կարծիքը, համաձայն որի հանցագործության օբյեկտ են համարվում հասարակական հարաբերությունները<sup>30</sup>: Ընդ որում, հանցագործության օբյեկտ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնց դեմ ուղղվում և որոնց վնաս են հասցնում հանցագործությունները:

Գրեթե հարյուր տարի առաջ հանցագործության օբյեկտի հետ կապված Ն.Ս. Տազնացևը գրել է. «Նորմի կենսական դրսևորումը կարող է լինել միայն այն, ինչը հանգեցնում է դրա առաջացմանը, ապահովում է բովանդակությունը, և ծառայում է որպես արդարացում. դա կյանքն է, մարդկային համակեցության բնականոն գործառնությունը, այս արտահայտությունը օգտագործելով հավաքական իմաստով, ինչի շրջանակներում ապահովում է առանձին մարդու, հասարակության, պետության և ողջ մարդկության կենսակերպը՝ դրա ֆիզիկական, մտավոր և բարոյական առումներով»:<sup>31</sup>

Հասարակական կյանքն իր անհատական և հասարակական

<sup>30</sup>Տե՛ս **Аветисян С.С.** Приоритеты и перспективы нового Уголовного кодекса Республики Армения (социально-правовая концепция). Ереван, 2012, էջ 94-95:

<sup>31</sup>Տե՛ս **Таганцев Н.С.** Уголовное Уложение 17 марта 1903г. СПб., 1904, էջ 3; Նույնի՝ Уголовное Уложение с изложением рассуждений, на коих оно основано. СПб., 1910, էջ 54:



դրսևորումներով ստեղծում է շահեր և առաջացնում է դրանց իրավապաշտպանությունը, ինչի շնորհիվ այդ շահերը ձեռք են բերում հստակ իմաստ և կառուցվածք, ընդգրկվում են իրավաբանական բարիքների նշանակության մեջ և, որպես այդպիսին, իրավաբանական նորմերին տալիս են բովանդակություն, միևնույն ժամանակ ծառայելով դրանց կենսական դրսևորումներին:

Ընդ որում, կենսական շահը վերածելով իրավական բարիքի, իրավունքը ոչ միայն ճանաչում է այդ շահերի եղելությունը, այլ նաև ապահովում է շահերի պաշտպանությունն ու պահպանությունը, ինչպես նաև մեկնաբանում է դրա մասնավոր, անհատական խառնվածքը՝ տալով սոցիալական, հասարակական նշանակություն: Այսպիսով, «իրավունքի նորմի խախտումը իր իրավական բնույթով, հենց ոտնձգություն է կենսական շահերի իրավապաշտպանության, իրավական բարիքի նկատմամբ»<sup>32</sup>:

Հանցագործության օբյեկտ ասելով հասկանում ենք այն հասարակական արժեքները, որոնք դիտարկվում են որպես իրավունքով պաշտպանվող հասարակական հարաբերություն: «Ցանկացած հասարակական հարաբերությունների հիմքում, այդ թվում այնպիսի հարաբերությունների, որոնք վերցված են քրեաիրավական պաշտպանության ներքո, և դրանց հիմքում ընկած են որոշակի շահեր (անձի, հասարակության կամ պետության) կամ էլ իրավական բարիքներ, այսինքն՝ նույն օրենքով պաշտպանվող շահեր: Կարգավորվելով իրավական նորմերով՝ հասարակական հարաբերությունները լրացվում են իրավական թաղանթով, այսինքն՝ իրավահարաբերություններով: Այդ պատճառով հանցագործությամբ խախտվում է, և՛ հասարակական հարաբերությունները, և՛ քրեաիրավական նորմը»<sup>33</sup>:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանը. «Հանցագործության օբյեկտի սահմանման դեպքում պետք է բնութագրվեն պարտադիր և լրացուցիչ հատկանիշները, որոնք նախատեսված են և բխում են քրեական օրենսգրքից», ինչպես նաև

<sup>32</sup> Ст'у Курс уголовного права Том 1. Общая часть., Учение о преступлении /Под. ред. Н.Ф.Кузнецовой и И.М. Тяжковой, М., 2000, էջ 209-210:

<sup>33</sup> Ст'у Уголовное право России. Общая часть: Учебник для вузов/, Под. ред. Ф.Р. Сундурова-Казань: 2003, էջ 153:

պետք է «հետևել տեսությանը, որի համաձայն հանցագործության օբյեկտը պետք է ճանաչվի. 1) Քրեական օրենսգրքով պաշտպանվող սոցիալական արժեքները և 2) դրանց ապահովման հարաբերությունները»<sup>34</sup>:

Հարկ է նշել, որ հասարակական հարաբերությունները, որոնք հանդես են գալիս որպես հանցագործության օբյեկտ, ելակետ են քրեական օրենքի և հանցագործության նկատմամբ: Հանցանք գործելով՝ հանցագործը ոտնձգում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների նկատմամբ: Արդարացի է Վ.Յու. Տուկցիայի դատողությունն այն մասին, որ «հանցավոր ոտնձգության հետևանքով իրական վնաս է հասցվում ոչ միայն պաշտպանվող հասարակական հարաբերություններին, այլև, իրենց հերթին, ծագում են նոր, քրեաիրավական հարաբերություններ: Այդ հարաբերությունները ձևավորվում են արդեն հանցագործություն կատարած անձի և պետության միջև՝ կապված հանցագործության հետ:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը երկօբյեկտ հանգագործություն է. հանցագործության օբյեկտ են հանդիսանում ՀՀ սահմանադրական կարգը, քաղաքական համակարգը, ինչպես նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքը:

Պետական մարմինների պահպանման և հասարակության բնականոն զարգացման համար անչափ կարևոր է պետական իշխանության անվտանգության ապահովումը: Վ.Ս. Կոմիսարովն առանձնացնում է երկու կարևոր դրույթներ, որոնք կազմում են անվտանգության էությունը<sup>35</sup>:

Նախ անվտանգությունը որոշվում է որպես սոցիալական երևույթ՝ իրեն բնորոշ հատկություններով, և երկրորդ, այն ընկալվում է որպես կարևոր սոցիալական բարիք, որի պահպանության համար պետությունն ու հասարակությունը

<sup>34</sup> Տե՛ս **Аветисян А.А.** Приоритеты и перспективы нового Уголовного кодекса Республики Армения (социально-правовая концепция). Ереван, 2012, էջ 95; Նույնի՝ Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016:

<sup>35</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу РФ (постатейный), /**В.К. Дуюнов** и др., Отв. ред. **Л.Л. Кругликов**-М.: Волтере Клувер, 2005, էջ 351:

ձեռնարկում է բազմաթիվ միջոցներ<sup>36</sup>:

Ինչպես նկատում ենք, անվտանգությունը նույնպես բարդ երևույթ է, և նրա բոլոր շերտերում և հարթություններում բացառվում է վտանգը, իսկ համապատասխան սուբյեկտների շահերն էլ պաշտպանված են: Հիմնավորված է թվում այն տեսակետը, ըստ որի անվտանգությունը ունի զարգացման միտում<sup>37</sup>:

Եթե ընդհանրացնենք, ապա կտեսնենք, որ անվտանգությունը սուբյեկտի այն վիճակն է (դինամիկ, զարգացող վիճակ), երբ այս կամ այն գործոնն այլևս բացասաբար չի ազդում նրա գոյատևման վրա, վիճակ, երբ պաշտպանական մեթոդների և մեխանիզմների ապահովմանը հնարավորություն է տալիս հաջողությամբ դիմակայել անձի, հասարակության և պետության շահերին ուղղված ցանկացած ոտնձգությունը<sup>38</sup>:

Անվտանգության օբյեկտը, այսինքն այն արժեքը, որը չպաշտպանելու պայմաններում առկա է վտանգը՝ անհատն է (նրա իրավունքներն ու ազատությունները), հասարակությունը (դրանում առկա նյութական և հոգևոր արժեքները) և պետությունը (ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը և այլն): Անվտանգության ապահովումը, ամենից առաջ, բխում է անհատի, հասարակության և պետության շահերից և պահանջմունքներից, հետևաբար վերոնշյալ սուբյեկտները միաժամանակ և առանձին վերցված ձգտում են անվտանգության: Եվ քանի որ նշված երեք սուբյեկտները ձգտում են անվտանգության, ուստի դրանք էլ ցանկանում են ապահովել այդ վիճակը՝ դրանով իսկ անվտանգության օբյեկտից միաժամանակ վերածվելով անվտանգության սուբյեկտի:

Վ.Ա. Կոմիսարովն, ով հավաստում էր, որ որպես հասարակության սոցիալական արժեք, անվտանգությունն իրենից ներկայացնում է զգալի թվով տարբեր սուբյեկտների գործունեություն, իսկ որպես որոշակի սոցիալական պահանջմունք՝ այն համարվում է այդ գործունեության նպատակաուղղված իրականացում:

<sup>36</sup> Տե՛ս **Комиссаров В.С.**, Преступления, нарушающие общие правила безопасности: Понятие, система, общая характеристика: дис. д-ра юрид. наук: М., 1997, էջ 16-17:

<sup>37</sup> Տե՛ս **Седых А.В.** "Посягательство на жизнь государственного или общественного деятеля по уголовному праву Российской Федерации. Диссертация канд. юрид. наук. Казань, 2007, էջ 45:

<sup>38</sup> Տե՛ս **Սեդրակյան Ա.** Իրավունք և անվտանգություն: Երևան, 2015, էջ 16-17:

Անվտանգությունը հանդիսանում է անձի, հասարակության և պետության գոյության համար պարտադիր պայման և ապահովում է այդ տարրերի հետագա առաջադիմական զարգացման հնարավորության երաշխիքները:

«Բովանդակային տեսանկյունից, - գրում է Վ.Ս. Կոմիսարովը, - անվտանգությունը որպես սոցիալական արժեք բնութագրում է անձի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանությունը սոցիալական, բնական կամ տեխնիկական բնույթի բացասական հետևանքներից, ինչպես նաև այդ պաշտպանվածության այնպիսի մակարդակի պահպանությամբ, որը համարվում է բավարար այդ տարրերի բնական գործելակերպի համար»<sup>39</sup>:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության ժամանակ հիմնական օբյեկտը կարելի է վնասել միայն լրացուցիչ օբյեկտի վնասման պայմանով, այն է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությամբ<sup>40</sup>:

Այն հանգամանքը, որ քրեական օրենսգրքում առկա են իրավական նորմեր, որոնք պատասխանատվություն են նախատեսում առանձին կատեգորիայի մարդկանց կյանքի նկատմամբ ոտնձգելու համար, չի կարող հերքել յուրաքանչյուր մարդկային կյանքի հավասար պաշտպանվածության սկզբունքը: Այս դեպքում պատասխանատվության խտացումը կապված է ոչ թե տուժածի կյանքի գերազնահատմամբ, այլև միաժամանակ այլ օբյեկտի նկատմամբ ոտնձգության առկայությամբ:

Հանցագործության օբյեկտիվ կողմը որոշակի պայմաններում, տեղում և ժամանակահատվածում ընթացող և քրեաիրավական պաշտպանության համապատասխան օբյեկտներին վնաս պատճառող հանրորեն վտանգավոր ոտնձգության արտաքին դրսևորումն է:

Յուրաքանչյուր հանցագործության օբյեկտիվ կողմը բնորոշում են օրենքով պաշտպանվող օբյեկտի նկատմամբ ոտնձգության արտաքին ձևերը, որոնք արտահայտում են սուբյեկտի նպատակներն ու մտադրությունները: Դրա հետ կապված Վ.Ն. Կուդրյավցևը նշում է. «Մարդկային արարքը օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների միասնությունն է: Միևնույն ժամանակ

<sup>39</sup> Տե՛ս Комиссаров В.С., **Նույն տեղում, էջ 18-19:**

<sup>40</sup> Տե՛ս Седых А.В. Նշվ. աշխ., էջ 58:

և՛ օբյեկտիվ է, և՛ սուբյեկտիվ, քանի որ իրենից ներկայացնում է մարդկային անհատականության ներքին հատկանիշների դրսևորում և դրա հետ միասին ծառայում է որպես մարդու և արտաքին իրականության փոխներգործության ձև»<sup>41</sup>:

Հանցագործության օբյեկտիվ կողմը քրեական պատասխանատվության անհրաժեշտ և կարևոր նախադրյալ է, յուրօրինակ մի հիմք, առանց որի հանցագործությունն ընդհանրապես չի կարող գոյություն ունենալ, բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության նախապատրաստության ժամանակ:

Ցանկացած կոնկրետ հանցագործություն ունի անհատականացման բազմաթիվ հատկանիշներ, այդ թվում նաև օբյեկտիվ կողմի առանձնահատկություններ: Յուրաքանչյուր հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշները բնութագրում են սուբյեկտի արարքը (գործողություն կամ անգործություն), այդ արարքով հասցված վնասը և արտաքին այն պայմանները, որոնց առկայությամբ իրականացվել է հանրորեն վտանգավոր ոտնձգությունը:

Ինչ վերաբերում է կոնկրետ հանցակազմի օբյեկտիվ կողմին, ապա վերջինս ներառում է օրենսդրությամբ սահմանված խիստ որոշակի այնպիսի հատկանիշներ, որոնք նկարագրում են տվյալ, հանցագործության օբյեկտիվ կողմը: Հետևաբար հանցակազմի օբյեկտիվ կողմը քրեական օրենքով սահմանված որոշակի հանցագործության այնպիսի հատկանիշների համակցություն է, որոնք բնութագրում են կոնկրետ հանցավոր ոտնձգության կատարման արտաքին գործընթացը:

Ինչպես նշում է Ա. Տրայնինը. «Յուրաքանչյուր դիսարգիցիա իրենից ներկայացնում է հատկանիշների համակցություն, որը բնութագրում է հանցագործության օբյեկտիվ կողմը»<sup>42</sup>:

Այսպիսով, երբ խոսվում է կոնկրետ հանցագործության մասին, ապա դրա օբյեկտիվ հատկանիշների ողջ ծավալը չի կարելի նույնացնել հանցակազմի օբյեկտիվ կողմի հետ: Վերջինս

<sup>41</sup> Տե՛ս **Кудрявцев В.Н.**, Объективная сторона преступления. - М., 1976, էջ 11-12; Տե՛ս նաև **Козлов А.П.** Понятие преступления. СПб., 2014, էջ 197-198:

<sup>42</sup> Տե՛ս **Траинин А.** Учение о преступлениях. М., 1946, էջ 77-78:

պարու նակում է միայն այնպիսի հատկանիշներ, որոնք բավարար են՝ ա) արարքի հանրային վտանգավորությունը նկարագրելու, բ) այլ հանցակազմերից սահմանազատելու, այսինքն՝ անհատականացնելու համար:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունը դասվում է այն հանցագործությունների շարքին, որոնք ունեն նյութական հանցակազմ: Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 305 հոդվածի՝ հանցագործության օբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ գործողության վերջնական պահը պայմանավորված է նշված հոդվածի դիսպոզիցիայում դրանկարագրությամբ: Այն է՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչին կյանքից զրկելը: Օրենսդիրը մատնանշել է՝ «հետևանքների վրա հասնելը որպես անհրաժեշտ և պարտադիր հիմք՝ հանցագործության ավարտման համար» պարտադիր համարելով հետևանքի առաջացումը:

Հանրորեն վտանգավոր վարքագծի արտաքին դրսևորումը բնութագրելիս, օրենսդիրը օգտագործում է «արարք» տերմինը, որը ներառում է այդ վարքագծի արտաքին դրսևորմամբ իրարից տարբերվող հետևյալ երկու ձևերը՝ գործողությունը և անգործությունը:

Նշենք նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիաներում օրենսդիրը առավել հաճախ մատնանշում է հենց հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշները: Այս հանգամանքը ևս վկայում է քրեական պատասխանատվության և հանցակազմի կառուցման համար հանցագործության օբյեկտիվ կողմի բացահայտման կարևորության մասին:

Վ.Ն. Կուդրյավցևը հանցագործության օբյեկտիվ կողմը բնորոշում է որպես հանրավտանգ և հակաիրավական գործողություն, որը դիտարկում է դրա արտաքին կողմից այն իրադարձությունների և երևույթների հաջորդական զարգացման տեսանկյունից, որոնք սկսվում են հանցավոր արարքից և ավարտվում են հանցավոր հետևանքով<sup>43</sup>:

Նշենք նաև, որ հանցագործության օբյեկտիվ կողմի

<sup>43</sup> Տե՛ս Кудрявцев В.Н., **Նույն տեղում, էջ 11-12:**

հատկանիշները ոչ միշտ են ունենում միևնույն քրեաիրավական նշանակությունը:

Մասնագիտական գրականության մեջ բոլոր այդ հատկանիշները բաժանվում են երկու խմբի՝ պարտադիր (հիմնական) և ֆակուլտատիվ (լրացուցիչ)<sup>44</sup>: Առաջինները օրենսդրի կողմից միշտ ուղակիորեն նշվում են կոնկրետ հանցակազմերում, քանի որ անմիջականորեն ազդում են արարքի քրեաիրավական որակման վրա: Մյուսները հաշվի են առնվում միայն այն դեպքերում, երբ էական ազդեցություն են ունենում արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա: Այս իմաստով, գրեթե բոլոր քրեագետները հանցագործության կատարման եղանակը, տեղը, ժամանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները դասում են օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշների թվին: Ինչ վերաբերում է մյուս հատկանիշներին, ապա դրանց վերաբերյալ գիտնականների կարծիքները տարբերվում են:

Վ.Բ. Մալինինը, գրում էր. «հանցագործությունը գործողությունն է, որը սերտկապի մեջ է գտնվում տարածության և ժամանակի հետ, ընդգրկում է մարդու վարքագիծը, մարդու կողմից շարժի բերված բռնության ուժերի գործողությունները, և արտաքին աշխարհում, և հասարակական հարաբերություններում կատարված փոփոխությունները: Ընդ որում գործողությունը համարվում է մարդու վարքագծի արձանագրությունն, որը պայմանավորված է շրջապատող միջավայրի վրա նրաներգործությամբ»<sup>45</sup>:

Կարելի է առանձնացնել վերոհիշյալ հարցի լուծման շուրջ ձևավորված հետևյալ երկու հիմնական մոտեցումները: Դրանցից առաջինի էությունն այն է, որ օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների թվին են դասվում՝ հանրորեն վտանգավոր արարքը, հանցավոր հետևանքները, ինչպես նաև պատճառական կապը արարքի և հետևանքների միջև (Գ.Ա. Կրիգեր, Մ.Ի. Կովալյով և ուրիշներ): Երկրորդ մոտեցման կողմնակիցների կարծիքով հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է միայն հանցավոր արարքը

<sup>44</sup> Տե՛ս **Бабий Н.А.** Квалификация убийств при отягчающих обстоятельствах. М., 2016, էջ 21-22:

<sup>45</sup> Տե՛ս **Малинин В.Б., Парфенов А.Ф., Объективная сторона преступления - СПб: Изд-во Юрид. инст-та 2004, էջ 51-52:**

(գործողությունները կամ անգործությունները), իսկ մյուս բոլոր հատկանիշները, այդ թվում՝ նաև հետևանքները և պատճառական կապը, պետք է դիտել որպես ֆակուլտատիվ հատկանիշներ (Վ.Ե. Մելնիկովա, Ա.Վ. Նաումով և ուրիշներ):

Այսպիսով, կարող ենք նշել, որ բոլոր հանցակազմերի համար, որպես պարտադիր հատկանիշ կարող է հանդես գալ միայն հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը): Իսկ հանցագործության օբյեկտիվ կողմի մյուս հատկանիշները՝ հանցավոր հետևանքները, պատճառական կապը հանցավոր արարքի և հետևանքի միջև, ինչպես նաև եղանակը, տեղը, ժամանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները, ֆակուլտատիվ են (ոչ պարտադիր):

Վ.Ն. Կուդրյավցևը գրում է, որ վնաս պատճառող որոշ հանցագործությունների կառուցվածքի հիմքում ընկած են գլխավորապես այն դեպքերը, երբ որոշակի գործողության տեղի ունենալու պարագայում հետևանքի վրա հասնելը անխուսափելի է: Այդ հետևանքը կրում է նյութական բնույթ և դրա հաստատումը գործնականում կգուգորդվեր անհաղթահարելի դժվարություններով: «Սակայն այն փաստացիորեն գոյություն ունի, և այն հանգամանքը որ դիսպոզիցիան չի պարունակում վնասակար հետևանքների որևէ հատկանիշ, նույնպես չի վկայում դրա բացակայության մասին, ինչպես հանցագործության օբյեկտի բացակայության մասին չի վկայում այն փաստը, որ օբյեկտը չի նշվում քրեաիրավական նորմերում»<sup>46</sup>:

Ընդ որում, ինչպես արդարացիորեն նշվում է գրականության մեջ՝ «օրենքում հատվածական կազմերում նշվում են ոչ միայն օբյեկտիվ կողմի հատկանիշները, այլև որոշակի վարքագծի հետևանքով հնարավոր վնասն ու սպառնալիքները»<sup>47</sup>:

Նշենք նաև, որ վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքի համար, անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ այդ հետևանքները պատճառական կապի մեջ են գտնվում տվյալ անձի կողմից կատարված

<sup>46</sup> Տե՛ս Кудрявцев В.Н., նույն տեղում, էջ 167:

<sup>47</sup> Տե՛ս Уголовное право России. Общая часть: Учеб. для вузов, /под ред. Ф.Р. Сундурова, М., 2014, էջ 176:



հանրորեն վտանգավոր արարքի՝ գործողության կամ անգործության հետ: Այլ կերպ ասած, պատճառական կապի բացակայության դեպքում վրահասած վտանգավոր հետևանքների համար, որքան էլ ծանր լինեն դրանք, քրեական պատասխանատվությունը բացառվում է: Այսինքն, քրեական իրավունքի սկզբունքային պահանջներից մեկն այն է, որ անձին հանրորեն վտանգավոր հետևանքների համար կարելի է պատասխանատվության ենթարկել միայն այն դեպքում, երբ դրանց առաջացման պատճառը նրա արարքն է:

Տ.Վ. Ծերեթելին շատ դիպուկ և ճիշտ էր ընգծում, որ «պատճառական կապը հաստատում է պատասխանատվության գույտ օբյեկտիվ սահմանը, չի կարելի քննարկել անձի հանրորեն վտանգավորությունը, եթե այդ անձի գործողությունը չի հանգեցրել որևէ հետևանքի»<sup>48</sup>:

Հանրորեն վտանգավոր արարքի և հանցավոր հետևանքի միջև պատճառական կապի առկայության բացահայտումը հնարավորություն է տալիս պատասխանելու հետևյալ կարևորագույն հարցերին, թե ու՞մ արարքն է առաջացրել տվյալ հանցավոր հետևանքը (հետևաբար, թե այն ու՞մ պետք է մեղսագրվի):

Այսպես Վ.Ն. Կուդրյավցևը պատճառական կապը բնորոշում է որպես «երևույթների միջև այնպիսի հարաբերություն, որի դեպքում մեկ կամ մի քանի փոխներգործող երևույթներ (պատճառ) շարունակում է մեկ այլ երևույթ (հետևանք)»<sup>49</sup>:

Պատճառը փիլիսոփայական կատեգորիա է, որը բնության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների և գործընթացների համընդհանուր օբյեկտիվ կապի փոխադարձ կախվածության և պայմանավորվածության ձևերից մեկն է: Պատճառը օրինաչափ մի երևույթ է, որը ներքին անհրաժեշտությամբ առաջացնում է որպես հետևանք դիտարկվող մեկ այլ երևույթ:

Վ.Ն. Նիկիֆորովը նշում է, որ եթե հանցագործության օբյեկտը համարվում է անձի օրենքով ապահովված որոշակի վիճակը, ապա այդ օբյեկտի նկատմամբ ոտնձգության հետևանք է համարվում այս կամ այն գործողության դարարեցումը (օրինակ՝ սպանության դեպքում՝ կյանքի ընթացքը) կամ հայտնի վիճակի խախտումը (օրինակ՝

<sup>48</sup> Տե՛ս **Церетели Т.В.**, Причинная связь в уголовном праве – М, 2004, էջ 173:

<sup>49</sup> Տե՛ս **Кудрявцев В.Н.**, նույն տեղում, էջ 188:

առողջությանը վնաս հասցնելու դեպքում՝ հենց առողջական վիճակը)<sup>50</sup>:

Հանցագործության կատարման համար կարևոր նշանակություն ունենևան գործիքներն ու միջոցները:

Հանցագործության գործիքներն ու միջոցները այն սարքերն ու հարմարանքներն են, որոնց օգնությամբ կատարվել է հանցավոր արարքը:

Հանցավորի կողմից այս կամ այն միջոցի գործածումը կարող է եականորեն ազդել արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա:

Այն դեպքերում, երբ համապատասխան գործիքներն ու միջոցները մեծացնում են հանցագործության հանրային վտանգավորությունը, դրանք օրենսդրի կողմից մտցվում են հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների մեջ:

Հարկ է նշել, որ պետական, կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունների միջոցներն ազգային քրեական օրենսդրությունում կանոնակարգված չեն, քանի որ դրանք կարող են տարբեր լինել, և այդ պատճառով չեն կարող ազդել քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության քրեաիրավական որակման վրա:

## **2.2 Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտիվ հատկանիշները**

Հանցագործությունն անհնար է առանց կատարող անձի: Այդ պատճառով հանցակազմի պարտադիր տարրերից է հանցագործության սուբյեկտը, առանց որի քրեական պատասխանատվությունը բացառվում է<sup>51</sup>: Քրեական օրենքը «հանցագործության սուբյեկտ» հասկացության հետ միաժամանակ օգտագործում է նաև «հանցանք կատարած անձ», «դատապարտյալ» և այլ հասկացությունները: Հանցագործության սուբյեկտն ընդհանուր իմաստով հանցանք կատարած անձն է, այսինքն՝ հանցագործը: «Հանցագործության սուբյեկտը» քրեական իրավունքի գիտության կողմից ուսումնասիրված հասկացությունն է՝ անձ, որը կատարել է քրեական

<sup>50</sup> Տե՛ս **Никифоров В.Н.**, Объект преступления по советскому уголовному праву - М., 1960, էջ 145:

<sup>51</sup> Տե՛ս **Козлов А.П.** Понятие преступления. СПб., 2014, էջ 293-294:

օրենքով արգելված արարք (գործողության կամ անգործության) և որի համար ընդունակ է քրեական պատասխանատվության կրել<sup>52</sup>:

Քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով սահմանված տարիքի:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝

1. Քրեական պատասխանատվության է ենթակա այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը:

2. Այն անձիք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանք կատարելը, ենթական են քրեական պատասխանատվության սպանության (104-108-րդ հոդվածներ), դիտավորությանը առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու (112-116-րդ հոդվածներ), մարդուն առևանգելու (131-րդ հոդված), բռնաբարության (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված), ավազակության (175-րդ հոդված), գողության (117-րդ հոդված), կողոպուտի (176-րդ հոդված), շորթման (182-րդ հոդված), առանց հաիշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու (183-րդ հոդված), ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությանը ոչնչացնելու կամ վնասելու (185-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասեր), զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հաիշտակելու կամ շորթելու (238-րդ հոդված), թմրամիջոցներ կամ հոգեմետնյութեր հաիշտակելու կամ շորթելու (269-րդ հոդված), տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու (246-րդ հոդված), խուլիգանության (258-րդ հոդված) համար:

3. Եթե անձը հասել է սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետմնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր

---

<sup>52</sup>Տե՛ս Российское уголовное право. Общая часть. Под ред. акад. **В.Н. Кудрявцева** и проф. **А.В. Наумова**. М., 1997, էջ 98-99; Уголовное право Российской федерации. Общая часть. Под ред. проф. **Б.В. Здравомыслова**. М., 1999, էջ 122-123; Уголовное право. Общая часть. Отв. ред. **И.Я. Козаченко** и **З.А. Незнамова**. М., 1999, էջ 144-145:

արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության<sup>53</sup>:

Նշենք նաև, որ քրեական իրավունքի տեսության համաձայն՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտ է հանդիսանում 16 տարին լրացած մեղսունակ, ֆիզիկական անձ:

Ուսումնասիրելով քաղաքական սպանությունների պատմությունը՝ բազմիցս հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների սպանությունները կատարվել են հոգեկան շեղումներ ունեցող անձանց կամ անմեղսունակների կողմից: Բազմաթիվ են նաև այնպիսի դեպքերը, երբ հանցագործության սուբյեկտը օգտագործել է երրորդ անձանց՝ մանկահասակների կամ անմեղսունակների:

Նման դեպքերում մանկահասակները կամ անմեղսունակները ճանաչվում են որպես հանցագործությունն իրականացնելու գործիք, կազմակերպիչի կամ սադրիչի ձեռքում<sup>54</sup>:

Նշենք նաև, որ անհրաժեշտ է միմյանցից առանձնացնել «հանցագործության սուբյեկտ» և «հանցագործի անձ» հասկացությունները: Չնայած որ երկուսն էլ վերաբերում են միևնույն անձին՝ հանցանք կատարողին, բայց նրանց բովանդակությունները և ամենակարևորը՝ իրավաբանական (քրեաիրավական նշանակությունը չեն համընկնում): Ինչպես արդեն նշվել է, հանցագործության սուբյեկտն այն հատկանիշների ամբողջությունն է, առանց որի չկա և չի կարող լինել որևէ հանցակազմ (պարտադիր հատկանիշներ), կամ որոշակի հանցակազմ (ոչ պարտադիր հատկանիշներ):

Հանցագործի անձն ավելի լայն հասկացություն է: Այն իր մեջ ընգրկում է մարդկային հատկանիշների բազմազանությունը և բնավորությունը, հակումները, խառնվածքը, կրթությունը և այլն: Հանցագործի անձի ուսումնասիրությամբ է զբաղվում կրիմինալոգիան՝ համադրելով ինչպես հասարակական, այնպես էլ բնական գիտությունների (բժշկություն, կենսաբանություն և

<sup>53</sup> Մանրամասն տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀՊՏ № 25(60) 02.05.03, հոդված 24:

<sup>54</sup> Տե՛ս Курс уголовного права, Том 1. Общая часть: учение о преступлении, /под.ред. Н.Ф. Кузнецовой и И.М. Тяжковой. – М. ИКД, "Зерцало-М" 2002, էջ 406.

այլև) մեթոդաբանությունը: Այսպես, հանցավորի անձը հաշվի է առնվում դատարանի կողմից պատիժ նշանակելիս, քրեական պատժից կամ պատասխանատվությունից ազատելիս, պատիժը պայմանականորեն չկիրառելիս, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս, նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կիրառել ~~իսկայլև~~:

ՏՅոԼ. Մարկովան պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտի քրեական պատասխանատվության տարիքը նվազեցրել է մինչև 14 տարեկան հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հանցակազմերն իրենցից ներկայացնում են սպանության տարատեսակներ ծանրացնող հանգամանքներում<sup>55</sup>:

Նշենք նաև, որ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի սահմանման անհրաժեշտությունը կապված է այդ անձի կողմից իր վարքագծի բնույթն ու սոցիալական նշանակությունը հասկանալու, իր ցանկությունները և մղումները հասարակական պահանջներին, վարքագծի կանոններին համադրելու և քրեական պատասխանատվության իմաստը բազմակողմանի ընդունելու ունակության հետ: Նման ունակությունները ծագում են ոչ թե ծննդյան պահից, այլ զգալիորեն ավելի ուշ՝ մարդու սոցիալական կենսաբանական զարգացմանը զուգընթաց, երբ ձևավորվում է որոշակի իրավական գիտակցություն: Բնականաբար այդ տարիքին հասնելուց հետո միայն անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: ՏՅոԼ. Մարկովան ուշադրություն է դարձնում նաև այն հանգամանքի վրա. «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունը ամենից հաճախ իրականացվում է գաղտնի ու յուրահատուկ եղանակների և միջոցների օգնությամբ, և որպես կանոն իրականացվում է այնպիսի անձանց կողմից, ովքեր անցել են նախապատրաստական հատուկ վարժանքներ»<sup>56</sup>:

Յուրաքանչյուր հանցագործության կատարման ժամանակ հանցագործություն կատարած անձի ուսումնասիրությունը ունի կարևորագույն նշանակություն: Նշենք նաև, որ հնարավոր չէ բացահայտել առանձնապես վտանգավոր պետական

<sup>55</sup> **Տե՛ս** Маркова Т.Ю. Убийство в связи с осуществлением лицом служебной деятельности или выполнением общественного долга: Дис. канд. юрид. наук, М., 2003, **Էջ** 176-177.

<sup>56</sup> **Տե՛ս** Маркова Т.Ю., **Նույն տեղում**, **Էջ** 177-178:

հանցագործությունների պատճառները՝ առանց հանցագործի անձին անդրադարձնելու: Պատմական տեսանկյունից հանցագործի անձի մասին ուսմունքը անցել է մի քանի փուլեր:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքն է, որը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Առանց մեղքի չկա ո՛չ հանցագործություն, ո՛չ էլ քրեական պատասխանատվություն: Արարքում մեղքի բացակայությունը վկայում է հանցակազմի բացակայության մասին:

Նշենք նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է համարում նաև նպատակը, որը այլ հանցակազմերում համարվում է ֆակուլտատիվ հատկանիշ: Եվ այսպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներն են՝ շարժառիթը, նպատակը, հույզերը: Սուբյեկտիվ կողմի այս հատկանիշները առկա են ոչ բոլոր հանցակազմերում: Սակայն, դա չի նշանակում, որ հանցագործությունը կարող է կատարվել առանց շարժառիթի, նպատակի կամ հույզերի: Մարդկային յուրաքանչյուր արարք (այդ թվում հանցագործությունը), կատարվում է որոշակի շարժառիթներով, որոշակի նպատակի հասնելու համար և անպայման ուղեկցվում է հույզերով: Պարզապես ոչ բոլոր հանցագործությունների դեպքում է, որ այս հատկանիշները իրավաբանական նշանակություն ունեն: Իսկ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության պարագայում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ նպատակը ունի կարևորագույն իրավաբանական նշանակություն, չնայած նրան, որ այն համարվում է հանցակազմի ֆակուլտատիվ հատկանիշ:

Այնուամենայնիվ, հանցագործությունների որոշակի տեսակների դեպքում այս հատկանիշներն այդպիսի նշանակություն են ստանում, որովհետև դրանց բովանդակությունը սոցիալական և իրավական առումով որակապես փոխում են արարքի էությունը<sup>57</sup>: Նման դեպքերում նշված ֆակուլտատիվ հատկանիշներն օրենսդրի

<sup>57</sup> Տե՛ս Иногамова-Хегай Л.В., Кабальник А.Г., Кленова Т.В., Коробеев А.И. Актуальные проблемы уголовного права. Часть общая. М., 2016, էջ 52-53:

կողմից ընդգրկվում են տվյալ հանցակազմի մեջ և դառնում են պարտադիր:

Հիմնվելով հանցագործությունն կատարելու բոլոր հանգամանքների վրա, որոնք մասնավորապես ներառում են հանգամանքներ, որոնք բնութագրում են հանցագործությունն գործելու կոնկրետ արարք՝ միջոց կամ հանգամանք, մեղադրյալի անձը և այլ հանգամանքներ. «Սուբյեկտիվ կողմի բովանդակության վրա, - գրում է Բ.Ս. Վոլկովը, - մեծ ազդեցություն են գործում անձնական առանձնահատկությունները, դաստիարակությունը, կրթությունը և միջավայրը ոչ մի նշանակություն չունեն: Իսկ հետագայում հանցավորի գնահատման կենսաբանական մոտեցումը սկսեց աստիճանաբար դուրս մղվել՝ անձի քրեաբանական վերլուծության մեջ ներմուծելով սոցիալապես ձեռք բերված հատկանիշներն ու հոգեբանական հատկությունների առանձնահատկությունները: Ընդ որում վերջիններին երբեմն որոշիչ նշանակություն է տրվում: Հաջորդ փուլը նշանավորվեց հանցավորության պատճառների սոցիոլոգիական բացատրությունների անցումով, ինչպես նաև հանցավորության պատճառների բացատրության մեջ սոցիալ-տնտեսական պայմանների որոշիչ դերի դեպքում անձի և միջավայրի դիալեկտիկական փոխազդեցության մեթոդի ստեղծմամբ: Առանձնապես վտանգավոր պետական հանցագործի անձը մի կողմից իր վրակրում է հանցագործի ամենաընդհանուր հատկանիշները, իսկ մյուս կողմից իրենում ներառելով տվյալ տեսակի կոնկրետ հանցագործություններ կատարող անձանց ամբողջ բազմազանությունը: Ընդհանրացված ձևով արտացոլում է առանձնապես վտանգավոր պետական հանցագործություններ կատարողի առանձնահատկությունները:

Քրեաբանական և քրեափրավական վերլուծություններն ու ընդհանրացումները թույլ են տալիս գիտական հիմքի վրա ավելի ամբողջականորեն և խորությամբ թափանցել անձի բարդ և դինամիկ կազմության մեջ, ուսումնասիրության գործընթացում բացահայտել, թե այդ կազմության ո՞ր օղակն է ենթարկվել առավելագույն քրեածին ձևախախտման. ինչպիսին է անձի հակահասարակական կողմնորոշման կայունությունը և ուժը, իսկ

հետևաբար կառուցել հիմնավորված տեսություններ և իրականացնել արոֆիլակտիկ միջոցառումներ: Այսպիսի մոտեցումը հանցագործի անձը գնահատելիս կնպաստի քննիչի և օպերատիվ աշխատողի քրեբանական մտածողության զարգացմանը<sup>58</sup>:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը անձի հոգեկան գործունեությունն է կապված հանցագործության հետ: Ի տարբերություն օբյեկտիվ կողմի՝ սուբյեկտիվ կողմը արտացոլում է հանցանք կատարողի գիտակցական և կամային ուղորտներում ընթացող ներքին գործընթացները<sup>59</sup>: Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ մեղքը, շարժառիթը, նպատակը, հույզերը:

Ինչպես նշվում է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակություն ունեցող որոշումներից մեկում. «Սպանության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի»<sup>60</sup>: Այս որոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանը զարգացրել է ներկայացրած իրավական դիրքորոշումը, ինչպես նաև սահմանել է հատուկ կանոններ հանցավորի դիտավորության ուղղվածության հարցը լուծելու համար: Մասնավորապես հաշվառման ենթակա են հանցագործության եղանակը և գործիքը, բնույթը և տեղակայումը, ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխարարությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները: Ընդ որում հանգամանքների թվարկված ցանկը սպառիչ չէ, և անհրաժեշտ է հաշվի առնել հանցագործության բոլոր հանգամանքները համակցության մեջ:

Նշենք նաև, որ հանցագործությունը արտաքինի և ներքինի, օբյեկտիվի և սուբյեկտիվի միասնությունն է: Մարդկային արարքի արտաքին, օբյեկտիվ դրսևորումը, որքան էլ որ այն վտանգավոր

<sup>58</sup> Տե՛ս **Корнеева А.В.** Теория квалификации преступлений. Отв. ред. **А.И. Папор**, М., 2015, էջ 18-19:

<sup>59</sup> Տե՛ս **Аветисян С.С.** Приоритеты и перспективы нового Уголовного кодекса Республики Армения (социально-правовая концепция). Ереван, 2012, էջ 94-95:

<sup>60</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը Պ. Մանուկյանի գործով. ՎՔ.-61/07 կայացվել է 2007թ. մարտի 30-ին:



լինի, չի կարող հանցագործությունն համարվել, եթե դրանում բացակայում են համապատասխան սուբյեկտիվ հատկանիշները: Յանցակազմի սուբյեկտիվ կողմը, արարքի որակման և պատժի նշանակման համար ունի կարևոր իրավաբանական նշանակություն: Յամաձայն քրեական իրավունքի տեսության հանցակազմի սուբյեկտիվ կողմի՝ իրավաբանական նշանակությունը կայանում է հետևյալում՝

1. Սուբյեկտիվ կողմն էական դեր է կատարում քրեական պատասխանատվության հիմնավոր և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի ապահովման համար:

2. Թույլ է տալիս իրարից տարբերել օբյեկտիվ կողմով միմյանց նման հանցակազմեր:

3. Ապահովում է հանցագործությունների ճիշտ որակումը:

4. Սուբյեկտիվ կողմի հատկանիշները կարող են հանդես գալ որպես հիմնական հանցակազմը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներով հանցակազմի վերածող հատկանիշներ:

5. Սուբյեկտիվ կողմի հատկանիշները հանդես են գալիս որպես ընդհանուր առմամբ քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ և հաշվի են առնվում պատասխանատվության և պատժի անհատակացման ընթացքում:

Քրեական իրավունքի գիտության մեջ մեղքի վերաբերյալ ձևավորվել են երեք հիմնական տեսություններ՝ 1) վտանգավոր վիճակի տեսություն, 2) նորմատիվիստական (արժեքաբանական) տեսություն, 3) հոգեբանական տեսություն:

Յայաստանի հանրապետության, ինչպես նաև զարգացած իրավական համակարգերի քրեական օրենսդրությունը հիմնված է մեղքի հոգեբանական տեսության վրա<sup>61</sup>:

Յոգեբանական տեսության դրույթները հանգում են հետևյալին. անձի կողմից գործած մեղքի հոգեբանական վերաբերմունքի տարրերն են հանդիսանում գիտակցությունն ու կամքը: Քրեական իրավունքի տեսությունը ելնում է այն դրույթից, որ մարդն իր արարքների համար կարող է պատասխանատվություն կրել միայն այն

<sup>61</sup> Տե՛ս Շարгородский М.Д. Вина и наказание в советском уголовном праве. М., 1945, նաև՝ Յայաստանի Յանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Խմբ. իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գ.Ս. Ղազիսյանի**: Երևան, 2008, էջ 201:

դեպքում, երբ օժտված է եղել կամքի ազատություները: Կամքի ազատություները գործի իմացությամբ վճիռ կայացնելու մարդու ընդունակություներն է: Դրա համար էլ մեղքի կարևոր նախադրյալն է մեղսունակություները: Մեղավոր կարող է ճանաչվել միայն այն անձը, որն ընդունակ է գիտակցել իր արարքների փաստական հանգամանքներն ու սոցիալական նշանակություները և ղեկավարել դրանք<sup>62</sup>:

Մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է, իր կողմից կատարվող արարքի և դրավտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով: Բացի դիտավորությունից և անզգուշությունից մեղքը այլ ձևով չի դրսևորվում: Ուստի, մեղքը հանդես է գալիս միայն որպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշ: Որպես այդպիսին, մեղքը քրեական պատասխանատվության հիմնավորման մեջ, թեև էական դեր է կատարում (քանի որ առանց մեղքի չկա հանցագործություներ, ոչ էլ քրեական պատասխանատվություներ), բայց ոչ ավելի, քան հանցակազմի մյուս տարրերը: Չնայած մեղքի երկու ձևերի, պետական, քաղաքական կամ հասարակական, գործչի սպանություները կատարվում է ուղղակի դիտավորությամբ:

Նշենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիայում հանցագործության հետևանքները օրենսդրի կողմից նշված են որպես պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգության պարտադիր պայման: Նյութական հանցակազմով հանցագործություներին պարագայում դիտավորություները միշտ պայմանավորված է իրականացվող գործողության հանրային վտանգավորության բնույթի գիտակցությամբ և այդ գործողություներն իրականացնելու ցանկությամբ:

Մեղքի քրեաիրավական ասպեկտը ընդգծում է այն հանգամանքը, որ «դիտավորություներ» և «անզգուշություներ» հասկացություները կիրառվում են միայն հանցագործության կապակցությամբ: Սկզբունքորեն, դիտավորություները և անզգուշություները կապված են մարդկային յուրաքանչյուր արարքի հետ, բայց դրանք

<sup>62</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Խմբ. իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գ.Ս. Ղազիսյանի**: Երևան, 2008, էջ 203:

քրեափրավական նշանակություն են ձեռք բերում միայն այն դեպքում, երբ կատարվում է հանցանքը: Ուստի դիտավորությունը և անզգուշությունը քրեափրավական իմաստով տարբերվում են մեղքի, դիտավորության, և անզգուշության կենցաղային պատկերացումներից<sup>63</sup>:

Առարկայական ասպեկտը կապված է քրեափրավականի հետ: Սա նշանակում է, որ մեղքը վերացական հասկացությունն է, ընդհանրապես մեղք չկա: Մեղքն առկա է այն դեպքում, երբ անձը հանցանք է կատարում: Անձն ընդհանրապես մեղավոր չի կարող ճանաչվել առանց իր կողմից կատարված արարքի: Յետևաբար, նա մեղավոր է ճանաչվում կոնկրետ հանցանքը կատարելու մեջ:

Սոցիալական ասպեկտը նշանակում է, որ հանցագործությանը անձը ոտնձգում է կարևորագույն սոցիալական արժեքների բարիքների դեմ:

Եվ այսպես կարող ենք ասել, որ մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող հանրորեն վտանգավոր կոնկրետ արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսևորում է դիտավորության կամ անզգուշության ձևով, և որում դրսևորվում է անձի արարքի հակասոցիալական բնույթը: Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, անուղղակի դիտավորությամբ այս հանցագործության կատարումը բացառվում է, ինչպես նաև բացառվում է անուղղակի դիտավորությամբ սպանության փորձի կատարումը:

Սպանությունը մարդու դեմ ուղղված հանցագործություններից ամենածանրն է<sup>64</sup>: Յետևաբար այդ ոճրագործության դեմ արդյունավետ պայքար մղելը պետության իրավապահ մարմինների առաջնահերթ խնդիրն է:

Ինչպես նշել ենք, սպանության տեսակներից է նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը: Եթե այդ սպանությունը չի կատարվել անմեղսունակ անձի կողմից, ապա այն

<sup>63</sup> Մանրամասն տե՛ս **Рубцова А.С.** Актуальные проблемы уголовного права. М., 2016, էջ 93-94:

<sup>64</sup> Մանրամասն տե՛ս **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունները: Երևան, 2003: Նույնի՝ Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները: Երևան, 2010:

կատարվել է որոշակի պահանջմունքների բավարարման նպատակով:

Չնայած նրան, որ շարժառիթն ու նպատակը համարվում են սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներ, նրանք հանցագործության կատարման ժամանակ ունեն կարևորագույն նշանակություն: Հանցագործությունների ճշգրիտ մեծամասնությամբ կատարվում է որոշակի շարժառիթներով և հանցավոր նպատակի հասնելու համար:

Շարժառիթն իրենից ներկայացնում է հանցանք կատարելու որոշակի պահանջմունքներով պայմանավորված ներքին մղում: Այն ձևավորվում է անձի անհատական զարգացման ընթացքում:

Ակադեմիկոս Ա.Ա. Պիոնտկովսկին գտնում է, որ. «...Սպանության շարժառիթի հարցն ունի էական նշանակություն արարքի որակման խնդրում և դրա համար, եթե այն լիարժեք բացահայտված չի լինում, գործը պետք է ուղարկել լրացուցիչ նախաքննության, այլ ոչ թե արարքը որակել որպես հասարակ սպանություն»<sup>65</sup>:

Ինչպես նշված է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից մեկում. «Արարքի քրեաիրավական գնահատման համար խիստ կարևոր է հանցագործության շարժառիթի բացահայտումը հատկապես այն դեպքում, երբ այն ընդգծված է քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում, որպես տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ»<sup>66</sup>:

Այս նախադեպային որոշումով (կամ իրավական դիրքորոշմամբ) ՀՀ Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ անհրաժեշտ է գնահատել ոչ միայն հանցավորի գործողությունները սպանության պահին, այլ և մինչև սպանությունը, ինչպես նաև դրանից անմիջապես հետո:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանը. «հանցագործության շարժառիթները, ի թիվս այլ հանգամանքների բնորոշում են հանցագործության այսպես կոչված քանակական բնութագիրը, այսինքն արարքի հասարակական վտանգավորության աստիճանը: Հետևապես դատարանը պատժի չափը ընտրելիս

<sup>65</sup> Տե՛ս **Пионтковский А.А.** *Общее учение о преступлении.* М., 1967, էջ 21-22:

<sup>66</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԲ.-03/08 որոշումը Կ. Մարկոսյանի գործով. կայացվել է 2008թ. Փետրվարի 1-ին:

սպանությունն այս շարժառիթը հաշվի է առնելու»<sup>67</sup>:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը կարող ենք ամփոփել, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից են ուղղակի դիտավորությունը և նպատակը: Հետևաբար այլ նպատակներով և շարժառիթներով պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի դեմ ուղղված ոտնձգությունները անհրաժեշտ է որակել անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական օրենսգրքի հատուկ մասով սահմանված համապատասխան հոդվածներով:

### **ԳԼՈՒԽ 3**

## **ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՏԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՀԱՄԱԵՌ ՀԱՆՏԱԿԱԶՄԵՐԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՋՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **3.1. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը՝ անձի կամ նրա մերձավորի սպանության և իր կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ**

*Քննարկվող հանցագործությունը որոշակի պրտաքին նմանություններ ունի համաեռ հանցագործությունների, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված անձի կամ նրա մերձավորի սպանությանը կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ:*

Օրենսդիրն այդ դասում է ծանրացնող հանգամանքերում կատարված սպանությունների շարքը՝ նկատի ունենալով հանցավորի գործողությունների անմիջական կապը և պայմանավորվածությունը տուժողի ծառայողական

<sup>67</sup> **Аветисян Сержик.** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, էջ 588:

գործունեության կամ հասարակական պարտքի կատարման, այսինքն՝ գործող օրենսդրությանը չհակասող այնպիսի օգտակար արարքի կատարման հետ, որը մի դեպքում պայմանավորված է անձի, ցանկացած աշխատողի օրինական պարտականությունների կատարման, մյուս դեպքում՝ ցանկացած անձի կողմից հանրորեն օգտակար ամեն մի արարքի կատարման հետ: Նշված սպանությանը կատարվում է անձի ծառայողական գործունեությանը կամ հասարակական պարտքը կատարելու նուղղված իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու նպատակով կամ այն կատարելու կապակցությամբ առաջացած վրեժի շարժառիթով: Այս հանցագործությամբ հանցավորը ոտնձգում է ինչպես անձի կյանքի, այնպես էլ այն - հասարակական հարաբերությանների դեմ, որը երաշխավորում և ապահովում է անձի ծառայողական գործունեությանը կամ հասարակական պարտքի կատարումը<sup>68</sup>:

Օրենսդրության պատմությունը վկայում է, որ չնայած ԶԶ 1927 թվականի քրեական օրենսգիրքը նման հանցակազմ չէր նախատեսում, սակայն տուժողի պաշտոնական կամ հասարակական գործունեության հետ կապված սպանությանները համարվում էին այլ ստոր դրդումներով կատարված և այդ հիմքով դիտվում որպես ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություններ:

ԶԶ 1961 թվականի քրեական օրենսգիրքը տուժողի պաշտոնական կամ հասարակական պարտքը կատարելու կապակցությամբ կատարված սպանությունը սահմանեց որպես ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն (99 հոդվածի 3-րդ կետ):

ԶԶ 2003 թվականի քրեական օրենսգիրքը որպես ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն սահմանեց անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ<sup>69</sup>:

Օրենքի նման ձևակերպման անհրաժեշտությունը

<sup>68</sup> Տե՛ս **Թամազյան Ա.Ա.** Ծանրացող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները (տեսական և կիրառական վերլուծություն): Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի ատենախոսություն: Երևան, 2012, էջ 30-32:

<sup>69</sup> Տե՛ս ԶԶ քրեական օրենսգիրք, հոդված 104, 2-րդ մաս:

պայմանավորված էր նրանով, որ որոշ դեպքերում սպանության հետևանքով տուժում էին ոչ թե ծառայողական կամ հասարակական պարտքը կատարող անձինք, այլ նրանց մերձավորները, իսկ նման դեպքերում ՀՀ քրեական օրենսգրքի 99 հոդվածի 3-րդ կետը չէր կիրառվում՝ օրենսդրական ամրագրում չունենալու պատճառով:

Կապված անձի գործունեության առանձին դրսևորումների հետ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է հանցագործության երկու տեսակ<sup>70</sup>.

**ա) անձի ծառայողական գործունեության հետ կապված սպանություն,**

**բ) անձի հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություն:**

Ծառայողական գործունեությունը անձի ցանկացած գործունեությունն է, որը կապված է պետական և ոչ պետական հիմնարկությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ կնքած պայմանագրերից բխող ծառայողական պարտականությունների կատարման հետ: Ծառայողական գործունեությունը ոչ միայն պաշտոնատար անձի գործունեությունն է դրա իրավաբանական իմաստով, այլև աշխատանքային պայմանագրերից բխող անձի ցանկացած գործունեությունն է ընդհանրապես: Այստեղ խոսքը վերաբերում է և՛ տնօրեններին, և՛ հսկիչներին, և՛ պահակներին, և՛ բանվորներին, մի խոսքով ցանկացած աշխատողի, պայմանով միայն, որ վերջիններիս կյանքի դեմ ուղղված ոտնձգությունը պայմանավորված և կապված լինի նրանց կողմից իրականացվող ծառայողական գործունեության հետ: Օրինակ՝ տնօրենի սպանությունը, կապված աշխատանքային պարտականությունները պարբերաբար չկատարող անձին օրինական կարգով աշխատանքից ազատելու, կամ դասախոսի սպանությունը ուսանողին արդարացի անբավարար նշանակելու հետ, հանդիսանում են անձի ծառայողական գործունեության հետ կապված սպանություններ:

Հասարակական պարտքի կատարումը անձի ցանկացած հանրորեն օգտակար հասարակական գործունեությունն է, որը մի դեպքում

<sup>70</sup> Տե՛ս նույն տեղում:

պայմանավորված է հատուկ նրա վրա դրված հասարակական պարտականությունների, մյուս դեպքում՝ այլ հասարակական օգտակար գործունեության կատարմամբ:

Քրեագետների մեծ մասը կողմնակից է հասարակական պարտքի կատարման նման լայն մեկնաբանմանը<sup>71</sup>:

Հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանության օրինակներ կարող են լինել հասարակական հսկիչի, տեսուչի, հասարակական տարբեր կազմակերպությունների անդամների սպանության ներքին կապված նրանց հասարակական պարտքի կատարման հետ, կամ անձի սպանության ներքին կապված իրավախախտման կանխման, կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին իրավապահ մարմիններին հայտնելու հետևյալն:

Հասարակական պարտքի կատարում ասելով հասկացվում և ընդունվում է անձի ցանկացած հանրորեն օգտակար գործունեությունը, որն իր հերթին ընդունված է բաժանել երկու խմբի.

ա) անձի վրա հատուկ դրված հասարակական պարտականությունների կատարում,

բ) այլ հասարակական օգտակար գործունեության կատարում:

Իրավաբանական գրականության մեջ<sup>72</sup> կարծիքներ կան, որ հասարակական պարտքի կատարում ասելով պետք է հասկանալ միայն սահմանադրական դրույթներից կամ հասարակական կազմակերպությունների կանոնադրություններից բխող հասարակական պարտականությունների կատարումը, իսկ անձի այլ հասարակական օգտակար գործունեությունը չի կարող համարվել տվյալ հանցակազմը բնութագրող հատկանիշ, քանի որ տվյալ դեպքում հասարակական օգտակար գործունեությունը պարտականությունների կամ պարտքի տարբեր չի պարունակում, այլ գուտբարոյական չափանիշ է:

Մեր կարծիքով նման տեսակետը չի բխում օրենքի ոգուց և այն

<sup>71</sup> Տե՛ս **Թովմայան Ա.Թ.** Սովետական քրեական իրավունք, Երևան, 1979թ., Հատուկ մաս, հատոր 3, էջ 366-367, **Ուզունյան Մ.Ի.** Անձի քրեաիրավական պաշտպանությունը, Երևան, 1983թ., էջ 37-38, **Լալայան Կ.Ա., Մամյան Ս.Ս.** Դիտավորյալ սպանության ներքին կապված, Երևան, 1970թ., էջ 48-49:

<sup>72</sup> Մանրամասն տե՛ս **Корнеева А.В.** Теория квалификации преступлений. Отв. ред. **А.И. Рапог.** М., 2015, էջ 21-22:



հասարակական հարաբերությունների պաշտպանությունն ինչ, որին ուղղված է համապատասխան նորմի կիրառումը: Ավելի ընդունելի են մեծամասնություն կազմող այն տեսակետները, որոնց համաձայն՝ հասարակական պարտքի կատարումն ասելով հասկացվում է ոչ միայն անձի վրա հատուկ դրված հասարակական պարտականությունների կատարումը, այլև անձի ցանկացած հանրագումար հասարակական գործունեությունը: Այդպիսին է նաև դատական պրակտիկան: Օրինակ՝ իրավախախտման կանխման, նախապատրաստվող ու կատարվող հանցագործությունների մասին իրավապահ մարմիններին հայտնելու, կամովին քննության ներկայանալու և դեպքի մասին վկայություն տալու հետ կապված սպանությունը համարվում է հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություն:

**Ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանության բնութագրող հատկանիշներն են հանցավորի հատուկ նպատակը և շարժառիթը, ինչպես նաև տուժողի գործողությունների բնույթը:**

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմը առանձնանում է իր նպատակային ուղղվածությամբ, որն արտահայտվում է իր ծառայողական գործունեությունն իրականացնող կամ հասարակական պարտքը կատարող անձին կամ նրամերձավորներին կյանքից զրկելու մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից մեկում նշվում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով ծառայողական գործունեությունը անձի այնպիսի գործունեությունն է, որը մտնում է նրա ծառայողական պատասխանատվությունների մեջ, որոնք էլ բխում են օրենքով սահմանված կարգով գրանցած պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ կապված աշխատանքային պայմանագրի դրույթներից: Հետևաբար քննարկվող հանցագործություններից տուժող կարող են հանդիսանալ իրենց օրինական ծառայողական գործառնություններն իրականացնող բոլոր անձինք (ինչպես պաշտոնատար, այնպես էլ ոչ պաշտոնատար), կամ նրանց մերձավորները»<sup>73</sup>:

<sup>73</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը Վ. Ղազարյանի վերաբերյալ գործով, որը

Այս իրավական դիրքորոշման շրջանակներում վճռաբեկ դատարանը մեկնաբանել է «ծառայողական գործունեություն» օրենսդրական ձևակերպումը՝ սահմանելով, որ այն պետք է ավելի լայն հասկացվի, քան «պաշտոնատար անձ» հասկացությունը: Այստեղ առանցքային նշանակություն ունի այն, որ տուժողը կամ այն անձը, ում համար տուժողը մերձավոր է, իրականացնի օրինական բնույթի ծառայողական պարտականություններ, որոնք նախատեսված են իր աշխատանքային պայմանագրով:

Որպեսզի կատարված արարքը որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, նախ և առաջ անհրաժեշտ է, որ տուժողի գործողությունները լինեն իրավաչափ:

Տուժողի ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի իրավաչափ կատարում ասելով հասկացվում է անձի գործողությունների կատարումը օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, դրանց արդարացի, ճիշտ և օրինական լինելը, գործող օրենսդրությանը չհակասող հանրորեն օգտակար գործունեությունը: Հետևաբար տուժողի դրսևորած իրավախախտման և այլ ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում կատարված սպանությունը չի կարող դիտվել որպես նրա ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություն, քանի որ անօրինական գործողությունները չեն կարող դիտվել որպես պարտքի կատարում: Օրինակ՝ ծառայողական լիազորությունները գերազանցող անձի սպանությունը այլ ծանրացնող և մեղմացնող հանգամանքների բացակայության դեպքում ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով:

Տուժողի անօրինական գործողությունների արդյունքում կատարված սպանությունները, որոշակի հանգամանքների դեպքում, կարող են որակվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 105 կամ 108 հոդվածներով՝ որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կամ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված սպանություն<sup>74</sup>: Միաժամանակ պետք է նկատել, որ աֆեկտի վիճակում

---

կայացվել է 2009թ. հունիսի 29-ին: Գործ՝ ՀՀԲԴ-2/0086/01/08:  
<sup>74</sup> Տե՛ս **Թամազյան Ա.Ա.** Սպանությունների ընդհանուր բնութագիրը, տեսակները և որակման առանձնահատկությունները. Երևան, 2005թ., էջ 226, 268:

պատասխան հակազդեցությունը կարող է ուղղված լինել միայն հակահասարակական կամ հակաբարոյական վարքագիծ դրսևորած անձի դեմ և ոչ մի դեպքում՝ երրորդ անձանց դեմ: Այսինքն տուժողի անօրինական գործողությունների արդյունքում առաջացած հոգեկան խիստ հուզված վիճակում տուժողից բացի այլ անձանց, այդ թվում մերձավորի սպանությունը չի կարող համարվել մեղմացնող հանգամանքներում կատարված սպանություն և գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով այն կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով՝ որպես հասարակ կամ որակյալ սպանություն:

Անհրաժեշտ պաշտպանության, հետևաբար և նրասահմանազանցման դեպքում նույնպես վնասը հասցվում է միմիայն ոտնձգություն կատարողին և ոչ երրորդ անձանց: Երրորդ անձանց պատճառած վնասի դեպքում անձը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով<sup>75</sup>:

Ակադեմիկոս Վ.Ն. Կուդրյավցեվը գտնում է, որ հանցակազմի հիմքում պետք է դրվի ոչ թե արարքի իրավաչափ բնույթը, այլ տուժողի հանրորեն օգտակար գործունեությունը կամ արարքը, քանի որ, ըստ նրա, ոչ բոլոր իրավաչափ գործողությունները կարող են լինել հանրորեն օգտակար և ոչ բոլոր անօրինական գործողությունները՝ հանրորեն վտանգավոր<sup>76</sup>: Հեղինակը, փաստորեն, չի բացառում տուժողի անօրինական գործողությունների հանրորեն օգտակար բնույթը: Օրինակ՝ ծանր հանցանք կատարած անձին մերկացնելու նպատակով նման լիազորություն չունեցող անձի կողմից նրան գաղտնի հետևելը, ըստ հեղինակի, անօրինական, բայց հանրօգուտ գործողություն է: Ըստ նրա՝ թվում է, թե տվյալ անձի սպանությունը կարելի է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Հեղինակի նման առաջարկությունը լայն քննարկման առարկա չի դարձել, և քրեագետների կողմից մանրամասնորեն չեն վերլուծվել նրա դրական և բացասական կողմերը, հետևաբար և նրա միանշանակ

---

<sup>75</sup> Տե՛ս նույն տեղում:  
<sup>76</sup> Տե՛ս **Кудрявцев В.Н.** Общая теория квалификации преступлений. М., 2008, էջ 227-228; նաև՝ **Курс уголовного права в пяти томах. Том 3. Особенная часть.** Под ред. **Г.Н. Борзенкова, В.С. Комиссаров.** М., 2002, էջ 110-111:

ընդունումը կամ հերքումը դեռևս վաղաժամ է:

Քննարկվող այս հանցագործությունը հիմնականում կատարվում է վրեժի շարժառիթով: Հանցավորը անձի կամ նրա մերձավորի սպանությանը վրեժ է լուծում այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման համար: Նման դեպքերում սպանությունը կատարվում է տուժողի իրավաչափ գործողությունների կատարումից հետո և հաջորդում է դրան: Այս հանցագործությունը կարող է կատարվել նաև տուժողի ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարմանը խոչընդոտելու նպատակով<sup>77</sup>: Այդ պարագայում հանցագործությունը կատարվում է տուժողի օրինաչափ գործողությունները կանխելու նպատակով և նախորդում է այդ գործողությունների կատարմանը:

Տուժողի իրավաչափ գործունեությանը կամ հասարակական պարտքի կատարմանը խոչընդոտելը տուժողի իրավաչափ գործունեությունը թույլ չտալն է, կամ դրանք ինչ-որ ձևով խափանելը: Այն կատարվում է մինչև տուժողի ծառայողական գործունեությունը կամ հասարակական պարտքի կատարումը, կամ դրանց անմիջական կատարման ժամանակ:

Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որակելու համար պարտադիր չէ, որ սպանությունը կատարվի տուժողի ծառայողական պարտականությունների կամ հասարակական պարտքի կատարման ընթացքում: Այն կարող է կատարվել նաև որոշակի ժամանակահատված անցնելուց հետո՝ անկախ ժամանակի տևողությունից, սակայն պարտադիր պայմանով, որ կապված լինի անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ:

Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որակելու համար նշանակություն չունեն նաև սպանության կատարման ժամանակ տուժողի այլևս ծառայողական գործունեություն չիրականացնելը, նրա ազատված լինելը այդպիսի գործունեություն իրականացնելուց:

Ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված

<sup>77</sup> Տե՛ս **Бабий Н.А.** Квалификация убийств приотягчающих обстоятельствах. М., 2016, էջ 11-12:

սպանությունը անհրաժեշտ է տարբերել ծառայողական պարտականություններ կատարող անձի սպանությունից: Առաջինը կատարվում է միայն ծառայողական գործունեությանը խոչընդոտելու նպատակով կամ այդպիսի գործունեության համար վրեժի շարժառիթով, իսկ երկրորդը կարող է կատարվել ցանկացած շարժառիթով: Առաջին դեպքում արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ երկրորդ դեպքում հնարավոր է արարքի որակումը ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասով, այնպես էլ նույն հոդվածի 1-ին մասով:

Ինչպես նկատեցինք, տուժողի ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման մեջ գտնվելը ինքնին բավարար չէ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որակելու համար: Անհրաժեշտ է, որ նրա այդ գործողությունները լինեն իրավաչափ, իսկ հանցավորի գործողությունները՝ ունենան տուժողի իրավաչափ և հանրօգուտ գործունեությանը խոչընդոտելու կամ խախտելու նպատակ, կամ այդպիսի գործունեության համար վրեժի շարժառիթ: Դատական բարձրագույն ատյանի որոշման համաձայն՝ սպանությունը չի կարող որակվել որպես տուժողի կողմից իր հասարակական պարտքը կատարելու կապակցությամբ տեղի ունեցած, եթե այդ հանգամանքը հայտնի չի եղել հանցագործին: Նկատենք, որ շատ հաճախ տուժողի գործողությունները՝ կապված հասարակական պարտքի կատարման հետ, այնքան ակնհայտ են, որ նրանք չեն կարող հայտնի չլինել հանցագործին: Եվ բացի այդ, բոլորին է հայտնի, որ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի խախտելու հանցավորի իրավախախտ գործողությունները, իսկ այդ ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իրավաչափ և հանրօգուտ գործողություն:

Տուժողի ծառայողական պարտականությունների իրավաչափ կատարման ընթացքում չի բացառվում նաև այլ շարժառիթներով սպանությունների կատարումը<sup>78</sup>: Օրինակ՝ ծառայողական պարտականություններ կամ հասարակական պարտք կատարող անձը կարող է սպանվել շահադիտական դրդումներով կամ ավազակային

<sup>78</sup> Տե՛ս և Квалификация преступлений против личности. Под. ред. **А.М. Бармета**. М., 2015, էջ 174-175:

հարձակման հետևանքով և այլն: Եթե սպանության կատարման հիմնական շարժառիթը գույքի հափշտակությունն է, ապա արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով: Նման դեպքերում արարքի որակման համար պետք է հիմք ընդունել հանցավորի դիտավորությունը և հանցագործության կատարման հիմնական շարժառիթը:

Անձի կողմից հասարակական պարտքի կատարումը հաճախ արտահայտվում է հասարակական կարգը խախտող, հակահասարակական արարքներ կատարող և խուլիգանական վարքագիծ դրսևորող անձանց գործողությունները խափանելու ձևով:

Այն դեպքերում, երբ անձի անօրինական վարքագծի խափանման մեջ տուժողի գործողություններն արտահայտվել են սոսկ դիտողությամբ, առանց ակտիվ միջամտության, որը, սակայն, չնչին առիթ է հանդիսացել հանցագործի կողմից սպանության իրականացման համար: Հետևաբար տվյալ դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ այն է խուլիգանական դրդումներով կատարված սպանություն: Միևնույն ժամանակ, երբ տուժողի գործողությունները կրել են ոչ թե սոսկ դիտողության բնույթ, այլ նրա կողմից կոնկրետ փորձ է արվել խափանելու հանցավորի խուլիգանական գործողությունները, և այդ պատճառով հանցավորի կողմից ոտնձգություն է կատարվել իր խուլիգանական գործողությունները խափանելու ցանկացող անձի կյանքի նկատմամբ, ապա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ որպես հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություն: Նման դեպքերում հանցավորի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 10-րդ կետերով որակելը սխալ է:

Մեր կարծիքով այստեղ նույնպես առկա է տուժողի կողմից իր ծառայողական պարտքի կատարման հետ կապված սպանություն, և հանցավորի արարքը նաև որպես խուլիգանական դրդումներով կատարված սպանություն որակելը սխալ է:

Կապված անձի որոշակի գործունեության հետ՝ ՀՀ քրեական օրենսգրքի (հոդված 305) սահմանում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը նրա նշված

գործունեությունը դադարեցնելու նպատակով: Չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի հետունեցած նմանությունը, իսկ հիմնականում հանցագործության օբյեկտիվ կողմի նույնությունը, այս հանցակազմն առանձնացվել է կյանքի դեմ ուղղված հանցագործություններից և դասվել սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների թվին: Այն դեպքերում, երբ հանցավորը անձին գրկել է կյանքից նրա պետական, քաղաքական կամ հասարակական գործունեությունը դադարեցնելու նպատակով արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 305 հոդվածով: Բացառություն է կազմում հանցանքը 14-16 տարեկան անձանց կողմից կատարելը, որի դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ որպես անձի կողմից իր ծառայողական կամ հասարակական գործունեության հետ կապված սպանություն, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 305 հոդվածով կատարված հանցագործության սուբյեկտներ կարող են լինել 16 տարին լրացած մեղսուհու ֆիզիկական անձինք: Այն դեպքերում, երբ 16 տարին լրացած անձանց կողմից ոտնձգություն է կատարվում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ և այդպիսին չհանդիսացող անձի կյանքի նկատմամբ, ապա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 305 և 104 հոդվածներով: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 305 հոդվածը նախատեսում է պատասխանատվություն ոչ թե տուժողի ցանկացած ծառայողական կամ հասարակական գործունեության հետ կապված սպանության համար, այլ միայն օրենքում նշված կոնկրետ գործունեության հետ կապված սպանության համար:

Դատախազի, քննիչի, հետաքննություն կատարող անձի, պաշտպանի, փորձագետի կամ դատական ակտերի հարկադիր կատարողի կամ նրանց մերձավորների սպանությունը՝ կապված նրանց պաշտոնական պարտականությունների իրավաչափ կատարման հետ վրեժի շարժառիթով, ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 347 հոդվածով:

Գործնականում պատահել են դեպքեր, երբ սպանությունը կատարվել է ոչ թե տվյալ անձի պետական, քաղաքական կամ

հասարակական գործունեությունը դադարեցնելու նպատակով, այլ կազմակերպության գործունեության համար, որի անդամն է եղել տվյալ անձը: Ըստ որոշ հեղինակների՝ տվյալ դեպքում հանցավորի արարքը նույնպես ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Տուժողը տվյալ դեպքում կարող է լինել կազմակերպության ցանկացած անդամ, այդ թվում և հանցավորին անձանոթ:

Ճառայողական գործունեության հետ կապված սպանությունների թվին են դասվում նաև անձի ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտելու կամ խախտելու նպատակով, ինչպես նաև այդ գործունեության հետ կապված վրեժի շարժառիթով կատարված սպանությունները: Նման դեպքերում արարքը որակվում է՝ հիմք ընդունելով հանցագործության կատարման հիմնական, գերակա շարժառիթը: Եթե հանցագործության կատարման հիմնական շարժառիթը շահն է, ապա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով: Նախանձի շարժառիթով կատարված սպանությունը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և այլ ծանրացնող հանգամանքների (առանձին դաժանության, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով և այլն) բացակայության դեպքում ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով<sup>79</sup>:

Ապօրինի, ինչպես նաև կեղծ ձեռնարկատիրությունը զբաղվողի սպանությունը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Անհատ ձեռնարկատիրոջ, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ անհիմն մերժելու կամ դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելու, որոշակի գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլ տվություն (լիցենզիա) տալն ակնհայտ մերժելու կամ դա տալուց չարամտորեն խուսափելու, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքներն ու շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելու, ինչպես նաև դրա

<sup>79</sup> **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2010, էջ 40-41:



գործունեությանը այլ ակնհայտ ապօրինի միջամտության, ապօրինի ստուգումների նշանակման կամ ապօրինի ստուգումների անցկացման հետ կապված պաշտոնատար անձի սպանությանը՝ վրեժի շարժառիթով, այլ ծանրացնող և մեղմացնող հանգամանքների բացակայության դեպքում ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով:

Շուկան տարածքային սկզբունքով բաժանելու, այլ տնտեսավարող սուբյեկտներին շուկա մուտք գործելու նխընդոտելու, տնտեսավարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելու նպատակով ապօրինի-հակամրցակցային գործունեության իրականացման հետ կապված պաշտոնատար անձի սպանությանը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Հրապարակային սակարկության նկատմամբ անցկացման կարգը չարամտորեն խախտող անձի սպանությանը նույնպես չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկության նկատմամբ ապօրինի հավաքողի և տարածողի սպանությանը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Բժշկական օգնության և սպասարկում իրականացնողների սպանությանը վրեժի շարժառիթով՝ կապված նրանց կողմից մասնագիտական պարտականության նկատմամբ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ, նույնպես չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելու կամ պահելու հետ կապված սպանությանը վրեժի շարժառիթով նույնպես չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանության նկատմամբ նաև վկայի սպանությանը՝ կապված նրա տված ցուցմունքի հետ: Սակայն պետք է նկատել, որ հանցագործության շարժառիթից և տուժողի գործողության նկատմամբ

բնույթից կախած՝ վկայի սպանությունը տարբեր դեպքերում որակվում է տարբեր կերպ<sup>80</sup>:

Այն դեպքում, երբ վկայի սպանությունը չի կարող էականորեն ազդել գործի քննության, հանցագործության բացահայտման և հանցագործի մերկացման վրան այն կատարվել է վրեժի շարժառիթով՝ կապված նրա տված ցուցմունքի հետ, հանցավորի արարքը ենթակա է որակման ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Իսկ այն դեպքում, երբ վկայի սպանությունը կատարվել է կատարված հանցագործությունը թաքցնելու հետ, ենթակա է որակման ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով:

Ակնհայտ սուտ ցուցմունք տված վկայի սպանությունը վրեժի շարժառիթով, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, ենթակա է որակման ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով:

Ակնհայտ կեղծ եզրակացություն տված փորձագետի կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարած անձի սպանությունը վրեժի շարժառիթով չի կարող որակվել ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապրիլի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելու հետ կապված սպանությունը վրեժի շարժառիթով չի կարող որակվել ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծողի սպանությունը վրեժի շարժառիթով չի կարող որակվել ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Անձի ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանությունը միաժամանակ չի կարող որակվել որպես այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանություն, քանի որ տվյալ հանցակազմերը պատասխանատվություն են նախատեսում որոշակի կոնկրետ շարժառիթով կատարված գործողության համար,

<sup>80</sup> Տե՛ս Агузаров Т.К., Грачева Ю.В., Чучаев А.И. Охрана власти в уголовном праве России. М., 2016, էջ 22:

իսկ մի քանի շարժառիթների դեպքում արարքը որակվում է հիմնական շարժառիթը նախատեսող հոդվածով: Միևնույն հանցագործության մեջ շարժառիթները քրեաիրավական առումով չեն կարող զուգորդվել, դրանք գտնվում են մրցակցային հարաբերության մեջ<sup>81</sup>:

Դատաքննչական մարմինների պրակտիկայում հանդիպում են վրեժի շարժառիթով կատարված սպանությաններ՝ կապված անձի կողմից հանցավոր գործունեությանը կամ հանցագործության կատարմանը մասնակցելուց հրաժարվելու, իրավապահ մարմինների հետգործակցելու հետ:

Չանցավոր գործունեությանը կամ հանցագործության կատարմանը մասնակցելուց հրաժարվողի սպանությանը վրեժի շարժառիթով ենթակա է որակման ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Իրավապահ մարմինների հետ համագործակցող անձի սպանությանը վրեժի շարժառիթով նույնպես ենթակա է որակման ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Պատիժն ի կատար ածող հիմնարկի կամ կալանավորվածներին և ձերբակալվածներին պահելու վայրի աշխատողների և այնտեղ գտնվող անձանց սպանությանը՝ կապված այդ հաստատության ներքին բնականոն գործունեությանը խոչընդոտելու հետ, նույնպես ենթակա է որակման ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Պատիժն ի կատար ածող հիմնարկներում կամ կալանավորվածներին և ձերբակալվածներին պահելու վայրերում անձնական անբարյացակամ հարաբերությունների հողի վրա կատարված սպանությանը, այլ ծանրացնող և մեղմացնող հանգամանքների բացակայության դեպքում, ենթակա է որակման ՅՅ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով:

Ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված սպանության ներքին թվին է դասվում նաև զինվորական պարտականությունները կատարելու կապակցությամբ պետի նդիտավորության մահ պատճառելը: Նման դեպքերում արարքը

<sup>81</sup> Մանրամասն տե՛ս Курс уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть. Под ред. Г.Н. Борзенкова, В.С. Комиссаров. М., 2002, էջ 26-27:

Ենթակա է որակման ԶԶ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Չինվորական պարտականությունների կատարման կապակցությամբ պետի սպանությունն անհրաժեշտ է տարբերել զինվորական ծառայության ընթացքում կատարված սպանությունից: Վերջին դեպքում սպանությունը կարող է կատարվել նաև բազմաթիվ այլ շարժառիթներով, որի դեպքում արարքը կարող է որակվել ինչպես ԶԶ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ, այնպես էլ 1-ին մասով: Տուժողի անօրինական գործողությունների հետ կապված սպանությունը կարող է որակվել նաև ԶԶ քրեական օրենսգրքի 105 կամ 108 հոդվածներով, որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կամ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված սպանություն:

Փոխադարձ անօրինական գործողությունների ընթացքում կատարված սպանությունը չի կարող որակվել որպես ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ կապված սպանություն<sup>82</sup>:

Ինչպես նկատեցինք, ԶԶ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը նույն չափով պաշտպանության տակ է առնում նաև ծառայողական գործունեության իրականացնող կամ հասարակական պարտքը կատարող անձի մերձավորների կյանքը, որոնք, որպես կանոն, լինում են ավելի անպաշտպան կամ նվազ պաշտպանված: Վերջիններիս սպանությունը՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, ենթակա է որակման ԶԶ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Օրինակ՝ օբյեկտիվորեն անբավարար գնահատական ստացած ուսանողի կողմից վրեժ լուծելու նպատակով անբավարար նշանակած դասախոսի զավակի սպանությունը ենթակա է որակման ԶԶ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ որպես անձի մերձավորի սպանություն՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կատարման հետ:

Մերձավորներ ասելով պետք է հասկանալ ինչպես մերձավոր ազգականներին (մայր, հայր, որդեգրող, տղա, աղջիկ, որդեգրված, պապ, տատ, թոռ, հարազատ եղբայր և քույր, ամուսին, կին), այնպես էլ

<sup>82</sup> Տե՛ս Квалификация преступлений против личности. Под. ред. **А.М. Бармета**. М., 2015, էջ 231-232:

բոլոր այն անձանց, ովքեր ակնհայտորեն թանկ են, գնահատելի և սիրելի տուժողի համար (մտերիմ ընկերուհի, մտերիմ ընկեր, հարսնացու, փեսացու և այլն), որոնց մահը ցնցող ազդեցություն կարող է ունենալ անձի համար, այնպես էլ բոլոր այն անձանց, ովքեր ակնհայտորեն թանկ են, գնահատելի և սիրելի տուժողի համար:

Սուբյեկտիվ կողմից այս հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով ոտնձգում է ծառայողական պարտականությունները կամ հասարակական պարտքը կատարող անձի կամ նրա մերձավորի կյանքի նկատմամբ և ցանկանում է, նրան կյանքից զրկելով, խոչընդոտել նրա գործունեությանը, կանխել այն կամ վրեժ լուծել արդեն իսկ կատարած ծառայողական պարտականության կամ հասարակական պարտքի կատարման համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով՝ մարդու կյանքը համարվում է պաշտպանության առաջնային օբյեկտ ի տարբերություն հասարակական հարաբերությունների, որոնք ապահովում են ծառայողական գործունեության նորմալ իրականացումը, հասարակական պարտքի կատարումը, 305, 316-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններում առաջնային է պետական իշխանության հեղինակությունը: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ տուժողի կամ նրա մտերիմների սպանությունը կապված իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, համարվում է հանցագործություն, որը բացասում է հասարակությանն ու պետությանը ծառայելու գաղափարը: Հենց սա է համարվում իրավակարգի դեմ ուղղված արարքի և ոչ թե անձի որպես մասնավոր անձի նկատմամբ:

Հասարակական պարտքի կատարում ասելով՝ հասկանում ենք քաղաքացու սոցիալական պարտականությունների կատարումը՝ իշահ հասարակության կամ առանձին անձանց, ինչպես նաև այլ հանրօգուտ գործողությունների կատարումը:

Իր ներքին բովանդակությամբ և էությամբ «պետական կամ քաղաքական գործունեություն» և «ծառայողական կամ հասարակական պարտք» հասկացությունները նույնական չեն:

Յետևաբար որպես պարտադիր պայման, որով պետք է որակել անձի կամ նրա մերձավորի սպանությանը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, պետք է պարզվի տուժողի և նրա մտերիմների գործողությանը նկատմամբ օրինաչափությանը, այսինքն տուժողը և նրա մտերիմները չեն իրականացրել որևէ հանցագործություն կամ այլ հակաիրավական արարք, այլ տուժել են ծառայողական պարտքը կատարելիս:

Հանցագործության սահմանազատման մեկ այլ հիմք է համարվում տուժողի գործունեությանը ու զբաղեցրած պաշտոնի բնույթը: Անհատի սպանությանը կապված իր ծառայողական գործունեության կամ հանրային պարտքի կատարման հետ՝ առանց հաշվի առնելու զբաղեցրած պաշտոնի նշանակությանը ու տուժածի դերը պետական կամ տեղական կառավարման մակարդակներում: Իսկ պետական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգության ժամանակ այդ հանգամանքները որոշիչ դեր են կատարում:

Եթե սպանության հետևանքով պարզվի, որ տուժողը այն անձն է, ով զբաղեցրել է մոլեխիցիպալ պաշտոն, ապա արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, այսինքն որպես սպանությանը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական պարտականությանը կամ հասարակական պարտքի կատարման հետ<sup>83</sup>: Ըստ սպանության նման տիպի՝ տուժողներ կարող են համարվել ինչպես այդ անձիք, այնպես էլ նրանց մերձավորները: Մերձավոր ասելով հասկանում ենք տուժողի հարազատներին, անձանց, ովքեր աշխատում են նրանց հետ, ինչպես նաև այն անձանց, որոնց առողջությանը, բարեկեցությանը, կյանքը կարևոր են տուժողի համար: Անձի կամ նրա մտերիմների սպանությանը կապված անձի՝ իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ. դա հանցագործություն է նյութական հանցակազմով: Այդ պատճառով, որպես տվյալ հանցագործության օբյեկտի կողմի պարտադիր հատկանիշներ, անհրաժեշտ է առանձնացնել հետևյալը՝ արարքը, հանցավոր հետևանքը և արարքի ու սպանության միջև պատճառական կապը: ՀՀ քրեական օրենսգրքի

<sup>83</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի, հոդված 104, 2-րդ մաս:

104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության իրականացման միջոցը չի ազդում որակման վրա, սակայն օբյեկտիվ կողմի որոշ ֆակուլտատիվ հատկանիշների առկայության դեպքում, որոնք բնորոշում են միայն սպանության որոշ հանցակազմեր. մեղադրյալի պատասխանատվությունը կարող է վրահասնել ըստ համակցության:

Պետական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունը փաստացի հատկանիշների տեսանկյունից իրականացվում է միևնույն հանցավոր գործողությունների միջոցով:

Պետական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունը համարվում է նյութական հանցագործություն, որն ուղղված է սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ:

Իրավաբանական գրականության մեջ անվիճելի է հանցագործության նախապատրաստական փուլում կամավոր հրաժարվելու հնարավորությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիքը, որից վրա է հասնում քրեական պատասխանատվությունը, 14 տարեկանն է: Անձի կամ նրա մերձավորի սպանությունը կապված տվյալ անձի կողմից իր ծառայողական գործունեության իրականացման կամ հասարակական պարտքի կատարման հետ, պատժվում է ազատազրկմամբ տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ: Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգության համար պատասխանատվությունը վրա է հասնում 16 տարեկանից և նախատեսում է նույնպես ազատազրկում տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում<sup>84</sup>:

Անձի կամ նրա մերձավորի սպանության սուբյեկտիվ կողմը՝ կապված տվյալ անձի կողմից հասարակական պարտքի կատարման կամ ծառայողական գործունեության իրականացման հետ, ունի իր առանձնահատկությունները: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունը,

<sup>84</sup> Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Խմբ. իրան. գիտ. դոկտոր **Գ.Ս. Ղազիսյանի**, Երևան, 2008:

որպես կանոն իրականացվում է վրեժի շարժառիթով, երբ սպանությանը կատարվում է տուժողի օրինաչափ գործունեությանը նկատման կամ էլ նրա կողմից իրականացվող ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, որը հանցավորի համար անցանկալի է<sup>85</sup>:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի քրեական պատասխանատվության հնարավոր է ենթարկել այն դեպքում, երբ հանցավորը նպատակ է ունեցել կասեցնել տուժողի պետական, քաղաքական կամ հասարակական գործունեությունը:

Այն դեպքում, երբ հանցավորի գործողությունները ուղղված են պետության սահմանադրական կարգի հիմունքների, պետության անվտանգության դեմ, ներառյալ պետական իշխանության ձևավորման կամ գործունեության խանգարումը, և բացի այդ ուղղված է օրինական իշխանության լիազորություններ իրականացնող անձանց առողջության դեմ, անհրաժեշտ է համարել պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություն:

Քննարկվող հանցակազմը անհրաժեշտ է սահմանազատել անհրաժեշտություններից, որը քննարկվում է հաջորդ ենթագլխում:

### **3.2. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի**

#### **սպանության հանցակազմի սահմանազատումը անհրաժեշտություններից**

Արդի ժամանակաշրջանի համար անհրաժեշտությունը<sup>86</sup> դարձել էր սպառնալիք ոչ միայն ազգային հետաքրքրությունների կամ որևէ այլ առանձին պետության անվտանգության հանդեպ, այլ նաև ընդհանուր համաշխարհային հանրության համար: Անհրաժեշտությունը մնում է ամենասուր ժամանակակից խնդիրներից մեկը: Իր կործանարար ազդեցությամբ անհրաժեշտությունը շոշափում է յուրաքանչյուր պետության հասարակական կյանքի բոլոր

<sup>85</sup> **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2010, էջ 42-43:  
<sup>86</sup> Մանրամասն տե՛ս **Թումանյան Բ.Ռ.** Անհրաժեշտության համար պատասխանատվության քրեաիրավական կարգավորումը. վիճակը, հիմնախնդիրները, միտումները: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2007; **Հարությունյան Ա.Գ.** Անհրաժեշտության դեմ պայքարի սահմանադրաիրավական հիմունքները: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2005; **Մնացականյան Տ.Ա.** Անհրաժեշտության վերաբերյալ քրեական գործերով քննության մեթոդիկան (ՀՀ ԱԱՕ Նյութերով): Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2011:



հիմնական ոլորտները: Այն վտանգի է ենթարկում պետության ներքին խմբերի և առանձին պետության ներքին միջև փոխհարաբերության ներքին կայունության նկատմամբ խաղաղ բնույթը, հանդես է գալիս որպես «կատալիզատոր» վտանգավոր միջազգային կոնֆլիկտների հրահրման ժամանակ, ոչնչացնում է դրանց կարգավորման բոլոր ջանքերը, առաջացնում է լարվածություն:

Միջազգային ոլորտում ահաբեկչությունը դարձել է ձևավորված միջազգային կանոնակարգի, մարդու և քաղաքացու իրավունքների քայքայման, ինքնավար պետության ներքին կյանքի միջամտության գործիք<sup>87</sup>: Նորմը, որը նախատեսում է պատասխանատվություն ահաբեկչության համար, տեղակայված է «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների» 23-րդ գլխում: Տվյալ հանցագործության համար պատասխանատվություն է նախատեսվում ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով:

Անհրաժեշտ է նշել, որ պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգությունը ահաբեկչությունից սահմանազատելու դեպքում «տարանջատումը» անհրաժեշտ է սկսել «ահաբեկչություն» հասկացության մեկնաբանությունից: Ժամանակակից ահաբեկչությունը բարդ, բազմաշերտ և հասարակության համար վտանգավոր երևույթ է:

Այդ երկու հանցագործությունները, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ և 305-րդ հոդվածներով, մեր կարծիքով, ամենից առաջ, ուղղված են պետության սահմանադրական կարգի և իշխանության բնականոն գործունեության դեմ<sup>88</sup>:

Այս առումով օրենսդիրը անհրաժեշտ է համարել այդ երկու գործողությունները գետեղել ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր գլուխներում (217-րդ հոդվածը տեղակայված է 23-րդ գլխում, «հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն», իսկ 305-րդ հոդվածը 28-րդ գլխում որպես «Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված

<sup>87</sup> Մանրամասն տե՛ս Уголовная юстиция: проблемы международного сотрудничества. М., 1995, էջ 41-61:

<sup>88</sup> Մանրամասն տե՛ս Седых А.В. Посягательство на жизнь государственного или общественного деятеля по уголовному праву Российской Федерации. Дисс. на соиск. уч. степени канд. юрид. наук. Казань, 2007, էջ 139-157:

հանցագործությունն»), ընդգծելով քրեաիրավական պաշտպանություն տրեկու տարբեր օբյեկտներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված՝ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն է հանդիսանում հասարակական անվտանգությունը: Հասարակական անվտանգությունն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների համախումբ, որը կարգավորում է հասարակության կյանքի բնականոն գործունեության անհրաժեշտ պայմանները:

Ահաբեկչության անմիջական օբյեկտը անձանց որոշակի շրջանակի, պետական և հասարակական կառույցների, հասարակության կենսական օբյեկտների դեմ ուղղված հասարակական հարաբերություններն են<sup>89</sup>: Միևնույն ժամանակ ահաբեկչությունը կարելի է բնորոշել որպես բազմօբյեկտ հանցագործություն<sup>90</sup>:

Ահաբեկչության օբյեկտիվ կողմը դրսևորվում է պայթյուն, հրկիզում կամ մարդկային զոհերի, գույքային վնաս պատճառելու կամ հանրորեն վտանգավոր այլ հետևանքների առաջացման սպառնալիքով: Այսպիսով ահաբեկչության օբյեկտիվ կողմը հանդես է գալիս երկընտրելի. պայթյուն, հրկիզում կամ հանրության նկատմամբ ուղղված այլ վտանգավոր գործողությամբ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, որի համար պարտադիր հատկանիշ է նպատակը: ՀՀ քրեական օրենսգրքի 217 հոդվածով նախատեսված գործողությունները կատարվում են հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչության և ահաբեկչության կամ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման վրա ներգործելու կամ հանցավորի ապօրինի այլ պահանջը կատարելու հարկադրելու նպատակով: Ահաբեկչության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսուկական ֆիզիկական անձը:

<sup>89</sup> Մանրամասն տե՛ս **Թամազյան Բ.Ռ.** Ահաբեկչության համար պատասխանատվության քրեաիրավական կարգավորումը. վիճակը, ինդիքները, միտումները: Սեղմագիր հրավ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2007; Նաև՝ **Հարությունյան Ա.Գ.** Ահաբեկչության դեմ պայքարի սահմանադրաիրավական հիմունքները: Սեղմագիր հրավ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2005:

<sup>90</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, Էջ 491: Նաև՝ Уголовное право России. Том 2. Особенная часть. М., 1998, Էջ 617-618; Уголовное право. Особенная часть. М., 1997, Էջ 576-577:

ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը համարվում է ավարտված պայթյունի, հրդեհման կամ այլ գործողությունների (որոնք ուղղված են հասարակական անվտանգության խախտմանը) կատարման պահին, որոնք ահաբեկում են բնակչությանը և առաջացնում են մարդու մահվան վտանգ, պատճառում են զգալի նյութական վնասներ կամ այլ ծանր հետևանքներ, ազդում են իշխանության մարմինների կամ միջազգային կազմակերպությունների կողմից որոշումների կայացման գործընթացի վրա (այսինքն՝ ֆիզիկական վնասի պատճառման, նյութական կորուստի դեպքում և այլն), ինչպես նաև այն դեպքում, երբ առաջացել է նշված գործողությունների կատարման սպառնալիք (այսինքն՝ ստեղծվում է իրական հնարավորություն նշված վնասի պատճառման համար): Այդ պատճառով մենք կիսում ենք այն գիտնականների դիրքորոշումը, որոնք ահաբեկչական գործողությունը վերագրում են հանցագործությունների նյութական կազմին<sup>91</sup>:

Ե՛վ ահաբեկչական գործողության (ՀՀ քր. օր-ի 217 հոդված), և՛ պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգության (ՀՀ քր. օր-ի 305-րդ հոդված) օբյեկտիվ կողմը իրականացվում է գործողությունների միջոցով: Սակայն, դրանց կատարման համընդհանուր վտանգ ներկայացնող մեթոդը հանդիսանում է միայն ահաբեկչական գործողության կոնստրուկտիվ հատկանիշ<sup>92</sup>:

Օրինակ, պայթյունը հանդիսանում է սպառնալիքի կամ վախեցման միջոց, և որպես կանոն, կրում է մեղավոր անձանց ողջ վճռականության դրսևորման մեթոդի բնույթ: Միևնույն ժամանակ պայթյունը հանդես է գալիս որպես ոտնձգության միջոց պետական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ:

Մեր կարծիքով այդպիսի արդյունքը ահաբեկչական գործողության դեպքում ձեռք է բերվում ոտնձգության անմիջական օբյեկտի, (օրինակ՝ շենք, կառույց) կամ սուբյեկտի (օրինակ, մարդ, մարդկանց խումբ) պատահական ընտրության ճանապարհով:

<sup>91</sup> Ст' у Курс уголовного права. Том. 4. Особенная часть/под. Ред. Г.Н. Борзенкова и В.С. Комиссарова, - М.: ИКД "Зерцало-М". 2002, Ст 213:

<sup>92</sup> Ст' у Емьянов В.П. Уголовная ответственность за терроризм и преступления с признаками терроризирования: Дисс. ...док. юрид. наук. М., 2001, Ст 14-15:

Բացի դրանից մարդու մահվան վտանգի, զգալի սեփականության կորուստի կամ այլ ծանր հետևանքների հանգամանքների ստեղծումը իրենից ներկայացնում է ահաբեկչական գործողության օբյեկտիվ կողմի պարտադիր տարր: Վտանգի հանգամանքը որոշվում է հնարավոր հետևանքների հավանականության աստիճանով, օրինակ՝ սպասվող պայթյունից կամ հրդեհից բխող ավերումների մասշտաբով թունավորող նյութերի գործածման հետևանքով զոհերի քանակով, ինչպես նաև այն գնահատվում է այն անձանց մասին առկա տեղեկատվության հաշվառմամբ (նրանց քանակը, փորձը և մասնագիտությունը), որոնք մտադիր են կատարել ահաբեկչական գործողություն:

«Զգալի նյութական վնաս» կատեգորիան որպես հանցագործության սուբյեկտների ահաբեկչական գործողությունների հետևանք կրում է գնահատվող բնույթ, այդ պատճառով յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում այն կորոշվի տարբեր ձևով, օրինակ՝ հաշվի առնելով նյութական օբյեկտի արժեքը, նրա նշանակությունը (ենթակառուցվածքի օբյեկտ, մշակույթի հուշարձան), տուժողների նյութական վիճակը և այլն<sup>93</sup>:

Այլ ծանր հետևանքներ ասելով՝ հասկանում ենք հետևանքներ, որոնք կարելի է համակցել զգալի սեփականության վնասի հետ, օրինակ՝ վնաս տնտեսության օբյեկտներին (արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության մարմիններին, մարդկացի մահ և այլն): Իր հերթին առողջությանը թեթև վնասի պատճառումը, սեփականության ոչ զգալի վնասները և նմանատիպ այլ հետևանքներ, չեն ներառում «այլ ծանր հետևանքներ» հասկացության մեջ, սակայն անհրաժեշտ է դրանք դիտարկել որպես մարդու մահվան վտանգի, զգալի սեփականության վնասի կամ այլ ծանր հետևանքների վտանգ, պարունակում են տարր, որը կազմում է ահաբեկչական գործողության էությունը՝ ահաբեկումը: Բնակչության ահաբեկումը չի հանդիսանում ահաբեկչական գործողություն իրականացնող սուբյեկտի միակ նպատակը:

Ահաբեկումը կրում է ժամանակավոր բնույթ և հանդես է գալիս այլ նպատակների ձեռք բերման միջոց: Օրինակ՝ վախի և սարսափի

<sup>93</sup> Ст' у Актуальные проблемы уголовного права. Под. ред. И.А. Подройкина. М., 2016, էջ 97-98:

պայմաններում իր մասին հայտարարելն ու որևէ պահանջներ ներկայացնելը կլինի ավելի ծանրակշիռ: Ահաբեկման յուրաքանչյուր միջոցառում իրենից ներկայացնում է կոնկրետ քաղաքական խնդիրների և լուծման փորձ, իսկ քաղաքական գործչի դեմ բռնությունը հանդես է գալիս միայն տվյալ երկրում իրականացվող քաղաքականության պահպանման կամ փոփոխման միջոց:

Վախի և սարսափի վիճակը նպատակաուղղված է այն հաշվարկներով, որ այն պետք է ազդի վերջնական նպատակի վրա՝ որպես ահաբեկչական գործողություն իրականացնող սուբյեկտների կողմից օգտագործվող ստիպողականության միջոց:

Ի տարբերությունն պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության՝ ահաբեկչության սուբյեկտ կարող է լինել ցանկացած մեղսուհական, ում տասնվեց տարին լրացել է:

ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածի հանցակազմի սուբյեկտիվ կողմը, մեր կարծիքով, բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

Մեղավոր անձը գիտակցում է, որ իրագործում է հակաիրավական գործողություններ, դրանով իսկ իր գործողություններով առաջացնում է մարդու մահվան, զգալի սեփականության վնասի կամ այլ ծանր հետևանքների սպառնալիք՝ ցանկանալով կատարել գործողություններ և հասնել սպառնացող հետևանքների: Պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգության նպատակը հանդիսանում է ձգտումը դադարեցնել կոնկրետ անձի պետական կամ հասարակական գործունեությունը, վերջինիս կյանքի հանդեպ ոտնձգության ճանապարհով:

Ահաբեկչական գործունեության նպատակն է հանդիսանում ազդեցությունը իշխանության մարմինների կամ միջազգային կազմակերպությունների կողմից որոշումների կայացման գործընթացների վրա ի օգուտայն անձանց, ովքեր իրականացնում են ահաբեկչական գործունեություն, բնակչության մոտ վախի մթնոլորտի ստեղծման միջոցով: Ահաբեկչական գործողությունները կարող են իրագործվել պատահական ընտրության ճանապարհով այն մարդկանց իրական մահվան միջոցով, որոնք, որպես կանոն, չունեն առնչություն որոշումների

կայացման և ՅՅ քր. օր. 217-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններ իրականացնող սուբյեկտների պահանջների բավարարման հետ:

Ընդհանուր առմամբ, եթե ընդհանրացված խոսենք ահաբեկչական գործողությունների նպատակների մասին, որոնք կարող են հետապնդել սուբյեկտները, ապա դրանք ուղղված են իրականացված և իրականացվելիք գործողությունների հրապարակմանը՝ «ինքնագովազդ», իրենք իրենց ցուցադրողությունը, որպեսզի գտնեն ըմբռնում, ստանան համակրանք և ապահովեն աջակցություն բնակչության կողմից: Պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգության դեպքում նպատակ է դրվում նրա պետական կամ հասարակական գործունեության դադարեցման համար:

Ահաբեկչական գործողության իրականացման ժամանակ կոնկրետ պահանջների ներկայացումը, օրինակ՝ կապված պետության սահմանադրական կարգի, տարածաշրջանային սահմանների փոփոխության հետ, հանցագործների ազատ արձակման, պետության արտաքին քաղաքականության փոփոխման, դրամական միջոցների, տրանսպորտային միջոցների, զենքի, զինամթերքի, թմրանյութերի և այլնի տրամադրման հետ, վկայում են հանցագործության նպատակաուղղված բնույթի մասին և հետևաբար ուղղակիորեն կանխամտածված մեղքի մասին:

Քննարկվող երկու հանցագործությունների համար էլ (ՅՅ քր. օր. 305-րդ և 217-րդ հոդվածներ) բնութագրական է այն, որ փոխազդեցության ահաբեկչական ռազմավարության և մարտավարության օգտագործման ցանկության հիմքում ընկած է ձգտումը՝ իրագործել իշխանության հանդեպ իրենց պահանջները ծախսերի և արդյունքի հարաբերակցության տեսանկյունից արդյունավետ մեթոդներով<sup>94</sup>:

ՅՅ քր. օր. 305-րդ հոդվածով նախատեսված նպատակը տարբերվում է ՅՅ քր. օր. 217-րդ հոդվածում նշված նպատակներից: Բացի դրանից, ի տարբերություն պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգության, ահաբեկչական գործողության սուբյեկտի վկայում չի պարունակում հատուկ շարժառիթ:

<sup>94</sup> **Տե՛ս** Устинова В.В. **Международный опыт борьбы с терроризмом: стандарты и практика.** - М.: ООО Изд.во "Юрлитинформ", 2002, էջ 63:

Նշենք նաև, որ ահաբեկչական գործողությունները կարող են իրականացվել տարբեր միջոցների գործադրմամբ: Հրազենի գործադրմամբ ընթացող ահաբեկչական գործողության իրականացման ներքո հասկացվում է գործողության կատարում սարքավորման և առարկայի միջոցով, որոնք նախատեսված են կենդանի կամ այլ նպատակի պարտության համար, որի միջոցով ֆիզիկական վնաս է պատճառվում տուժողներին, և կարող է հանդիսանալ որպես հոգեբանական ճնշման միջոց:

Հրազեն ասելով անհրաժեշտ է հասկանալ ռազմական, ծառայողական կամ քաղաքացիական զենքերի բոլոր տեսակները, այդ թվում նրանք, որոնք պատրաստված են ինքնաշեն մեթոդով և նախատեսված են ռումբի միջոցով, հեռավորության վրա նպատակի պարտության համար: Դրանց թվին են դասվում հրատուները, կարաբիները, ատրճանակները, որսորդական և սպորտային հրացանները, ավտոմատները և գնդացիները, ականանետերը, նռնակները հրանոթները և ավիացիոն թնդանոթները, ինչպես նաև հրազենի այլ տեսակներ անկախ տրամաչափից: Օդաճնշման հրացանները, ազդանշանային, սպորտային, մոնտաժային ատրճանակներն ու հրացանները, էլեկտրաշոկային սարքավորումները, առարկաները, որոնք սերտիֆիկացված են իբրև տնտեսական և արտադրական նշանակության ապրանքներ, սպորտային ռումբերը, որոնք կառուցվածքով նման են զենքի, չեն պատկանում զենքի թվին, բայց եթե դրանք կիրառվում են կենդանի նշանակետը ոչնչացնելու համար, ապա ձեռք են բերում զենքի կարգավիճակ<sup>95</sup>:

Ահաբեկչության հատուկ որակավորված տեսակներին է պատկանում խմբի կողմից կազմակերպված հանցագործության իրականացումը, մարդուն անզգուշությամբ մահ պատճառելը կամ այլ ծանր հետևանքներ, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի կիրառումը: ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի

<sup>95</sup> **St'u** Курс уголовного права. Том 4. Особенная часть/под.ред. Г.Н. Борзенкова и В.С. Комисарова. - М.: ИКД "Зерцало-М", 2002, էջ 216:

հանցանքներ կատարելու համար<sup>96</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածի 3-րդ մասի նորմը կրում է բլանկետային բնույթ: Նշենք նաև, որ 1999 թվականի փետրվարի 1-ի խաղաղ նպատակներով «Ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» N285 ՀՀ օրենքը (3-րդ հոդված) պարունակում է հիմնական սահմանումները, որոնք օգտագործված են ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածի 3-րդ մասում, «միջուկային սովեր» (ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներ), «միջուկային նյութեր», «ռադիոակտիվ նյութեր» և «ռադիոակտիվ ճառագայթման աղբյուր» (ռադիացիոն աղբյուրներ)<sup>97</sup>:

Միջուկային սարքերը (ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներ), դրանք կառույցներ և համալիրներ են միջուկային ռեակտորներով, այդ թվում՝ ատոմակայաններ, նավեր և այլ լողացող միջոցներ, տիեզերական և թռչող սարքեր, այլ տրանսպորտային և փոխադրման միջոցներ, արդյունաբերական, փորձարարական և հետազոտական միջուկային ռեակտորներով, կրիտիկական և ենթակրիտիկական միջուկային ստենդներով կառույցներ և համալիրներ, խաղաղ նպատակներով օգտագործվող միջուկային լիցքերով համալիրներով կառույցներ, հրաձգարաններ, սարքեր և սարքավորումներ, միջուկային լիցքեր պարունակող այլ կառույցներ և համալիրներ, միջուկային վառելիքի և միջուկային նյութերի արտադրության, օգտագործման, վերամշակման, փոխադրման համար:

Միջուկային նյութերի ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ ճառագայթման աղբյուրների օգտագործման ներքո հասկացվում է դրանց փաստացի կիրառումը սուբյեկտների կողմից (\$իզիկական հատկանիշների օգտագործում) պայթյունի կամ այլ գործողության իրականացման համար, որոնք առաջացնում են մարդու մահվան վտանգ, զգալի սեփականության վնաս կամ այլ հասարակության համար վտանգավոր հետևանքներ (օրինակ, տեղանքի ռադիոակտիվ աղտոտում), եթե այդ գործողությունները իրականացվել են հասարակական անվտանգության խախտման, բնակչության ահաբեկման կամ իշխանության մարմինների կողմից

<sup>96</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ N 25 (260) 02.05.03:

<sup>97</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ N285 (72) 01.02.1999:



որոշումները կայացման գործընթացին ազդեցություն և ցուցաբերման նպատակով:

Միջուկային նյութեր ասելով հասկացվում են նյութեր, որոնք պարունակում են կամ կարող են վերարտադրել կիսվող (քայքայվող) միջուկային նյութեր: Ռադիոակտիվ նյութերը, դրանք միջուկային նյութերին չպատկանող նյութեր են, որոնք ունեն իոնացված ճառագայթում: Ռադիացիոն աղբյուրները դրանք միջուկային տեղանքներին չպատկանող համալիրներ են, ապարատներ, սարքավորումներ և արտադրանքներ, որոնցում պարունակվում են ռադիոակտիվ նյութեր կամ գեներացվում է իոնացված ճառագայթում:

Նշենք նաև, որ 217-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ահաբեկչության նախապատրաստությանը մասնակցած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին ժամանակին հայտնելով կամ այլ միջոցներով, նպաստել է ահաբեկչության խափանմանը, և եթե նրա գործողությունները այլ հանցակազմ չեն պարունակում<sup>98</sup>:

Այսպիսով, ահաբեկչությունը տարբերվում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ունեցվող ռիսկից հետևյալ հատկանիշներով.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հիմնական անմիջական օբյեկտ է հանդիսանում հասարակական անվտանգությունը:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը համարվում է ավարտված պայթյունի, հրդեհման կամ այլ գործողության իրականացման պահին (որոնք ուղղված են հասարակական անվտանգության խախտմանը), որոնք ահաբեկում են բնակչությանը և առաջացնում են մարդու մահվան, զգալի սեփականության կորուստի և այլ ծանր հետևանքների վտանգ, որոնք ազդում են իշխանության մարմինների կամ միջազգային կազմակերպությունների կողմից որոշումների կայացման գործընթացի վրա (այսինքն՝ ֆիզիկական վնասի, սեփականության կորուստի պատճառման փաստացի պահին), ինչպես նաև այն պահին, երբ

<sup>98</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ N 25 (260) 02.05.03:

ստեղծվել էր նշված գործողությունների կատարման սպառնալիք (այսինքն ստեղծվում է իրական հնարավորություն նշված վնասի պատճառման համար):

3. Իրականացման ընդհանուր վտանգավոր մեթոդը հանդիսանում է միայն ահաբեկչական գործողության կոնստրուկտիվ հատկանիշը:

Բացի դրանից, մարդու մահվան վտանգի, զգալի սեփականության վնասների կամ այլ ծանր հետևանքների առաջացման պայմանների ստեղծումը իրենից ներկայացնում է ահաբեկչական գործողության օբյեկտիվ կողմի պարտադիր տարր:

4. Ահաբեկչական գործողության նպատակը տարբերվում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության նպատակից: Բացի դրանից, ի տարբերություն պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգության, ահաբեկչական գործունեության կազմը չի պարունակում հատուկ շարժառիթ:

Սահմանազատելով պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմը այլ համասեռ հանցակազմերից, հարկ է նշել, որ այն ունի նաև իր քրեաիրավական որակման առանձնահատկությունները, որի հիմքում դրված են այն ելակետային դրույթները, տարբերակիչ հատկանիշները, որոնք սահմանազատում են հանցակազմերը միմյանցից: Որակել արարքը, նշանակում է կատարված հանցավոր գործողությանը տալ իրավաբանական գնահատական: Իսկ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության որակման առանձնահատկությունն ասելով պետք է հասկանալ որակման ընթացքում կիրառվող այն բոլոր հատկանիշների ամբողջությունը, որոնք հատուկ են միայն տվյալ հանցագործության համար: Այդ հատկանիշները պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմը այլ հանցակազմերից սահմանազատող հիմքերն են, որոնք նշված են աշխատության մեջ:

Այդ հիմքերի թվին են պատկանում իրավական նորմերի մեկնաբանությունները, սուբյեկտիվ և օբյեկտիվ հատկանիշների համեմատությունները, ինչպես նաև տարբեր հեղինակների կարծիքները: Նշենք նաև, որ արարքի ճիշտ որակումը արդարադատության իրականացման հարցում ունի որոշիչ

Նշանակություն, որի համար կարևոր է համապատասխան իրավական նորմի դիսպոզիցիայի ճիշտ կառուցումը և այլ հանցակազմերից սահմանազատումը:

#### **ԳԼՈՒԽ 4**

**ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ  
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

#### 4.1. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության պատճառների հիմնախնդիրները

Այն պիսի կարևորագույն արժեքների նկատմամբ, ինչպես մարդու կյանքն է, հանցավոր արարքների հաջող կանխարգելումը ուղղակիորեն կախված է դրա պատճառների ուսումնասիրությունից: Ցանկացած հանցագործություն, այդ թվում նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգությունը պայմանավորված է, որպես կանոն, ոչ մեկ պատճառով, այլ ներքին և արտաքին պատճառների և հանգամանքների համալիրով<sup>99</sup>:

Արդի ժամանակաշրջանում հայ հասարակության առջև ծառայած մարտահրավերների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կենսագործման վերաբերյալ իր ելույթում նշել է, որ «Սահմանադրական փոփոխությունների իրականացման այս փուլում կարևոր էմ համարում ապագայի մասին մեր պատկերացումները ևս մեկ անգամ բարձրաձայնելը: Եվս մեկ անգամ հնչեցնենք մեր գաղափարները: Նորից հարցնենք ինքներս մեզ, թե ինչպե՞ս ենք տնօրինելու մեր պետության, մեր ժողովրդի ժառանգությունը: Ինչպե՞ս ենք պահպանելու ու բազմապատկելու այն: Ինչպիսի՞ն ենք ուզում լինի Հայաստանը վաղը, տասը կամ քսան տարի հետո<sup>100</sup>»:

Այս առումով գտնում ենք, որ պետական-իրավական քաղաքականության առաջնահերթություններից է արդյունավետ պայքարը հանցավորության դեմ: Իսկ դրա համար անհրաժեշտ է բացահայտել ընդհանրապես հանցավորության, այնպես էլ քննարկվող հանցագործության պատճառները և նպաստող պայմանները:

Մեր կարծիքով, հանցավորության պատճառներն ու պայմանները սոցիալական և հոգեբանական են, ինչպես իրենց ծագման, այնպես էլ ըստ էության: Այն գործոնների ամբողջության մեջ, որոնք կազմում են հանցագործությունների կատարմանը նպաստող պայմաններ,

<sup>99</sup> Տե՛ս **Лунеев В. В.** Криминология. М., 2014. Էջ 139-140:

<sup>100</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության» օրաթերթ, 13 փետրվար 2016, թիվ 25(6307):

կարող են գործել նաև շրջապատող միջավայրը, ոչ պատշաճ մակարդակի ուսումը և դաստիարակությունը, խեղված վարքագիծը և բարոյական «արժեքները» և այլն: Սակայն այդ գործոնների քրեածին լինելը պարտադիր կերպով պայմանավորված է հիմնականում սոցիալական պայմանների հետ փոխներգործությամբ: Հանցագործությունների կատարման պատճառները պարզելը անհրաժեշտ է համարում սահմանել այն երևույթների և գործընթացների համակցությունը, որոնք գտնվում են հանցավորության և հանցագործությունների հետ պատճառահետևանքային կապի մեջ<sup>101</sup>:

Քանի որ կոնկրետ հանցագործության պատճառները պահանջում են յուրաքանչյուր դեպքում անհատական ու ումնասիրություն, մեր հետազոտության համար հետաքրքրություն են ներկայացնում սոցիալական մակարդակի դետերմինանտները, այսինքն՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգության դետերմինանտները:

Սակայն սկզբում կցանկանայի նշել ըստ կոնկրետ հանցագործարարքի դետերմինանտների որոշ ընդհանուր դրույթներ: Մարդկային ցանկացած արարք իրենից ներկայացնում է անհատի հատկությունների և կոնկրետ վարքագծային որոշման ընդունման օբյեկտիվ իրավիճակի փոխարարություն: Կոնկրետ հանցագործության կատարումը, այսպիսով, հանդիսանում է անհատի բարոյական ձևավորման անբարենպաստ պայմանների ազդեցությամբ ստեղծված անհատի բացասական բարոյահոգեբանական հատկությունների և հանցագործության իրավիճակը ձևավորող արտաքին օբյեկտիվային հանգամանքների (քրեածին իրավիճակի) փոխգործունեություն:

Հղվելով դրանից, հանցագործության պատճառի տակ ընկալում են սոցիալական միջավայրի քրեածին գործոնների (արտաքին պայմանների) և անհատի հակահասարակական հատկությունների (ներքին պայմանների) դիալեկտիկ փոխգործունեություն, որոնք հանգեցնում են անհատին հանցագործության որակով քրեական օրենքով նախատեսված հասարակական վտանգավոր արարքի

<sup>101</sup> Տե՛ս **Кудрявцев В.Н.** Стратегии борьбы с преступностью. М., 2003, էջ 14-20:

կատարմանը:

Այսպիսով յուրաքանչյուր առանձին հանցագործությունը նդետերմինացվում է, մի կողմից տվյալ անհատի անհատական առանձնահատկություններով՝ նրա պահանջներով, հետաքրքրություններով, դրդապատճառներով, նպատակներով, իսկ վերջնական արդյունքում, տարբեր սոցիալական արժեքների և դրույթների, այդ թվում իրավական կարգադրագրերի և արգելքների նկատմամբ տեսանկյուններով և վերաբերմունքով, մյուս կողմից՝ արտաքին օբյեկտիվային հանգամանքների համախմբով, որոնք ծնում են կանխամտածված հանցագործության իրականացման մտադրություն և վճռականություն:

Վերը շարադրված դրույթները նշում են սոցիալական իրականության հետ անհատի փոխազդեցության երկու փուլերը կոնկրետ հանցագործության կատարման դեպքում. անհատի բարոյական ձևավորման փուլ և հանցագործության կատարման կոնկրետ իրավիճակի փուլ: Անհատի բարոյական ձևավորման անբարենպաստ պայմանների փուլում ստեղծվում են հոգեբանական նախադրյալեր, տվյալ անձի կողմից հանցագործության կատարման հնարավորություն: Կոնկրետ քրեածին իրավիճակի փուլում նման հնարավորությունը իրականացվում է:

Այս երկու փուլերում արտահայտվում է ընդհանուր հանցավորության պատճառների և պայմանների կապը առանձին հանցագործության պատճառների և պայմանների հետ: Հանցագործության պատճառները և պայմանները իրենց տարբեր կողմերով «ներածվում» են անհատի բարոյական ձևավորման անհատական պայմանների մեջ, արտահայտվում դրանց բովանդակությունում և միաժամանակ սահմանում կոնկրետ իրավիճակներ, որոնցում հայտնվում և գործում է անհատը<sup>102</sup>: Իրենց հերթին, առանձին հանցագործությունների պատճառները անհատական մակարդակում արտացոլում են հանցագործության պատճառները և կոնկրետ իրավիճակները, որոնք ծագում են իրականության մեջ: Կոնկրետ հանցագործությունների պատճառները և պայմանները հանդիսանում են քրեածին համակարգի

<sup>102</sup> **Մանրամասն տե՛ս** Криминология: Учебник для вузов /Под ред. Г.А. Аванесова. М., 2015. С 283-284:

առաջնային տարրեր:

Իրավաբանները, սոցիոլոգները և փիլիսոփաները հանցագործության ներկայիս մակարդակը կապում են խորը սոցիալական կախվածությունների հետ, որոնք շոշափում են հասարակական գոյի և հասարակական գիտակցության հարաբերությունների ամբողջ համախումբը: Ըստ նրանց տեսանկյան փոխակերպվող հասարակության ճգնաժամի կարևոր պայմաններից մեկը հանդիսանում է արտադրության պատմականորեն ձևավորված հնարավորությունների սպառումը, որը հենված է հումքային ռեսուրսների իրականացման, երկրի առկա բնակչության թվի և հասարակության սոցիալական կառույցների վրա: Այսպես, ինչպես նշում է փիլիսոփայության գիտությունների դոկտոր Մ.Ա. Չարությունյանը. «Ակնհայտ է, որ սոցիալական կառուցվածքի ամենաբազմամարդ խավը բնակչության սոցիալապես անպաշտպան ու իրավագուրկ խավն է: Այն առասպելագուրկ «հայ ժողովուրդն է իր ամենօրյա առարկայական հոգսերով և աներևակայելի սոցիալական տվյալ տանքներով», հակառակ ամեն ինչի «թուլնելի վերջում» ինչ-որ լույս տեսնելու առօրեական հերոսականությամբ: Չենց այդ ժողովուրդն է համապարփակ օտարված հայրենի իշխանություններից ու բիզնեսից՝ տնտեսական և սոցիալական դաժան իրողությունների հետևանքով: Նրա կենսական եռանդ-ուժը ծախվում է ամենօրյա անասնացնող նյութական մտահոգությունները բավարարելու վրա»<sup>103</sup>:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ունի ձգություն կատարման դետեմինացնող պատճառները և պայմանները առանց նշելով՝ անհրաժեշտ է նշել, որ խոսք է զուգորդվում սոցիալական ինչ-որ առանձին համալիրի վերաբերյալ: Այդ հանցագործությունների պատճառների և պայմանների էական հատված հիմնականում, և, իրենց հերթին, ներառում են հանցագործության այլ տեսակների, մասնավորապես բռնի ուժով և կազմակերպված հանցագործությունների դետեմինանտներ:

ՀՀ ԶՕ հոդ. 305-ով նախատեսված արարքի կատարման պատճառների և պայմանների ամբողջ բազմությունից անհրաժեշտ է առանձնացնել

<sup>103</sup> **Չարությունյան Մ.Ա.** Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը: Երևան, 2014, էջ 481:

սոցիալական, իրավական, բարոյական բնույթի գործոնները: Հանցագործության պատճառները և պայմանները ըստ ծագման սոցիալական են, դրանք միշտ ներառված են հասարակության սոցիալական հակասությունների համակարգում: Բռնության առանձին աղբյուրներ արմատավորվում են, ամենից առաջ, հասարակության կառուցվածքում առանձին խմբերի և անհատների կարգավիճակների անհավասարության մեջ պայմանավորված հասարակական արտադրության և սոցիալական բարիքների բաշխման համակարգերում նրանց տեղի հետ:

Մարդկությունը իր գոյության ամբողջ ընթացքում երազում է հավասարության վերաբերյալ, և այդ իսկ պատճառով իրավիճակները, որոնցում անձը զգում է մյուսների հետանհավասար, առաջացնում է բողոք, որը երբեմն արտահայտվում է ոչ օրինական և նույնիսկ հանցագործ ձևով:

Բռնության խնդիրը միշտ ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն հասարակության զարգացման կտրուկ քաղաքական և սոցիալ-տնտեսական հեղաշրջումների շրջաններում: Բռնությունը, հանդիսանալով հասարակության գոյության անբաժանելի հատված, արտացոլում է դրա շերտավորված համակարգի հարաբերական կայունությունը և հավասարակշռությունը: Անցումային շրջանի հասարակության մեջ խախտվում է այդ հարաբերական հավասարակշռությունը և այս կամ այն խմբերի կարկավիճակների կտրուկ վաթարացումը հանգցնում է բռնության: Տեղի է ունենում «շղթայական ռեակցիա»՝ քաղաքական և տնտեսական ճգնաժամի սրումը առաջացնում է սոցիալական լարվածություն, ավանդական հոգևոր արժեքների, մարդկային կյանքի արժեքազրկում, դաժանության և բռնության աճ, հաճախ նաև անձանց նկատմամբ, որոնք հասարակությունում իրականացնում են պետական կամ հասարակական խնդիրների համալիր:

Անհրաժեշտ է նշել, որ հասարակական հնչեղություն ունեցող քաղաքական սպանությունների և պետական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգությունների սերիան պահանջում է համապատասխան վերլուծություն մեր կողմից հետազոտող արաքների քաղաքական բնույթի ընդհանուր դետերմինանտների



առանձնացման համար :

Առաջինը բացարձակ պարզ է, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքին ցանկացած ոտնձգությունը՝ դա իշխանության վերաբերյալ հարց է, կամ պետական կառավարման ոլորտում, կամ հզոր հասարակական կառույցների գործունեության ոլորտներում:

Երկրորդը՝ հնչեղ «քաղաքական» սպանությունների շարքը 90-ական թվականների, վկայությունն է նրա վերաբերյալ, որ հայ հասարակարգը մուտք է գործում քաղաքական կազմակերպությունների շրջան թուլացված վիճակում, երկարատև ճգնաժամի եզրագծում:

Երրորդը՝ հատկապես քաղաքացիական հասարակության թուլության և խոցելիության թիրախը փորձում են ցուցադրել «հնչեղ» հանցագործությունների պատվիրատուները և/կամ նախաձեռնողները: Դա բոլոր դեպքերում դեռ ցուցադրությունն է սպանություններից որևէ մեկը չի սպառում իշխանության ապակառուցմանը և երկրի անվտանգությանը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգության պատճառները անհրաժեշտ է որոնել նաև տնտեսական հարաբերություններում, դրանց հակասություններում, սոցիալ-տնտեսական մեխանիզմի անհավասարակշռվածության, տնտեսական արատների և թերությունների, ինչպես նաև հարաբերությունների բաշխման համակարգի մեջ: «Շուկայական հարաբերությունները էականորեն հղի են հանցագործությամբ: Դա բացատրվում է նրանով, որ դրանք հենված են մրցակցության վրա (որը իրականացվում է՝ մրցակիցների ճնշմամբ, ընդ որում հաճախ դրամական միջոցների, ծրագրավորված հավելյալ աշխատուժի, այսինքն գործազրկության, հնարավորինս մեծ չափերով շահույթի ստացման, նույնքան ծրագրավորված մարդկանց ունեցվածքային և սոցիալական շերտավորման հիման վրա)<sup>104</sup>:

Գործունեության բոլոր ոլորտներում հասարակական-տնտեսական հարաբերությունների աստիճանական բարեփոխությունները, որոնք հանգեցրին արտադրության անկման,

<sup>104</sup> **St`u** Лунеев В.В. Криминология: М., 2014, Էջ 258-259:

շրջանների միջև տնտեսական կապերի կայունության խզման և տնտեսական բնույթի այլ անսարքությունների, հանդիսացան նախկին կյանքի ամբողջ կարգավիճակի փոփոխության պատճառ:

Գործազրկությունը բռնության դրդապատճառի ձևավորման դասական քրեածին նախադրյալ է, որին բախվում է երիտասարդությունը, որը սոցիալական նախապատրաստման կամ աշխատանքային փորձի բացակայության ուժով առավել հաճախ ստանում է աշխատանքի ընդունման մերժում, և այդ իսկ պատճառով դասվում է բնակչության ոչ միայն առավել խոցելի կատեգորիայի, այլ նաև հատուկ ռիսկի խմբին: Գործազուրկ երիտասարդ անձանց մեծամասնությունը ընդգրկվում է տարբեր տեսակի հանցավոր խմբավորումներում:

Տարիներով մարդկանց սոցիալական և մասնագիտական խմբերի նկատմամբ ցուցաբերված սոցիալական անարդարությունը ձևավորում է համընդհանուր դժգոհություն շրջապատի, կյանքի, իշխանության նկատմամբ, այն հեշտությամբ վերածվում է կոնֆլիկտային իրավիճակների դրա բռնի լուծման կոնկրետ դրդապատճառներում:

Բարձրաձայնելով սոցիալական անհավասարության և սոցիալական անարդարության՝ ունևորների և բնակչության աղքատացված մեծամասնության միջև առաջացած խզումի պատճառը հայ հասարակության միջև պետք է փնտրել՝ կենսամակարդակի աղետալի անկման, սոցիալական դիրքի ու վիճակի աննախդեպ վարընթաց շարժման մեջ, որոնց վճռորոշ ցուցանիշը համատարած և համընդհանուր աղքատությունն է<sup>105</sup>:

Իհարկե, նույնիսկ ծայրահեղ անբարենպաստ նյութական կարգավիճակը դժվար կարելի է գնահատել որպես գործոն, որը անմիջական ազդում է հատկապես պետական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգության կատարման վճռականության ծագման վրա: Դիտարկված կարգավիճակի քրեածին նշանակությունը արտահայտվում է աստիճանական՝ մարդու մոտ սոցիալական արատավորության, անբավարարության, կարիքավորության զգացողության ծագման մեջ՝ դրա

<sup>105</sup> Տե՛ս **Չարությունը նյան Մ.Ա.** Չայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը: Երևան, 2014, էջ 480:

մասնակցության միջոցով: Նման տրամադրվածությունը իրավիճակի հետ միացության մեջ է, որը ընդգծում է մարդու մոտ սոցիալական անլիարժեքության կոմպլեքսի առկայությունը և արդիականացնում այդ կոմպլեքսը, որը կարող է վերածվել հանցագործ արարքի բավականին անմիջական պատճառի:

Սոցիալ-տնտեսական երևույթների և հանցագործ պատճառների միջև փոխկապվածությունը չի հանդիսանում ուղիղ և անմիջական միջոց, այլ միջնորդվում է գաղափարախոսության, բարոյականության, մշակույթի, մարդկանց սոցիալական հոգեբանության, նրանց տեսանկյունների, կարծիքի, ավանդույթների, նորածնության, կյանքի նյութական պայմանների և հանցագործության սուբյեկտների գործունեության, կոնկրետ կենսական իրավիճակների միջոցով, այսինքն բնավորության սոցիալական իրականության բոլոր մակարդակների միջոցով:

Նշված բացասական սոցիալ-տնտեսական, քաղաքական և սոցիալ-ժողովրդագրական երևույթները, չպետք է մարդուն անփոփոխ հանգեցնեն մեր կողմից քննարկվող հանցագործ ուղղուն: Հանցագործ վարքագիծը հիմնականում կախված չէ մարդու կենսապայմաններից, այլ նրանից, թե ինչպես են այդ պայմանները ընկալվում և գնահատվում վերջինիս կողմից: Եվ այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալ-հոգեբանական, բարոյական կարգի գործոնների ազդեցությունը: Մարդու և հասարակության կենսագործունեության որևէ ոլորտ չի կարող ազատ լինել բարոյական արժեքներից և դրույթներից:

Հանցավորության անուղղակի, իսկ որոշ դեպքերում ուղղակի (օրինակ բացերը իրավունքում, իրավական անորոշությունը, իրավական հակասությունները, այսինքն՝ ոչ պատշաճ իրավակարգավորումը) պատճառներից է նաև իրավական, այդ թվում քրեաիրավական ոլորտի հարցերի պատշաճ կանոնակարգումը:

Իրավակարգավորումների բացերի լրացումը ազգային իրավական համակարգում հիմնականում կատարվում է երկու եղանակով՝ իրավաստեղծ և նախադեպային (դատական և վարչական): Ներկայումս սահմանադրական փոփոխությունների հետևանքով անհրաժեշտություն է առաջացել ընդունել մոտ 300 օրենսդրական

ակտերի (այդ թվում նոր քրեական օրենսգիրք) փաթեթ:

Ուշագրավ է, որ դեռևս սահմանադրական բարեփոխումների իրականացումը, հայ գիտնականները քննարկվող հարցի առնչությամբ ՀՀ նոր քրեական օրենսգրքի մշակումը իրավացիորեն դիտարկում էին և շարունակում են դիտարկել որպես գիտակցված անհրաժեշտություն<sup>106</sup>:

Իրավակարգավորումների բացերի վերաբերյալ անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշումներում<sup>107</sup>: Այսպես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով, Վճռաբեկ դատարանը իր որոշման մեջ նշում է, որ «իրավակարգավորման բացերի լրացումը<sup>108</sup>, որպես ակտիվ մեկնաբանական ռազմավարության դրսևորում, առավելապես բարձր դատարաններին բնորոշ գործիք է, որի կիրառումը, մի կողմից, անխուսափելի է, իսկ, մյուս կողմից՝ դրա չափազանց ակտիվ, հաճախակի կամ գործի փաստերից կտրված կիրառումը կարող է համարվել ոչ իրավաչափ միջամտություն և օրենսդիր իշխանության գործառույթին»<sup>109</sup>:

Իրավակարգավորմամբ բացերի լրացումը բարդ իրավավերլուծական գործընթաց է, որի կիրառումը ենթադրում է ծանրակշիռ և համոզիչ հիմնավորումներ: Ըստ էության այս դրույթը կիրառելիս դատարանը պետք է ցույց տա, որ իրավակարգավորման բացը չլրացնելն ավելի ծանր իրավական հետևանքներ կունենա, կվտանգի ավելի հիմնարար արժեքներ, քան օրենսդիր գործառույթի մենաշնորհն է: Ընդ որում, իրավակարգավորմամբ բացի լրացումը պետք է ներգործի, թե՛ անհատական և, թե՛ ընդհանրական մակարդակներում: Սակայն Վճռաբեկ դատարանի իրավակիրառ պարագայում հնարավոր է, որ այն ներգործի միայն ընդհանրական մակարդակներում, քանզի Վճռաբեկ դատարանն իրականացում է օրենքի միատեսակ կիրառության

<sup>106</sup> Տե՛ս **Ավետիսյան Ս.Ս.** ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի տեսական մոդելի (հայեցակարգի) մշակման անհրաժեշտության վերաբերյալ առանձին հիմնահարցերը // Տե՛ս **Ավետիսյան Սերջիկ** Проблемы уголовно-правовой охраны личности общества и государства. Ереван, 2016, էջ 221-229:

<sup>107</sup> Տե՛ս օրինակ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԱԴԴ /0085/06/09, 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշումը:

<sup>108</sup> Այս տեղի խոսքը չի վերաբերում անալոգիային՝ որպես իրավակարգավորման բացի լրացման ամենատարածված դրսևորում: Բանն այն է, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ թե քրեական իրավունքում և թե քրեական դատավարության իրավունքում անալոգիայի կիրառումն արգելվում է:

<sup>109</sup> Տե՛ս վերոնշյալ որոշումը:

գործառույթ:

Նշենք նաև, որ սույն ատենախոսության աշխատանքի ներածական մասում պաշտպանության ներկայացված բոլոր դրույթները վերաբերում են իրավարգավորման ոլորտին՝ կոնկրետ հիմնախնդրի վերաբերյալ:

Հանցավորության պատճառներից է նաև բարոյական կամ հոգևոր խորը ճգնաժամի դրսևորումները հայ հասարակության մեջ:

Հոգևոր ճգնաժամը միշտ համարժեք արտացոլվում է հանցագործության վիճակի վրա. լուծվում են հանցագործի և ոչ հանցագործի միջև սահմանները, եթե օրենքը դադարում է օրենք լինել, մնում է միայն ուժի իրավունքը: Որպես հանցագործության անմիջական պատճառ հասարակության, անհատի քրեորեն դեֆորմացված հոգեբանությունը առավել հաճախ արտահայտվում է ագրեսիայի, շահախնդրության և քրեաիրավական արգելքների անտեսմամբ: Բարդ տնտեսական բարեփոխումների և քառսային շուկայական հարաբերությունների պայմաններում, երբ բնակչության գրեթե կեսը գնվում է աղքատության սահմանագծից այն կողմ, առաջին պլան են մղվում փողը և կարողությունը: Չանգվածային կեղծ մշակույթը էլեկտրոնային հաղորդակցության միջոցով քարոզում է հարստության և բարեկեցության ձգտումներ, կենսական խնդիրների՝ բռնի, Եսասիրական լուծումների պաշտամունք:

Իրականում երիտասարդ անձի բարոյական կերպարը առաջին հերթին կախված է նրա կողմից ստացված տեղեկատվության էության և ուժի կուռքի լայն քարոզչությունից, հանցավոր կենսակերպը վերջնական արդյունքում վերածվում է սահմանափակ անհատական գաղափարախոսության, մարդու որպես անհատի արժեքների անտեսման, տեղի է ունենում մարդկանց ապակողնորոշում, կենսականորեն կարևոր նպատակների հասնելու ձգտում՝ ցանկացած միջոցներով, այդ թվում նաև բռնության կիրառմամբ: Որի հետևանքով առաջանում է վարքագծային առանձին կարծրատիպերի տարածում: Մշակույթի և ժամանցի ոլորտներում բազմաթիվ բացասական գործոնների շարքում կարելի է բացահայտել նաև որոշ բնորոշ հանգամանքներ, որոնք ըստ մեր տեսանկյան, ազդում են մեր

կողմից հետազոտվող հանցագործությունների կատարմանը: Ամենից առաջ, խոսքը վերաբերվում է զենքի հետ կապված համակարգչային դաժան խաղերին, որոնք չնայած վիրտուալ, սակայն տալիս են զենքի իշխանության և ուժի զգալու հնարավորություն, և վերջնական արդյունքում առաջացնում են դրանց նկատմամբ հետաքրքրություններ: Ծնողների անուշադրությունը այն առարկաների նկատմամբ, որոնք դեռահասների կողմից հայտնաբերվում կամ տուն են բերվում՝ (գտած կամ գողացված զենք), կարող է հանդիսանալ հանգամանքներից մեկը, որը նպաստում է այդ վնասակար հետաքրքրության ամրագրմանը և հետագա զարգացմանը:

Թույլատրվածության և բարոյական ազատության հոգեբանությունը, որը գնահատվում է «որպես անհատի ինքնարտահայտման հնարավորություն», հեշտությամբ յուրացվում է մարդկանց մեծ հատվածի, հատկապես երիտասարդության կողմից: Եսասիրության, ցինիկության, բռնության կարծրատիպերը կայուն ամրագրվում են մարդկանց կենցաղային հոգեբանության և առօրեական գիտակցության մեջ: Միևնույն ժամանակ, առանձին մարդիկ, գտնվելով նման կարծրատիպերի ազդեցության տակ, ակտիվորեն ձգտում են «պատմության մեջ հռչակի», իշխանության ու՜չ կոռումպացվածությունը, ու՜չ տնտեսական վիճակը, և ու՜չ էլ քաղաքական ուղղվածությունը նրանց չի հետաքրքրում: Նրանց համար առավել արժեքավորը՝ քրեական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններն են՝ ոտնձգությունները պոտոթյան ղեկավարի, պատգամավորների, իշխանության ներկայացուցիչների, ինչպես նաև կրոնական առաջնորդների և այլոց նկատմամբ:

Նարկայումս, երբ սոցիալական իրականության մեջ գերակայում են պայմաններ, որոնք ունակ են ծնել հանցավոր գիտակցություն, որի հիմքում տեղակայված են հանցավոր վարքագծի տարբեր դրսևորումներ, որոնց կրողն է հադիսանում հասարակության որոշակի զանգվածը և հակասոցիալական արարքների էական հատվածը մնում է անպատիժ:

Մարդու հոգևոր հատկանիշները իզուր չէ, որ տարեցտարի վերածվում են գիտական, և ամենից առաջ հոգեբանական հետազոտությունների արդիական խնդրի: Հոգեբանությունը

(ուսուցում հոգու վերաբերյալ) միշտ ենթադրում է մարդու մարմնային սկզբի նկատմամբ հոգևոր գոյի որոշակի առաջնություն, ընդ որում բացարձակ անհատական պլանում:

Որպես պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգության կանխարգելման հատուկ նախադրյալ կամ առավել էական պայման անհրաժեշտ է նշել պետության կողմից գենքի անվտանգ և օրինական շրջանառության ապահովումը: Չենքի շրջանառության անօրինականությունն նշանակում է գենքի և գինամթերքի շրջանառությունն՝ նորմատիվակտերի խախտմամբ:

Պետական, քաղաքական և հասարակական գործիչների կյանքի նկատմամբ ոտնձգությունների պատճառների և պայմանների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում վիկտիմային գործոնները: Նշենք, որ վիկտիմության տակ ընդունված է հասկանալ սոցիալական, հոգեբանական կամ կենսաբանական հատկանիշներով (հատկություններով) պայանավորված առանձին անձանց կա՛մ նրանց խմբավորումների հանցավոր ոտնձգություններից տուժածների վերածման միտումը<sup>110</sup>:

Հանցավորության հանրային վտանգավորության գնահատման չափանիշների շրջանակում, բացի հնարավորության կառուցվածքից և մակարդակից, որոշիչ նշանակություն ունի նաև բնակչության վիկտիմիզացիայի մակարդակը: Այն թույլ է տալիս պատկերացում կազմել հանցավորության իրական հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի մասին, գնահատել մարդկանց պաշտպանվածության մակարդակը հանցավոր ոտնձգություններից: Բացի այդ, ինչպես նշում է Ա.Ա. Գաբուլյանը, - «բնակչության վիկտիմիզացիայի մակարդակը, դրանում տեղի ունեցած փոփոխությունների, այդ փոփոխություններին նպաստող գործոնների վերլուծությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել հանցավորության և հանցագործությունների առանձին տեսակների վիկտիմոլոգիական գործոնների մասին և դրա հիման վրա հանցավորության վիկտիմոլոգիական կանխման արդյունավետ միջոցներ մշակելու»<sup>111</sup>:

<sup>110</sup> Տե՛ս **Вишневский К.В.** Криминогенная виктимизация социальных групп в современном обществе . М., 2010, էջ 61-62:

<sup>111</sup> Տե՛ս ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Կարապետյանի կազմի

Հասարակության վիկտիմիզացիայի մակարդակը կարելի է վերլուծել մի քանի չափանիշներով՝ հանցագործություններինց տուժած անձանց քանակությամբ, վիկտիմիզացիայի գործակիցներով, հանցագործություններին առանձին տեսակներից՝ տուժածների քանակով և վիկտիմիզացիայի գործակցով, հանցավոր վարքագծի մոտիվացիայի տարբեր տեսակներով կատարված հանցագործություններինց տուժածների վերաբերյալ համապատասխան տվյալներով<sup>112</sup>:

Պոֆեսոր Ա.Յ. Գաբուլյանի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, «որ վերջին տարիներին հանցագործություններինց տուժածների քանակն ավելանում է: Ընդ որում, 2010 թվականին 2004-ի համեմատությամբ այն աճել է 2,5 անգամ»<sup>113</sup>:

Այն հայտ է, որ Հայաստանի Հանրապետության նույն պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների վիկտիմությունը սահմանվում է, ամենից առաջ, նրանց հասարակական գործունեությամբ, քաղաքական գործընթացներում նրանց մասնակցության փաստով, նրանց կողմից որոշակի հանրային գործառնությունների իրականացմամբ: Ելնելով դրանից, կարելի է խոսել պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների խմբային վիկտիմության նախատրամադրվածության վերաբերյալ: Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների խմբային վիկտիմային նախատրամադրվածությանը զուգահեռ, նրանց կյանքին ունձգություններին պատճառային համատեքստում ներառվում են նաև անձնական (անհատական) վիկտիմային գործունեությունը, որոնք մասնավորապես կարող են արտահայտվել սադրիչ արտահայտություններում, անվտանգության միջոցների անտեսմամբ կամ այլ սադրիչ վարքագծով<sup>114</sup>:

Ավարտելով պետական, քաղաքական կամ հասարակական

---

գիտաժողովի նյութերի ժողովածու: Գլխախմբ.՝ **Գ.Ս. Ղազիսյան**, Երևան, 2012, էջ 63:

<sup>112</sup> **Գաբուլյան Ա.Յ.**, Նշվ. աշխ., էջ 64:

<sup>113</sup> Մանրամասն տե՛ս **Вишневский К.В.** Криминогенная виктимизация социальных групп в современном обществе . М., 2010, **Ситковский А.А** Анализ криминальной виктимизации в Российской Федерации и мнения граждан о личной безопасности. Государственная система профилактики правонарушений: современное состояние и перспективы развития. //Материалы межведомственной научно-практической федерации. М., 2007, էջ 411-419:

<sup>114</sup> Մանրամասն տե՛ս **Մարգարյան Ա.Ռ.** Հանցավորության նկատմամբ վախը և վիկտիմիզացիան Հայաստանի Հանրապետության նույն //«Բանբեր Երևանի պետական համալսարանի», Թիվ 135, 2011, էջ 19-41:



գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգության քրեածին գործոնների բնութագիրը՝ կցանկանայինք ուշադրությունը սևեռել հետևյալի վրա: Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգությունը հանդիսանում է բռնությամբ իրականացվող հանցագործության բաղադրիչ հատված և պայմանավորված է այնպիսի դետերմինանտներով, որոնք բնորոշ են բռնությամբ իրականացվող և կազմակերպված հանցավորությանը, սակայն միևնույն ժամանակ ունեն քրեածին գործոնների որոշակի համախումբ և արտահայտման տարբեր աստիճաններ: Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ուղղված ոտնձգությունները պայմանավորող առավել ազդեցիկ գործոնների շարքին են դասվում. Հայաստանի բնակչության ճգնաժամային մակարդակի հասած սոցիալ-տնտեսական շերտավորումը, որը հանդիսանում է քաղաքական և սոցիալական լարվածության աճի պատճառ, սոցիալական հակասությունները, իշխանության էշելոններում կոռուպցիայի առկայությունը, որը հանգեցնում է իշխանության և դրա ներկայացուցիչների նկատմամբ սուր դժգոհության, կազմակերպված հանցավորության քաղաքականացվածությունը, որը կիրառվում է, որպես քաղաքական մրցակիցներից ձերբագատվելու միջոց, հրազենի և այլ զինման առարկաների անօրինական շուկայի գոյությունը, ինչպես նաև դրանց ապօրինի ձեռք բերման հնարավորությունը:

ՀՀ ՔՕ հոդ. 305-ով նախատեսված հանցագործությունը իրականացնող անձանց քրեագիտական բնութագրման խնդիրների համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարել եզրակացություն նրա վերաբերյալ, որը մեր երկրում, ինչպես նաև համաշխարհային մակարդակով համարվում է գործողություն, որը ուղեկցվում է պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգությունների կատարմամբ: Այս պայմաններում քննարկվող հանցագործության պատճառների համալիր վերլուծության արդյունքները որոշակիորեն կնպաստեն տվյալ հանցագործության դեմ արդյունավետ պայքարին, ինչպես նաև կուրվագծեն դրական խարգելման հիմնական ուղղությունները:

#### 4.2. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության և ներքին կանխարգելման հիմնահարցերը

Հասարակական հարաբերությունների դեմ ուղղված վտանգավոր ոտնձգությունների կանխարգելումը քրեագիտության մեջ դիտարկվում է որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, կազմակերպչական բնույթի միջոցների իրականացմամբ հանցագործության պատճառների չեզոքացման նպատակներով հասարակական հարաբերությունների սոցիալական կարգավորման միջոցներից մեկը<sup>115</sup>: Հանցագործության բնույթի բարդությունը և բազմանիստությունը, դրա պատճառների և պայմանների բազմազանությունը համապատասխան պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի նկատմամբ ոտնձգության քրեագիտական կանխարգելման եղանակները ենթադրում են միջոցների համալիր, որոնց վերաբերյալ պատկերացումները նպատակահարմար է դիտարկել քրեագիտական կանխարգելումը ընդհանուր սոցիալականների և հատուկ քրեագիտականների բաժանման պրիզմայով<sup>116</sup>:

Նկատենք, որ ընդհանուր սոցիալական կանխարգելման գործառնությունները հաջորդականորեն իրականացվում է հասարակության ամբողջ առաջընթաց զարգացմամբ (մասշտաբային սոցիալ-տնտեսական, քաղաքական, կազմակերպչական և այլ խնդիրների լուծումներով) «...խոշորամասշտաբ միջոցառումների ամբողջ համախմբով, որոնք ապահովում են հասարակության, մարդկային հարաբերությունների, տնտեսական, քաղաքական, հոգևոր և այլ ոլորտների առաջընթաց զարգացում: Այդ միջոցառումները հետապնդում են առավել լայն նպատակներ, քան պայքարը հանցավորության դեմ, և վերջինս ոչ միշտ է առանձնացվում այդ միջոցառումների մշակման և իրականացման դեպքում: Սակայն, կարծես «զուգահեռ», դրանք սահմանափակում են քրեագիտական երևույթների և գործընթացների ծագումը, զարգացումը և գործառնությունը, քրեական իրավիճակների ծագման հնարավորությունները և հասարակության անդամների հանցավոր

<sup>115</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Стратегии борьбы с преступностью. М., 2003, էջ 35-78:

<sup>116</sup> Տե՛ս Жалинский А. Э. Социальное предупреждение преступности в СССР (Вопросы теории). Львов, 1976. էջ 35:

ուղղուն անցումը»<sup>117</sup>:

Իրենցից ներկայացնելով ընդհանուր սոցիալական բնույթի սոցիալ - տնտեսական, մշակութաբանական, կազմակերպչական և դաստիարակչական միջոցառումների համախումբ, որը ուղղված է հասարակության կարևոր խնդիրների լուծմանը:

Ինչպես արդարացի նշում է Վ.Վ. Լուսենը, առաջադրված խնդիրների լուծումը «...նպատում է հանցավոր վարքագծի կանխարգելմանը, սոցիալական խմբերի, կոլեկտիվների, յուրաքանչյուր անձի կյանքի, գործունեության, ծառայության, առօրյա և հանգստի նյութական, մշակութային պայմանների բարելավմանը, անհատի բարոյական ձևավորման անբարենպաստ պայմանների և քրեական դրդապատճառների ծագումը պայմանավորող այլ քրեածին գործոնների չեզոքացման միջոցով»<sup>118</sup>:

Ըստ Ս.Ի. Գերասիմովի կարծիքի, ներկայումս հետխորհրդային հասարակարգերում ձևավորվել են բոլոր նախադրյալները, որպեսզի էական ուշադրություն հատկացվի քրեագիտության մեջ հանցագործության կանխարգելման ընդհանուր սոցիալական մակարդակի առանձնացման վերաբերյալ ավանդական և ընդհանուր ընդունված թեզին, վերջինիս տակ ընկալվում է հասարակության զարգացումը: Ըստ նրա տեսանկյան, հանցագործության ընդհանուր սոցիալական կանխարգելումը, անկասկած, ազդում է վերջինիս, դրա պատճառային համալիրի վրա, ընդ որում ոչ միայն կանխարգելիչ գործունեության մակարդակներից մեկի, այլ այդ գործունեության նախադրյալների (անհրաժեշտ պայմանների, բազայի, հիմքի) որակով<sup>119</sup>:

Այդ իմաստով պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ուղղված ոտնձգությունների կանխարգելման ընդհանուր սոցիալական միջոցների համալիրը պետք է իրենում ներառի հետևյալ միջոցները.

1. Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ոլորտում.

<sup>117</sup> St`u Криминология: Учебник / Под ред. В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. М., 2014. Էջ 272:

<sup>118</sup> St`u Лунеев В. В. Мотивация преступного поведения. М., 1991. Էջ 339:

<sup>119</sup> St`u Герасимов С. И. Концептуальные основы и научно-практические проблемы предупреждения преступности, автореф. Дисс.... д-ра юрид наук. М., 2001. Էջ 10:

- հետևողականորեն ապահովել սահմանադրական իրավունքները, որոնք երաշխավորում են օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարությունը,

- ստեղծել պայմաններ տնտեսական բարեկեցության բարելավման համար՝ հակադրվելով չափազանցված սոցիալ-տնտեսական անհավասարությանը:

Ներկայումս հետազոտվող հանցակազմի կանխարգելման առաջատար ուղղություններից մեկն է հանդիսանում, երկրում տնտեսական բարեփոխումները, բնակչության բոլոր շերտերում կյանքի նյութական պայմանների բարելավումը և հարաբերական հավասարեցումը, անհատի սոցիալական կարգավիճակի կայունացումը: Պետության տնտեսական կայունությունը և դինամիկ զարգացումը ստեղծում է եական պոտենցիալ հասարակության զարգացման, հետևաբար նաև հանցավորության դեմ պայքարի համար: Ըստ քրեաբանների ընդհանուր կարծիքի, տնտեսական և սոցիալական բնույթի դրական փոփոխությունները պարունակում են բնական կանխարգելիչ հատկանիշներ, որոնք կրճատում են բնակչության նյութական եկամուտի բևեռացման աստիճանը, խթանում են բնակչության բոլոր շերտերի բավարար կենսամակարդակի ապահովումը, նյութական, մշակույթային, հոգևոր պահանջների բավարարումը և նպաստում են հասարակության մեջ հոգեբանական լարվածության նվազեցմանը:

- Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության կանխարգելման համար անհրաժեշտ է համատարած և հետևողականորեն կատարել անհանդուրժողականության և բռնության քարոզչությունը, քրեական պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր բռնություն են գործադրում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի նկատմամբ:

## 2. Կրթություն և դաստիարակություն ոլորտում.

- դպրոցական և համալսարանական կրթություն համակարգերում հաստատել հասարակական կյանքի ազգային մշակույթային հայեցակարգը,

- իրականացնել ուսուցիչների և դասավանդողների նախադաստիարակում սոցիալ-քաղաքական երկխոսության հարցերում

գիտել իքների ամրապնդման ուղղությամբ,

- մշակել և գործնականում կիրառել հայրենասիրական դաստիարակության, սոցիալական ծրագրեր:

3. Չանգվածային լրատվական միջոցների գործունեության ոլորտում.

- ստեղծել բռնության կատարվող հանցագործությունների լուսաբանման համար լրագրողական խմբեր,

- ցուցաբերել համակողմանի աջակցություն զանգվածային այն լրատվական միջոցներին, որոնք երեխաներին և երիտասարդությանը, քարոզում են հանդուրժողականության և հայրենասիրություն:

4. Ըստ քաղաքացիական հասարակության հասարակական կազմակերպությունների և այլ ինստիտուտների ուղղությունների.

- քաղաքական կուսակցություններին և շարժումներին ցանկալի է իրենց ծրագրերում ունենալ սահմանադրականության և բարոյական նորմերի վրա հստակ ձևակերպված գործունեության սկզբունքներ և դիրքորոշումներ,

- քաղաքական կուսակցություններին և շարժումներին առաջարկվում է մշակել չափորոշիչներ, որոնք բացառում են իրենց շարքերում, իսկ առավել ևս՝ ընտրություններում և ղեկավար պաշտոններում այնպիսի անձանց առկայությունը, ովքեր համակարծիք աջակցում են հանցավոր խմբավորումներին,

- ստեղծել նոր և պահպանել գործող հասարակական կազմակերպությունները և միավորումները, որոնք զբաղվում են խաղաղապահ գործունեությամբ:

5. Գիտական հետազոտությունների մոնիթորինգի ոլորտում.

- իրականացնել հետազոտությունների անցկացում խաղաղության և հանդուրժողականության պահպանման վերաբերյալ, այնպիսի գիտությունների շրջանակներում, ինչպիսիք են՝ սոցիալական հոգեբանությունը, ժողովրդագիտությունը, հասարակագիտությունը, քաղաքագիտությունը և պատմությունը,

- ստեղծել հետազոտական խմբեր և կենտրոններ, որոնք բռնության հակազդման համար կիրականացնեն սերիական

հրատարակությանը և մեթոդաբանական գրականության տարածությունը, որը ուղեցույց կդառնա, ինչպես մասնագետների, այնպես էլ լայն լսարանի համար,

- հրատարակել այն գաղափարախոսությունների, ծրագրերի հանցավոր բնույթները, որոնք իրենցում ամփոփում են պետական, քաղաքական կամ հասարակական գործչի նկատմամբ ոտնձգություններ,

- գիտաշխատակիցների միջոցով ստեղծել հետազոտական խմբեր և կառույցներ՝ հասարակական կարծիքի, սոցիալական հարաբերությունների, քաղաքական, հասարակական և կրոնական կազմակերպությունների գործունեության մոնիթորինգի իրականացման, ճգնաժամային իրավիճակների բացահայտման և ըստ դրանց լուծումների՝ կիրառական հանձնարարականների մշակման նպատակներով:

Հատուկ-քրեագիտական կանխարգելումը կայանում է հանցավոր վարքագծի առանձին տեսակների և խմբերի հետ կապված քրեածին գործունեությունն նպատակաուղղված ազդեցության մեջ<sup>120</sup>: Որոշակի տեսակի հանցագործության բնորոշ պատճառների և պայմանների կոմպլեքսների չեզոքացումը կամ կասեցումը իրականացվում է համապատասխան կոմպենստեստ սուբյեկտների գործունեության գործընթացում, վերջիններիս համար կանխարգելիչ գործառույթը հանդիսանում է իրենց մասնագիտական խնդիրների իրականացումը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգությունների հատուկ քրեագիտական կանխարգելման անմիջական հետազոտություններին անցնելով՝ նշենք, որ դրա օբյեկտները, սուբյեկտները և բովանդակությունը մեծամասամբ սահմանվում են հանցագործությունների դետերմինացման առանձնահատկություններով:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի դեմ ուղղված ոտնձգության պատճառային բազմաշերտությունը, որում միահյուսվում են բռնությամբ կատարվող հանցագործությունների դետերմինանտները, ինչպես նաև հատուկ պայմաններ և պատճառներ, որոնք բնորոշ են քննարկվող հանցակազմի օբյեկտիվ և

<sup>120</sup> Տե՛ս Криминология: Учебник для вузов /Под ред. Г.А. Аванесова. М., 2015. Էջ 326-327:

սուբյեկտիվ հատկանիշներին, առաջ են քաշում տարբեր կանխարգելիչ միջոցառումների մշակման և դրանց հաջորդական իրականացման անհրաժեշտություն: Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգության կանխման որպես առաջին մակարդակ կարելի է համարել կազմակերպված, բռնությամբ կատարվող հանցագործության կանխարգելումը, որի մասնավոր արտահայտումը հանդիսանում է ՔՕ հոդ. 305-ում նախատեսված հանցագործությունը: Երկրորդ մակարդակը իրենից ներկայացնում է անմիջական կանխարգելիչ ազդեցությունը, հատկապես՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչ կյանքի դեմ ուղղված ոտնձգությունների համար հատուկ քրեածին գործոնների վրա: Չասկանալի է, որ մեկ, ըստ ծավալի սահմանափակ աշխատանքի շրջանակներում օբյեկտիվորեն հնարավոր չէ դիտարկել բոլոր մակարդակները, ինչի հետ կապված մենք կկենտրոնացնենք ջանքերը ՉՉ ՔՕ հոդ. 305-ում նախատեսված հանցագործության հատուկ պայմանների և պատճառների վրա կանխարգելիչ ազդեցության համակարգային միջոցների օպտիմալացման հանձնարարականների մշակման վրա:

Որպես կանոն սոցիալ-քրեագիտական կանխարգելումը իրականացվում է ըստ հանցագործության հետպայքարի ու ժեղացման վարչական և միջվարչական պլանների (ծրագրերի) ձևով: Դրանցում նախատեսվում է միջոցառումների համակարգ, որոնք կողմնորոշված են հանցագործության կոնկրետ տեսակների, խմբերի ու որոշակի տեղում հանցագործության ամբողջական կանխարգելմանը<sup>121</sup>:

Դրան գուգահեռ, թե ինչպես է օպերատիվ-հետախուզական գործունեությունը ձեռք բերում իրավական և տեսական բազա, այդ գործառնությունները դառնում են առավել բազմանիստ, ծագում են վերջինիս առարկան կազմող երևույթների առավել խորը հետազոտության հնարավորությունները: Իսկապես, պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված այդպիսի ոտնձգությունների կանխարգելումը, առանց օպերատիվ-հետախուզական բնույթի ուժերի և միջոցների կիրառության, հնարավոր չէ:

<sup>121</sup> Տե՛ս **Лунеев В. В.** Криминология. М., 2014. Էջ 291-292:

Անհրաժեշտ է նշել, որ քրեագիտության բոլոր կատեգորիաները ունենում են անմիջական ազդեցություն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և մարտավարության վրա հանցագործությունը, դրագործոնները, հանցագործի անձը և այլն: Այսպես, օպերատիվ-հետախուզական վերլուծության հիման վրա սահմանվում են հանցագործության միտումները, բացահայտվում առավել ախտահարված օբյեկտները, կատարում կանխատեսումային եզրակացություններ հանցավոր երևույթների՝ թվի, կառուցվածքի և առավել հավանական վայրերի վերաբերյալ: Այս եզրահանգումները կիրառվում են նույն տիրույթի և օբյեկտների հսկողության կազմակերպման ընթացքում, օպերատիվ-հետախուզական սուբյեկտների և դրանց ուժերի բաշխման տարբերակների ընտրության ժամանակ:

Քրեագիտության մեջ հանցագործի անձը լայն և ծավալուն հասկացություն է, որը արտահայտում է տարբեր տեսակի հանցագործների սոցիալական էությունը, նրանց բնութագրող հատկանիշների, հատկությունների, կապերի, զարգացման, սոցիալական և անհատական կենսական պայմանների հետ գործունեության մեջ վերցված և այս կամ այն աստիճանով հանցագործության կատարումը սահմանող, նրանց բարոյական և հոգևոր կյանքի բարդ համալիրը: Օպերատիվ-հետախուզական գործունեության համար կարևոր են հատկապես հանցագործ անձի, հանցագործներին բնութագրող հատկանիշների ձևավորման գործընթացների վերաբերյալ ընդհանրացված, տիպականական տվյալները:

Նշանակություն ունեն նաև հանցագործի բարոյական ձևավորման պայմանները, հատկապես՝ մերձակա, կենցաղային շրջապատի, կապերի, ծանոթությունների միջավայրում: Հանցագործության բացահայտման համար բացառիկ կարևոր է կոնկրետ կենսական իրավիճակի քրեածին հանգամանքների պարզաբանումը, որոնք անհատի առանձնահատկությունների հաշվառմամբ ազդեցություն են ունենում հանցագործության կատարման վրա: Միևնույն ժամանակ, օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ որոշիչ է հանդիսանում, հանցագործ անձի՝



բարոյական, սոցիալական, հոգեբանական հատկությունների բնորոշումը (տեսանկյունների, հմտությունների, սովորությունների, հետաքրքրությունների և պահանջների բովանդակության մակարդակը, բնավորության առանձնահատկությունները և այլն): Այս ցուցանիշներից շատերը հանցագործ անձի, հանցագործ կապերի վերաբերյալ տեղեկություններին զուգահեռ, օգտագործվում են գործերում՝ օպերատիվ հաշվառման նպատակով, բարոյահոգեբանական բնութագրության հիման վրա ընտրվում է օպերատիվ որոնման, օպերատիվ ստուգման և, իհարկե, օպերատիվ կանխարգելման մարտավարությունը:

Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման համար առավել կարևոր են ժամանակի և տարածության մեջ զարգացող, ոչ միայն հանցագործ գործողությունները, այլ նաև դրանց նախորդող սոցիալական և հոգեբանական երևույթները ներառող, գործընթացի հանցագործ վարքագծի քրեագիտական ուսումնասիրությունը: Քրեագիտությունը հանցագործ վարքագծի ուսումնասիրության մեխանիզմի հիման վրա տալիս է, այն հարցերի պատասխանները, թե ինչպես է ծագում, զարգանում և իրականացվում անհատական և խմբային տարբերակներում, հանցագործությունների տարբեր տեսակների և հանցագործների տարբեր կատեգորիաների շրջանակներում:

Նման տիպի քրեագիտական տեղեկությունը խիստ արժեքավոր է, ինչպես քրեածին գործընթացների ախտորոշման դեպքում, երբ պահանջվում է օպերատիվ-կանխարգելման միջամտություն, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործընթացի իրականացման դեպքում, երբ ըստ նախնական սուղ տեղեկությունների, օպերատիվ աշխատակիցը պետք է վերարտադրի կոնկրետ հանցագործության մեխանիզմները:

Ի տարբերություն օպերատիվ որոնման օբյեկտների, (գողեր, խաբեբաներ, որոնման մեջ գտնվող անձինք, գողոն իրացողներ և այլն) պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի նկատմամբ ոտնձգությունների կանխարգելման ոլորտում օպերատիվ որոնման գլխավոր օբյեկտ են դառնում տվյալ փաստը

հաստատող իրադարձությունները և փաստաթղթերը: Օպերատիվ որոնման ընթացքում կարելի է ստանալ որոշ կողմնորոշիչ տեղեկություններ, գտնել տեղեկացված անձանց, հետագայում կատարել առարկայական աշխատանք կոնկրետ անձանց հետ մաքսիմալ լիարժեք տեղեկությունների ստացման նպատակներով: Այստեղ կիրառվում են օպերատիվ ստուգման մարտավարական միջոցները, օպերատիվ կոմբինացիաների կիրառությունը՝ վստահության ձեռքբերում, զարգացում՝ մինչև լիարժեք անկեղծության վիճակ, կոնկրետ հանցավոր գործունեության վերաբերյալ տեղեկությունների ստացում, անհրաժեշտության դեպքում, նույնիսկ՝ հանցագործ ձևավորումների կառույցներում ծախված օպերատիվ աշխատակիցների կամ գործակալների ներգրավում:

Անհրաժեշտ է նշել, որ տեղեկացված անձանց օպերատիվ ստուգումը (որպես օպերատիվ որոնման տարատեսակ) փաստացի անժամկետ է: Քանի որ նման անձինք որոշակի հաշվառման մեջ չեն գտնվում, չունեն որևէ սահմանափակումներ, հետևաբար նման ստուգման արդյունքում ստացված տեղեկությունները որևէ կերպ չպետք է սահմանափակեն վերջիններիս շահերը, եթե նրանք չեն կատարում հակաիրավական, հակահասարակական վտանգավոր կամ հասարակությանը վնաս հասցնող այլ արարքներ:

Իրադարձությունների և փաստաթղթերի օպերատիվ որոնումը սովորաբար իրականացվում է անորոշության պայմաններում, չկան հստակ տվյալներ, թե ով կհայտնվի տեսադաշտում, երբ և ինչ տեղի կունենա: Առկա է միայն հետաքրքրություններ կայացնող իրադարձությունների հավանականության կանխատեսումը, որը հենված է օպերատիվ իրավիճակի գնահատման և վերլուծողական որոնումների արդյունքների վրա, ինչն էլ կանխորոշում է օպերատիվ որոնման նպատակների հնարավորինս ձեռքբերման օբյեկտները և միջավայրը: Կանխատեսումը իր հերթին հանգում է միջավայրի օպերատիվ-մարտավարական գնահատականին (կոնկրետ հանցագործ խմբեր, ազգայնական խմբերի ակտիվ անդամներ, կրոնական մոլեռանդներ և այլն) և պրտենցիալ հանցագործների քրեական ակտիվությանը:

Քրեական ակտիվությունը իրենից ներկայացնում է մոդել,

որին կողմնորոշված է օպերատիվ որոնումը: Այն ունի տարբեր արտահայտումներ, մասնավորապես հենց հանցագործ գործունեությանը, ներառելով դրան հակվածությունը, կազմակերպության շրջանակներում հանցագործ գործունեությանը մասնակցությունը, հանցագործության նպաստող պայմանները, ինչպես նաև հանցագործների հետ «գործնական» շփումները և դրանց վերաբերյալ տեղեկացվածությունը:

Այսպիսով, պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգությունների օպերատիվ-որոնողական կանխարգելումը օպերատիվ-որոնողական միջոցներով ներառում է հետևյալ ուղղությունները.

– օպերատիվ հսկողության մեջ ընդգրկված անձանց կենսակերպի, կապերի, գործունեության տեսակի ուսումնասիրությունը: Օպերատիվ ծառայությունների աշխատակիցների համար այս ուղղությունը սովորական է, այն ընդգրկված է համապատասխան ստորաբաժանումների փոխգործունեության բլոկում,

– գենքի, պայթուցիկների և պայթուցիկտանգ նյութերի, այլ սարքավորումների անօրեն մատակարարումների և ձեռքբերումների, կասկածելի ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկությունների վերլուծություն: Նման իրավիճակներում եզրագծվում են կոնկրետ անձանց շրջանակներ, որոնց գործունեությունը անհրաժեշտ է ստուգել, և խնդիրների շրջանակը, որոնց լուծմանը անհրաժեշտ է ուղղել օպերատիվ ստուգումները,

– ըստ կոռումպացվածության վերաբերյալ ազդանշանների պաշտոնատար անձանց նկատմամբ վերահսկողության հաստատում, որտեղ հսկողությունն ուղղորդված է դրանց մասշտաբների, համագործակիցների և մեխանիզմների բացահայտմանը,

– միևնույն անձանց մասնակցությամբ սերիական իրականացված հանցագործությունների վերաբերյալ տվյալների ընդհանրացում, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել հանցագործ կազմակերպության գործունեության վերաբերյալ: Նման տվյալները կարող են ցրված լինել քրեական, օպերատիվ հաշվառման

գործերում, «մերժված» նյութերում, քաղաքացիների նամակներում,  
– Լրագրողական քննությունը հաստատված տվյալների ստուգում, որը ևս իրականացվում է կոնկրետ անձանց և փաստերի շրջանակներում: Այս տարբերակում անմիջական և միջնորդավորված (Լրագրողների միջոցով) շփումները հեղինակների հետ կարող են «հանգեցնել» տեղեկությունների արժեքավոր աղբյուրների, կոնկրետ անձանց, որոնց հետ հաստատվում են գաղտնի հարաբերություններ և որոնց օգնությամբ իրականացվում է խորացված օպերատիվ ստուգումը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգությունների կանխարգելման միջոցների համակարգի օպտիմալացման ինքնուրույն ուղղորդման որակով անհրաժեշտ է դիտարկել վիկտիմաբանական (գոհի համալիրի) կանխարգելման միջոցների գործնականում ներդրումը: Ի տարբերություն հանցագործության «ավանդական» կանխարգելմանը, որը նպատակաուղղված է դրա անցյալների և հանցագործի անձին, վիկտիմաբանական կանխարգելման անկյունաքարում տեղադրում է տուժողի (իրական կամ արտեսցիալ) նկատմամբ աշխատանքը՝ կողմնորոշված վիկտիմ վարքագծի կասեցմանը (երբ դա հնարավոր է) և (կամ) դրա հետևանքների չեզոքացմանը, ինչը հիմք է հանդիսանում համարել վիկտիմաբանական կանխարգելումը քրեաբանության անվտանգության ապահովման ուղղություններից մեկը:

Ինչպես արդեն նշվել է, պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգությունները ի սկզբանե դետերմինացված են դրանց խմբային (մասնագիտական) վիկտիմաբանական նախատրամադրվածությամբ, որի քրեածին ազդեցությունը ուժեղացնում են անձնական վիկտիմ գործոնները: Դրա հետ կապված քրեագիտական կանխարգելումը պետք է կողմնորոշված լինի ինչպես պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների վիկտիմաբանական նախատրամադրվածության գործոններին, այնպես նաև անատակ վիկտիմությանը:

Ակնհայտ է, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների խմբային վիկտիմության մակարդակը էականորեն

նվազեցնել հնարավոր չէ, քանի որ այն պայմանավորված է վերջիններիս կողմից իրականացվող քաղաքական գործունեությամբ: Այդ իսկ պատճառով կանխարգելիչ ջանքերը հիմնականում պետք է կողմնորոշված լինեն նման խմբային վիկտիմաբանական հետևանքների մեղմացմանը, իրավիճակների կասեցմանը և չեզոքացմանը, որում արտահայտվում են վերջինիս քրեածին պոտենցիալը, ինչպես նաև պետական, քաղաքական և հասարակական գործիչների ֆիզիկական անվտանգության ապահովմանը: Ինչ վերաբերվում է անհատական վիկտիմությանը, ապա դրա չեզոքացման միջոցները անմիջականորեն կախված են անհատական վիկտիմ գործունեության բովանդակությունից: Մասնավորապես, եթե պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների անհատական վիկտիմությունը դետերմինացված է նրանց բացասական հրահրող վարքագծով (օրինակ, կոռուպցիայի, սեփական պաշտոնեական լիազորությունների չարաշահման, դրանց գերազանցման, այլ հակաիրավական վարքագծի փաստեր), ապա «առաջին պլան են առաջադրվում ազդեցության միջոցները, որոնք գրեթե հարաբերակցվում են պոտենցիալ հանցագործի վրա ազդեցության միջոցների հետ»<sup>122</sup>: Այլ խոսքերով անհատական վիկտիմաբանական կանխարգելումը այս դեպքում պետք է կողմնորոշված լինի պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կողմից հանցագործությունների և այլ իրավախախտումների կատարման կանխարգելմանը:

Անհատական վիկտիմաբանական կանխարգելումը հանդիսանում է կանխարգելիչ աշխատանքի որոշակի մակարդակ: Այն իրենից ներկայացնում է «...միջոցների համալիր, որոնք կողմնորոշված են՝ վարքագծի կամ անհատական հատկանիշների համախմբի այն անձանց բացահայտմանը, ովքեր կարող են առավել հավանականությամբ հանդիսանալ հանցագործների զոհեր, որի միջոցով իրականացվում է նրանց անվտանգության ապահովմանը»<sup>123</sup>:

Գործունեների տիպիկ բազմազանությունը, որոնց վիկտիմաբանական նշանակությունը կարող է հանդիսանալ էական պետական, քաղաքական կամ հասարակական գործիչի կյանք դեմ

<sup>122</sup> St' u Ривман Д.В. Криминальная виктимология. - СПб: Питер, 2014. Էջ 257:

<sup>123</sup> St' u Там же, Էջ 267:

ուղղված ոտնձգության կատարման համար, կարող է հանգեցվել օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների բացահայտմանը.

- սուբյեկտիվ գործոններ՝ մասնագիտություն, առողջական վիճակ, կենսափորձ, սովորություններ, հետաքրքրություններ, կախվածություններ, սիրելի զբաղմունք, հարազատների և ծանոթների շրջանակներ, ինտիմ կապեր, անձը հաստատող փաստաթղթերի առկայություն, տարածքից ելքի պայմաններ, սեփական տրանսպորտային միջոցների առկայություն, պլանների և մտադրությունների վերաբերյալ հայտնի արտահայտումներ,

- օբյեկտիվ գործոններ՝ պաշտպանության օբյեկտները, նրանց թիվը, կարգավիճակը, հնարավոր ոտնձգության վերաբերյալ տեղեկացվածությունը, շարժման ուղեգիծը, պաշտպանական միջոցառումների մասշտաբը, պաշտպանական միջոցների և ուժերի ակտիվացում, իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտացվածության մակարդակ (ոչ տիպիկ իրավիճակներում ինքնուրույն որոշումների ընդունման ունակություն, փորձ, հանկարծակի փոփոխվող իրավիճակի նկատմամբ ռեակցիա, զսպվածություն, ինտելեկտուալ մակարդակ, օպերատիվ-արժեքավոր տեղեկության նկատմամբ ընտրական վերաբերունք, կոնֆլիկտային իրավիճակներում վարքագիծ, գաղտնիության պահպանության ունակություն, ֆիզիկական տվյալներ):

ՀՀ ԲՕ հոդ. 305-ով նախատեսված հանցագործությունների զոհերի առանձնահատկության հաշվառման համար նպատակահարմար է ներկայացնել վիկտիմաբանական բնույթի հետևյալ միջոցառումները.

- սեփական վարքագծի սոցիալ-հոգեբանական և սոցիալ-քաղաքական գնահատական սեփական գործողություններով պրտենցիալ մեղավորների հրահրման կանխարգելման համար: Մասնավորապես, քաղաքական կոռեկտություն՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչի վիկտիմության մակարդակի նվազեցման հանգամանք,

- գործունեության տվյալ տեսակին հատուկ՝ պատրաստված անձանցից սեփական պաշտպանության ապահովում,

- հնարավոր ոտնձգության և քրեական հարձակման կասեցման

ուղղված մշտական պատրաստվածություն<sup>124</sup>:

Ամփոփելով շարադրվածը՝ անհրաժեշտ է նշել, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի դեմ ուղղված ոտնձգությունների պատճառային համալիրը՝ բազմաշերտությունը, որում միահյուսվում են բնությունը կատարվող հանցագործությունների դետերմինանտները, ինչպես նաև առանձնահատուկ պատճառները և պայմանները, որոնք բնորոշ են դիտարկված քրեական արարքներին, ենթադրում են կանխարգելիչ միջոցառումների համակարգերի մշակման և հաջորդական իրականացման անհրաժեշտություն: Այդ միջոցառումների շարքում անհրաժեշտ է առանձնացնել, պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների սպանության կանխարգելման ոլորտում՝ սուբյեկտների ջանքերի արդյունավետ համագործակցության ապահովումը, նրանց կողմից ձեռնարկված օպերատիվ-որոնողական բնույթի և ամենից առաջ, համապատասխան հանցագործությունները նախապատրաստող և(կամ) դրանց նախապատրաստման վերաբերյալ տեղյակ անձանց օպերատիվ որոնման միջոցների արդյունավետության բարձրացումը, խմբային և անհատական վիկտիմաբանական կանխարգելման միջոցների մշակումը և գործնականում կիրառումը:

Դիտարկվող հանցագործությունների կանխարգելման միջոցների օպտիմալացման համակարգի վերը նշված բոլոր ուղղությունները պահանջում են համակարգված իրականացում, քանի որ միայն այդ պայմանով կարելի է հասնել պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների անձնական անվտանգության մակարդակի բարձրացման:

<sup>124</sup> Տե՛ս **Белов А. С.** Безопасность жизнедеятельности. М., 2013. Էջ 164:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությանը:

1. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությանը համարվում է հանցագործությանը մասին ուսմունքի հիմնախնդիրներից մեկը և անխուսափելիորեն կապված է քրեաիրավական պաշտպանության ամրապնդման հետ: Քրեաիրավական պաշտպանության ամրապնդման համար կարևորում ենք հողվածի դիստրոֆիայում առկա թերությանը վերացումն ու բացթողումների լրացումը: Ուսումնասիրելով ՀՀ քրեական օրենսդրության կիրառման պրակտիկան՝ կապված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի հետ, կարող ենք նշել, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության խնդիրները խիստ արդիական են և կարևոր նշանակություն ունեն պետության անվտանգության ապահովման և սահմանադրական կարգի պահպանման համար: Պետության անվտանգության ապահովումն ու սահմանադրական կարգի պահպանումը անհերքելի պայման են պետության կայունության և հասարակության բնականոն զարգացման համար:

2. Ուսումնասիրելով քաղաքական սպանությանը դիմադրական՝ կարող ենք հստակ նշել, որ սպանությանը կանխարգելման կամ նվազեցման համար կարևոր նշանակություն ունի պետական, քաղաքական կամ հասարակական գործչի պաշտպանության հարցը: Պաշտպանություն ասելով անհրաժեշտ է հասկանալ և՛ անվտանգության ապահովումը և՛ քրեաիրավական պաշտպանությունը: Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի քրեաիրավական պաշտպանությանը կարող ենք համարել քաղաքական սպանությանը կանխարգելման հիմնական միջոց: Իսկ քրեաիրավական պաշտպանության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունի համապատասխան նորմի կատարելագործումն ու արդիականացումը: Նորմի կատարելագործման համար անհրաժեշտ պայման է բացերի լրացումն ու թերությանը վերացումը, իսկ արդիականացում ասելով, անհրաժեշտ է հասկանալ նորմի համապատասխանեցումը՝ արդի ժամանակաշրջանի իրավաիրադրություններին:



րու թյուր ներքին պահանջներին: Նշենք նաև, որ հասարակությունը զարգանում է պարբերաբար մարդու կամքից անկախ, հասարակության զարգացման հետ մեկ տեղ պետք է զարգանան անհրաժեշտ ներքին:

3. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն ամբ խախտվում է ժողովրդի ինքնիշխանությունը, այն է՝ իշխանության իրականացումը, հասարակության մեջ առաջացնելով դժգոհություններ և անվստահություններ իշխանության հանդեպ: Ինչպես նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կարող է հանդիսանալ քաղաքական մրցակիցներից ձերբազատման, ներքին և արտաքին քաղաքականության փոփոխման իշխանության զավթման, և քաղաքական սադրանքի միջոց: Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության կատարման ժամանակ հանցավորը ոտնձգում է, ոչ միայն սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության, այլ նաև մարդու կյանքի դեմ, որով էլ պայմանավորված է այս հանցագործության առավել մեծ հանրային վտանգավորությունը:

4. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության վտանգավորությունն աստիճանը կասկած չի հարուցում, որի կատարման հետևանքով կարող է լուրջ վնաս հասցվել ազգային շահերին և դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը այն դասում է առանձնապես ծանր հանցագործությունների թվին, և նախատեսում է առավել խիստ պատժատեսակներ, այն է՝ ազատազրկում տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկում: Ազգային շահասելով պետք է հասկանալ անձի, հասարակության, պետության պաշտպանվածության վիճակը ներքին և արտաքին սպառնալիքներից և բարեկեցիկ կյանքի ապահովումը, որը թույլ է տալիս ապահովել՝ անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, կյանքի որակը և տնտեսությունը, ժողովրդի ինքնիշխանությունը, զինված ուժերի պահպանումը պետության անվտանգությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը և տնտեսության բնականոն զարգացումը: Նշենք նաև, որ ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներից է՝ հանցավոր, կազմակերպված խմբերի և առանձին անձանց հանցավոր ոտնձգությունները՝ ուղղված Հայաստանի

Հանրապետության սահմանադրական կարգի տապալման և պետական իշխանության բարձրագույն մարմինների կանոնավոր գործունեության դեմ: Այդ սպառնալիքների թվին է դասվում նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը, ուղղված սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ:

5. Կատարելով պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի խորը և բազմակողմանի հետազոտություն, հանգում ենք այն եզրահանգմանը, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի հանցակազմի մեկնաբանության մեջ հստակ մեկնաբանված չէ, թե ինչ պետք է հասկանալ ասելով. «Պետական գործիչ», «Քաղաքական գործիչ», «Հասարակական գործիչ» հասկացությունները: Բացի դրանից դժվարություններ են առաջանում նաև «Պետական գործիչ» և «Իշխանության ներկայացուցիչ» հասկացությունների սահմանազատման ժամանակ, խոչընդոտ հանդիսանալով օրենքի միատեսակ ըմբռնման և կիրառման հարցում, որն էլ իր հերթին հանգեցնում է արարքի սխալ որակման: Նշենք նաև, որ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան քրեափրավական պաշտպանություն չի նախատեսում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի մերձավորների կյանքի և առողջության համար, առանց քրեափրավական պաշտպանության է մնում նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի առողջությունը:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարելով գործունեությանը դադարեցնելու նպատակը լիարժեք քրեափրավական պաշտպանություն չի ապահովում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի համար: Քանի որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կարող է կատարվել նաև քաղաքական կոնֆլիկտի հետևանքով առաջացած վրեժի շարժառիթով, կամ վրեժի շարժառիթից ելնելով նշված գործունեության իրականացման համար: Օրենսդրական թերությունների վերացման համար անհրաժեշտ ենք համարում հոդվածի դիսպոզիցիայում ավելացնել հետևյալ նախադասությունը՝ «կամ վրեժի շարժառիթից ելնելով այդպիսի գործունեության համար» և շարադրել հետևյալ կերպ՝ պետական,

քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը, որը կատարվել է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով կամ վրեժի շարժառիթից ելնելով այդպիսի գործունեության համար:

7.33 քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան քրեաիրավական պաշտպանությունից դուրս է թողնում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի մերձավորների կյանքը, որը կարելի է համարել հետազոտվող քրեաիրավական նորմի նշանակալի թերություն: Գործող քրեական օրենսդրությունը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ գտնվելով պետական պահպանության հսկողության ներքո, նրանց նկատմամբ ավելի հեշտ և ցավալի վրեժխնդրության միջոց կարող է հանդիսանալ մերձավորների սպանությունը: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ անհրաժեշտ ենք համարում հոդվածի դիսպոզիցիայում ավելացնել «կամ նրանց մերձավորների» նախադասությունը և հոդվածը ձևակերպել հետևյալ կերպ՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կամ նրա մերձավորի սպանությունը, որը կատարվել է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով կամ վրեժի շարժառիթից ելնելով այդպիսի գործունեության իրականացման համար:

8.33 քրեական օրենսգիրքը պատասխանատվություն չի նախատեսում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի, ինչպես նաև նրա մերձավորների առողջության դեմ ուղղված ոտնձգությունների համար, որը կարելի է համարել օրենսդրական լուրջ բացթողում: Անհրաժեշտ ենք համարում ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ բաժնի 28-րդ գլխում համապատասխան հանցակազմի ամրագրումը:

Նշված թերությունների վերացումն ու բացթողումների լրացումը՝ անհրաժեշտ պայման են պետական, քաղաքական կամ հասարակական գործչի քրեաիրավական պաշտպանության բարձրացման համար և անխուսափելիորեն կապված են պետության անվտանգության ապահովման և սահմանադրական կարգի պահպանման հետ:

9. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների կանխարգելման միջոցների համակարգի օպտիմալացման ինքնուրույն ուղղորդման որակով անհրաժեշտ է դիտարկել վիկտիմաբանական (զոհի գործունը) կանխարգելման

միջոցների ներդրումը պրակտիկայում: Ի տարբերություն հանցագործության «ավանդական» կանխարգելմանը, որը նպատակաուղղված է դրա ածանցյալներին և հանցագործի անձին, վիկտիմաբանական կանխարգելման անկյունաքարում տեղադրում է տուժողի նկատմամբ աշխատանք՝ կողմնորոշված վիկտիմ վարքագծի կասեցմանը (երբ դահնարավոր է) և դրա հետևանքների չեզոքացմանը, ինչը հիմք է հանդիսանում համարել վիկտիմաբանական կանխարգելումը քրեաբանության անվտանգության ապահովման ուղղություններից մեկը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

### ա) Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ նախագահի կարգադրությամբ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 2012թ. հունիսի 30, ՆԿ-96-Ա:
2. ՀՀ Սահմանադրությամբ (2015 թվականի փոփոխությամբ), Երևան, 2015:
3. ՀՀ Սահմանադրությամբ, 2005 թվականի (փոփոխությամբ):
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, ՀՀ ՊՏ N 22 (55), 21.09.98:
5. **ՀՀ** քրեական օրենսգրք. **ՀՀ** ՊՏ N 25 (260) 02.05.03:
6. ՀՀ օրենքը «Կուսակցությունների մասին» ՀՀ ՊՏ N 34(209), 15.08.02:
7. ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին» ՀՀ ՊՏ N37 (840), 17.06.11:
8. ՀՀ օրենքը հասարակական կազմակերպությունների մասին, ՀՀ ՊՏ N 42(174), 27.12.01:

### բ) Դատական արակտիկայի նյութեր

1. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշումը: Գործ՝ ԵԱԴԴ/0085/06/09:
2. ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. մարտի 30-ի որոշումը: Գործ՝ ՎԲ.-61/07:
3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 29-ի որոշումը: Գործ՝ ՀՅԲԴ-2/0086/01/08:
4. ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. Փետրվարի 1-ի որոշումը: Գործ ՎԲ.-03/08:

### գ) Մասնագիտական գրականություն

1. **Գրիգորյան Մ., Չիլի ֆուդարյան Մ.** Մարդու կյանքի քրեաիրավական պաշտպանությունը, Երևան, 2002, 284 էջ:
2. **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված

- սպանությունները, Երևան, 2003, 176 էջ:
3. **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2010, 410 էջ:
  4. **Այվազյան Ն.Ա.** Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2012, 736 էջ:
  5. **Հարությունյան Գ.Գ., Վաղարշյան Ա.Գ.,** Հայաստանի Հանրապետության Սահմանդրության մեկնաբանություններ, Ընդ. խմբ., Երևան, 2010, 1086 էջ:
  6. **Դանիելյան Գ.Բ.** Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք, Ընդ. խմբ., Երևան, 2012, էջ 704:
  7. **Ղազիսյան Գ.Ս.** Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան, 2008, 544 էջ:
  8. **Ղազիսյան Գ.Ս.** Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, Երևան, 2012, 1040 էջ:
  9. **Հարությունյան Մ.Ա.** Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Երևան, 2014, 648 էջ:
  10. **Պողոսյան Գ.Ա.** Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան, 2006, 376 էջ:
  11. **Սեդրակյան Ա.** Իրավունք և անվտանգություն, Երևան, 2015, 150 էջ:
  12. **Аветисян С.С.** Правовые основы обеспечения безопасности человека в условиях глобализации (уголовно-правовые, криминологическое, уголовно-исполнительные и уголовно-процессуальные аспекты). Ереван, 2010, 78 с.
  13. **Аветисян С.С.** Приоритеты и перспективы нового Уголовного кодекса Республики Армения (социально-правовая концепция). Ереван, 2012, 441 с.
  14. **Аветисян С.С.** Проблемы разграничения преступного от не преступного поведения (теория и практика уголовного-правового обеспечения безопасности человека). Ереван, 2011, 814 с.
  15. **Аветисян С.С.** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, 792 с.
  16. **Агузаров Т.К., Грачева Ю.В., Чучаев А.И.** Охрана власти в уголовном праве России. М., 2016, 128 с.
  17. **Бастрыкина А.И.** Актуальные проблемы теории государства и права. М., 2014, 471 с.

18. **Подройкина И.А.** Актуальные проблемы уголовного права. Отв. М., 2016, 560 с.
19. **Антонян Ю.М.** Терроризм, криминологическое и уголовное-правовое исследование.-М.: Изд-во “Щит-М”, 2014, 306 с.
20. **Асеев В.Г.** Мотивация поведения и формирования личности. –М., 2014, 274 с.
21. **Бабий Н.А.** Квалификация убийств при отягчающих обстоятельствах. М., 2016, 287 с.
22. **Белов А. С.** Безопасность жизнедеятельности. М., 2013. 216 С.
23. **Борзенков Г.Н.** Квалификация преступлений против жизни и здоровья: Учебн. прак. пособие. -М.ИКД. “Зерцало-М” 2014, 144 с.
24. **Волков Б.С.** Мотивы преступлений: (Уголовно-правовое и социально-психологическое исследование). - Казань. Казанск. Ун-т 1982, 152 с.
25. **Габузян А.А.** Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, 362 с.
26. **Гайдук Э.Г.** Терроризм в современном обществе (некоторые сведения о его структуре, основных видах и функциях) /Э.Г. Гайдук // Юрист. 2001, N 11, 7-10 с.
27. **Дагель П.С., Котов Д.П.** Субъективная сторона преступления и ее установление - Воронеж, Воронежск. Ун-т 1974, 243 с.
28. **Дагель П.С., Михеев Р.И.** Теоретические основы установления вины: учебн. пособие - Владивосток: Дальневосток. Гос. Ун-т 1975, 167 с.
29. **Желтов В.В.** Теория власти. М., 2008, 584 с.
30. **Иногамова-Хегай Л.В., Кабальник А.Г., Кленова Т.В., Коробеев А.И.** Актуальные проблемы уголовного права. Часть общая. М., 2016, 223 с.
31. **Багмета А.М.** Квалификация преступлений против личности. М., 2015, 487 с.
32. **Козлов А.П.** Понятие преступления. СПб., 2014, 819 с.
33. **Комиссаров В.С.,** Преступления, нарушающие общие правила безопасности: Понятие, система, общая характеристика. М., 1997, 214 с.
34. **Корнеева А.В.** Теория квалификации преступлений. Отв. ред. А.И. Рарог, М., 2015, 112 с.
35. **Костюк. М.Ф.** Проблемы борьбы с терроризмом и организованной преступностью (материалы научно-практической конференции) /Под общ. Рел. Л.В.Сердюка.-Уфа: УЮИ МВД РФ. 1999, 174 с.
36. **Красиков А.Н.** Ответственность за убийство по российскому уголовному праву - Саратов: изд-во Саратовск. Ун-та 1999, 124 с.
37. **Аванесова Г.А.** Криминология: М., 2015. 576 с.

38. **Кудрявцева В.Н. и Экимова В.Е.** Криминология: Учебник. М., 2014, 694 с.
39. **Кудрявцев В.Н.** Общая теория квалификации преступлений, М., 2001, 268 с.
40. **Кудрявцев В.Н.** Объективная сторона преступления. 1976, 246 с.
41. **Кузнецовой Н.Ф., Тяжковой И.М.** Курс уголовного права. Том 1. Общая часть, Учение о преступлении. М., 2002, 624 с.
42. **Кузнецовой Н.Ф., Тяжковой И.М.** Курс уголовного права. Том 2. Общая часть. Учение о наказании. М., 2002, 464 с.
43. **Борзенкова Г.Н., Комиссарова В.С.** Курс уголовного права. Том 3. Общая часть. М., 2002, 468 с.
44. **Борзенкова Г.Н., Комиссарова В.С.** Курс уголовного права. Том 4. Общая часть. М., 2002, 672 с.
45. **Борзенкова Г.Н., Комиссарова В.С.** Курс уголовного права. Том 5. Общая часть. М., 2002, 512 с.
46. **Лунеев В. В.** Криминология. М., 2014. 686 с.
47. **Лунеев В. В.** Мотивация преступного поведения. М., 1991. 276 с.
48. **Лунеев В. В.** Мотивация преступного поведения. М., 1991. 348 с.
49. **Малинин В.Б. Парфенов А.Ф.** Объективная сторона преступления - СПб Изд-во Юрид. инст-та 2004, 301 с.
50. **Маркова Т.Ю.** Убийство в связи с осуществлением лицом служебной деятельности или выполнением общественного долга: Дисс. ... канд. юрид. наук.: 12.00.08 /Маркова Т.Ю.; Масковск Гос. Юрид. Акад. -, М., 2003, 232 с.
51. **Неделин И.Г.** Посягательство на жизнь государственного или общественного деятеля (уголовно-правовые и криминологические аспекты). М., 2011, 352 с.
52. **Пионтковский А.А.** Советское уголовное право. Том 2. Особенная часть. М., 1928, 428 с.
53. **Пионтковский А.А., Меньшагин В.Д., Чхиковский В.М.** Курс, 811 с.
54. Преступность и социальная психология. М., 2014, 298 с.
55. **Ривман Д.В.** Криминальная виктимология. - СПб: Питер, 2014, 326 с.
56. **Рубцова А.С.** Актуальные проблемы уголовного права. М., 2016, 112 с.
57. **Савченко Л.А.** Основы конституционного строя РФ и их уголовно-правовая защита: Учебн. пособие. -Новосибирск: СибАГС, 2000, 216 с.
58. **Таганцев Н.С.** Уголовное Уложение с изложением рассуждений, на коих оно основано. СПб., 1910, 312 с.
59. **Трайнин А.** Учение о составе преступления. М., 1946, 184 с.



60. **Траинин А.Н.** Уголовное право, Часть особенная, Преступления против государства и социального порядка. М., 1927, 334 с.
61. Уголовная юстиция: проблемы международного сотрудничества. М., 1995, 296 с.
62. Уголовное право России: Т 2, Особенная часть, М., 1998, 808 с.
63. Уголовное право России: Части общая и особенная, учебник, Москва, 2014, 704 с.
64. **Круглоков Л.А.** Уголовное право России: Часть особенная. М., 2014, 642 с.
65. **Шаргородский М.Д.** Вина и наказание в советском уголовном праве. М., 1945, 55с.

#### **գ) Գիտական հոդվածներ**

1. **Գաբրիելյան ԱՅ.** Հայաստանի Հանրապետության և Արևմտահայաստանի վիճակի շուրջ (պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա) //ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու : Գլխ.խմբ. Գ.Ս. Ղազիսյան: Երևան, 2012, էջ 63-78:
2. **Մարգարյան ԱՌ.** Հանցավորության նկատմամբ վախը և վիկտիմիզացիան Հայաստանի Հանրապետության և Արևմտահայաստանի պետական համալսարանի, Իրավագիտության և թիվ 135, 2011, էջ 19-41:
3. **Абрамов В.А., Антонов Г.А.** Международный терроризм: проблемы правовой идентификации и глобальной стратегии борьбы // Закон и практика. 2004. № 2, с. 8-13.
4. **Васильев В.С.** Причины социальной детерминации преступности в российском обществе // Вестник МГУ. Сер. 18. Социология и политология. 2003. №3.
5. **Вермеш М.** Основные проблемы криминологии М., 2014. 416 с.
6. **Капинус Н.И., Малышкин Р.Н.** Насилие как социальный феномен // Право и жизнь. 2007. № 107.
7. **Мальцев В.** Уголовно-правовая охрана должностных лиц и граждан в связи со служебной или общественной деятельностью // Законность. 1996. №1.
8. **Пименова З.И.** К вопросу об исследовании мотивации убийств, совершенных по найму // Юридическая мысль. 2002. № 3. С. 74.

9. **Ривман Д.В.** Криминальная виктимология. - СПб: Питер, 2014, 514 с.
10. **Ситковский А.А.** Анализ криминальной виктимизации в Российской Федерации и мнения граждан о личной безопасности. Государственная система профилактики правонарушений: современное состояние и перспективы развития. //Материали межведомственной научно-практической федерации. М., 2007, с. 411-419.

#### **դ) Սեղմագրեր և ատենախոսություններ**

1. **Առաքելյան Ս.Վ.** Բռնություններ կատարվող հանցագործությունները Հայաստանի Հանրապետությունում: Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2014, 42 էջ:
2. **Գասպարյան Մ.Զ.** Սպանություն սահմանազատման հիմնախնդիրները տուժողին մահ պատճառելու հետ զուգորդված այլ հանցագործություններից: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2012, 28 էջ:
3. **Չոհրաբյան Ն.Յ.** Հանցագործությունների որակման և տարբերակման հիմնախնդիրներն ըստ սուբյեկտի հատկանիշների: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2009, 26 էջ:
4. **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները (տեսական և կիրառական վերլուծություն): Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2012, 58 էջ:
5. **Թումանյան Բ.Ռ.** Ահաբեկչության համար պատասխանատվության քրեաիրավական կարգավորումը. վիճակը, հիմնախնդիրները, միտումները: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2007, 27 էջ:
6. **Խաչատրյան Ա.Մ.** Հայաստանի Հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության մշակման հիմնախնդիրները: Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2012, 51 էջ:

7. **Հարու թյ ու նյ ան ԱԳ.** Ահաբեկչ ու թյ ան դեմ պայքարի սահմանադրարարական հիմունքները: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2005, 30 էջ:
8. **Հովսեփյ ան ԱԳ.** Դատախազական գործունեությունը և խուլ իգանություն դեմ պայքարի հիմնախնդիրները (պատմատեսական և քրեարարական վերլուծություն): Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2005, 47 էջ:
9. **Հունանյ ան Դ.Ռ.** Բռնություն իրավահամեմատական վերլուծությունը քրեական իրավունքում: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2011, 26 էջ:
10. **Ղամբարյ ան Ա.Ս.** Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համեմատական և մեթոդաբանական հիմնախնդիրներ): Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2012, 49 էջ:
11. **Մարկոսյ ան Մ.Մ.** Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2011, 30 էջ:
12. **Մնացականյ ան Տ.Ա.** Ահաբեկչություն վերաբերյալ քրեական գործերով քննության մեթոդիկան (ՀՀ ԱԱԾ նյութերով): Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2011, 30 էջ:
13. **Боброва Н.А.** Конституционный строй и конституционализм в России (проблемы методологии, теории, практики). Дис. ... док. юрид. наук. Самара, 2003, 330 с.
14. **Герасимов С. И.** Концептуальные основы и научно-практические проблемы предупреждения преступности, автореф. Дисс.... д-ра юрид наук. М., 2001. 376 с.
15. **Емельянов В.П.** Уголовная ответственность за терроризм и преступления с признаками терроризирования: дис. д-ра юрид. наук: 12.00.08/ Емельянов В.П. - М., 2001, 370 с.

16. **Маркова Т.Ю.** Убийство в связи с осуществлением лицом служебной деятельности или выполнением общественного долга: дис. канд. юрид. наук.:12.00.08/Маркова Т.Ю.; Московск. Гос. Юрид. Акад. - М. 2003, 232 с.
17. **Неделин И.Г.** Посягательство на жизнь государственного или общественного деятеля (уголовно-правовые и криминологические аспекты). М., 2011, 352 с.
18. **Седых А.В.** "Посягательство на жизнь государственного или общественного деятеля по уголовному праву Российской Федерации. Диссертация канд. юрид. наук. Казань, 2007, 203 с.
19. **Сухарев Е.А.** Ответственность за преступные посягательства на представителей власти и общественности. Дисс. ... канд. юрид. наук. Свердловск, 1964, 164 с.